Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4850

83
$-83

977 22/X/38

№ 6941
№ 6941

ԼՈՒԴՎԻԳ ՖՈՒԼԴԱ

ՀԵՐՈՍՏՐԱՏ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

ՀԻՆԳ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ

ԹԱՐԳՄ. ՌՈՒՍԵՐԷՆԻՑ
Տ. Վ.

ТИФЛИССКАГО СОБРАНІЯ БИБЛІОТЕКА

(Արտատպած «Լուսոյ» երկամսեայ Հանդէսից):

Թիֆլիս
Արտատպիչ Ա. Քուրթաթելաձէի, Նիկ. 21
1904

Սգ.
838-2
Ե-83
03 AUG 2005
10 NOV 2011

ԼՈՒԴՎԻԳ ՖՈՒԼԴԸ

ՀԵՐՈՍՏՐԱՏ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

ՀԻՆԳ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ

1002
Ե-438

ԹԱՐԳՄ. ՌՈՒՍԵՐԷՆԻՑ

Տ. Վ.

(Արտատպած «Լուսոյ» երկամեայ հանդէսից):

ԹԻՖԼԻՍ
Արագատիպ Ա. Քութաթելաձէի, Նիկ. 21.
1904

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI--1922
Имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

4850

Дозволено цензурою, Тифлисъ, 30-го Мая 1903 года.

ԼՈՒԴՎԻԳ ՖՈՒԼԴԱ

ՀԵՐՈՍՏՐԱՏ

Լուդվիգ Ֆուլդա (Fulda), գերմանացի յայտնի թատերագիր և բանաստեղծ, ծնուած 1862 թ. ուսումնասիրել է գերման լեզուները, գրականութիւն և փիլիսոփայութիւն Հայդելբերգի, Բերլինի և Լայպցիգի համալսարաններում։ Սկզբում, երբ ապրում էր Միւնխէնում, գտնուում էր Պոլ Հայզէի ազդեցութեան տակ։ Նորա հէնց առաջին թատերկը, մի գործողութեամբ, Die Aufrichtigen (Անկեղծները) գրուած 1883 թ. մեծ յաջողութիւն ունեցաւ։ 1886 թ. Բերլինում առանձին ուշադրութիւն գրաւեց Deutsches Theater-ում ներկայացնելով իւր մի գործողութեամբ Unter vier Augen.—Թատերկի յաջողութիւնն առիթ տուեց նշանաւոր դերասան Բարնային դրդել Ֆուլդային մի նոր թատերկ գրելու իւր նոր հիմնած «Բերլինի թատրոն»-ի համար։ Այդ նոր երկն էր Die Wilde Iagd (1888, Վայրի որս), որ անասելի յաջողութիւն ունեցաւ։ Այդ բոլոր երկերի մէջ Ֆուլդան անհատական կեանքի չրջանից դէնը չէր անցնում։ Վերջին երկում մի քանի ողբերգա-զաւեշտական տեսարանների մէջ պատկերացնում է մարդկանց՝ բաղդի յետևից ընկնելու անյաղ ձգտումը, որ սակայն իւր հերոսների համար միշտ վերջանում է անվերջ հիասթափութեամբ։ Բերլինում ծանօթանալով երիտասարդ գրողների չրջանի հետ, տարուում է հասարակական հարցերով և փորձեր է անում թատրոնական բեմ հանել հասարակութիւնը յուզող դասակարգութիւնների մաքառման պատկերներից զանազան տեսարաններ։ Das verlorene Pauradies (1890, Դրախտ կորուսեալ) նիւթն առնուած է բանուորական գործադուլներից, որի մէջ նկարագրուում է գործող անձինքների ողբերգական յարաբերութիւնները։ Աւելի պակաս յաջողութիւն ունե-

ցաւ 1891 թ. բեմ հանած Die Skeavin (Ստրկուհի), որի մէջ պատկերացնում է կնոջ դառն վիճակը։ Վերջին երկերի պատկերացրած չոր ու ցամաք իրականութիւնն առաւելապէս արդիւնք էր այն գրական շրջանի, որի մէջ էր և Ֆուլդան, քան բուն իւր սեփական տաղանդի, որ կատարելապէս փայլեց միայն իւր վերջին ողբերգական Talisman առակի մէջ, որ մեծ ոգևորութեամբ ընդունուեցաւ «Գերմանական-Թատրոնում» 1892 թ.։ «Թալիսմանի» նիւթը, համարեա, նոյն է, ինչ որ Անդերսէնի «Թագաւորի նոր հանդերձը»։ Ձնայելով նիւթի հէքիաթական բովանդակութեան, բայց և այնպէս բոլոր գործող անձնաւորութիւնները ներկայացրած են պարզ, որոշ գոյներով և չատ տիպական են։ Ֆուլդայի միւս երկերը, ինչպէս Die Kameraden (1894, Ընկերներ), Der Sohn des Chalifen (1897, Խալիֆի որդին), Թալիսմանի պէս ողբերգական նիւթ է, բայց Բերլինի հասարակութեան աւելի քիչ դուր եկաւ, քան Թալիսմանը, Iugendfreunde (1897 թ. Երիտասարդական բարեկամներ), Schlarafenland, նոյնպէս ողբերգական առակ և Herostrat պատմական բովանդակութեամբ մի ողբերգութիւն։— Ֆուլդան ունի նաև բազմաթիւ քնարերգութիւններ, որոնք աչքի են ընկնում զգացմունքի ջերմութեամբ և անկեղծութեամբ։ Ֆուլդայի երգիծաբանութիւնները և վերտառութիւնները (эпиграммы) աչքի են ընկնում նուրբ և կծու սրամտութեամբ։ Ֆուլդային քնարական երկերը հրատարակուած են Satura. Grillen und Schwänke (1884, Լայպց.) Neue jugend (1887), Sinngedichte (1888, Դրէզդ. Բ. հրատ. 1893 թ.), Gedichte (1890, Բերլին), Neue Gedichte (1900)։ Ֆուլդայի վէպիկները հրատարակուած են Lebensfragmente խորագրով (Բ. հրտ. 1896 Շտուտգարտ)։ Բացի դորանից Ֆուլդայի թարգմանութեամբ հրատարակուած են Մոլիէրի լաւագոյն երկերը (Բ. հրտ. 1895) և Ռոստանի «Ռոմանտիկներ» և «Սիրանո-դը-Բերժերակ» ողբերգութիւնները։— Կիւրշների Deutcshe Nationalliteratur-ի մէջ հրատարակել է Die Gegner den zweiten Schlesischen schule Երկրորդ չեզիական դպրոցի հակառակորդները (Շտուգ. 1783)։

ԴԻՐՔՕՈՂ ԱՆՁԻՆԵՐ

Հերոստրատ.	Դիոն	օտարական-
Տիմարիտա-նորա մայրը.	Մենիպպ	ներ.
Գեգեսիյ.	Զոյա	
Կլիտիա—նորա թոռը.	Լիսիլլա	
Մետրոդոր խորհրդի	Փէօնիդա	
Թրասոն անդամներ	Կալլիյ	քաղաքացիք
Նպէյտ—մեծ քրմապետ	Դիոկլ	
Պրակսիտել.	Զինուոր	

Նաւահանգստի պահապան.
Քրմեր եւ քրմուհիներ, ստրուկներ.
Ուխտաւորներ, Նաւաստիներ, Ժողովուրդ,
Զօրականներ։

Գործողութեան տեղը՝ Նփեսոս (Յունաստանում).
Ժամանակը՝ 356 թ. Ք. Ծ. Ա.

Ա. ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Բաց հրապարակ Եփեսոսում։ Ցեռևի մասը, համարեա ամբողջապէս բռնում է Արտեմիսի տաճարի ~~ամբողջ~~ ճակատը. նորա պղնձակերտ դռների առաջ գտնւում է լայն մարմարիոնէ սանդուղքներ. սանդուղքի երկու կողմը մի-մի ձողաջահ։ Տաճարի յետևի մասում երևում է ժայռոտ լեռներ։ Աւելի հեռու յետևի մասում երևում է նաւահանգստի մի մասը՝ խարիսխ ձգած նաւերով։ Աջ կողմը համեստ, ցածլիկ մի տնակ, շրջապատուած անտառակով. տնակի առաջ մի նստարան։ Աջ կողմը, բոլորովին առաջին տեսարանի վրայ երևում է փոքրիկ ապառաժուտ բարձրավանդակ, վրան փորուած ոտնատեղերով որոնք գեղդրների (կուլիս) յետևը կորչող կածանի սկիզբն են ցոյց տալիս։ Ձախ կողմը, առաջի մասում, բաւական դուրս ընկած՝ երևում է Մետրոտորի տունը, երկու դռնով, մէկը ճակատի կողմից, ուղղուած հանդիսականներին, միւսը կողմնակի։ Մի քիչ հեռու, ձախ կողմը Գեգեսիի տունը, որ բաժանուած է Մետրոտորի տնից փողոցով, բաց սրահակով (*portique*), որ ծառայում է երբեմն վաճառանոց. սրահակի ներսի պատերից կախկխուած է բրոնզեայ վահաններ, զէնք և ուրիշ գեղարուեստական իրեղէններ։

ՏԵՍԱՐԱՆ I.

Արևածագ է։ Տաճարի սանդուղքների վրայ նստոտած է ժողովուրդը. նոցանից ոմանք աղօթում են։ Տաճարից լսւում են երաժշտութեան մեղմ ձայներ։ Նաւահանգստում նաւասաները շղթաներով ամրացնում են նաւը և բեռը դուրս տալիս. երևում է նաւի մի մասը միայն։

ՀԵՐՈՍՏՐԱՏՈՍ (նստած է անշարժ, աջ կողմը գտնուող տնակի առաջ եղած քարէ նստարանի վրայ, մէջքը հանդիսականներին, խորասուզուած՝ տաճարը դիտելով։ Քիչ յետոյ երևում է օտարերկրացիների խումբը, որի մէջ են ԴԻՕՆ և ՄԵՆԻՊՊՈՍ։ (Ցետոյ) ԳԵԳԵՍԻՑ։

ՀՈՂՈՎՈՒՐԴԸ.—(Խմբովին, հանդիսաւոր կերպով)։

Ո՜վ, մայր կենաց, սուրբ Արտեմիս,
Լուսաթաթախ ապարանքում
Թագաւորող հզօր, ահեղ,
Մեծ դիցուհի, արծաթփրփուր
Ծովով պատած Ցունաստանի
Եւ գեղեցիկ, զուարթ Յոնիոյ
Քաջաբազուկ որդիներից
Երգուած Դշխոյ, զաւակներդ
Ա՛ռ. ապահով քո յարկի տակ
Եւ սրտազեղ, առատ աչով
Օրհնէ նոցա։

(Դիոնը, Մենիպպը և միւս օտարականները, ճանապարհի զգեստով, մտնում են նաւահանգստի կողմից և կանգնում են ապշած ու շլացած տաճարի տեսքով)։

ԴԻՈՆ. Երկար ուղու նպատակ կէտին
Հասանք արդէն։ Բարեկամներ,
Լաւ դիտեցէք։ Արշալոյսի
Ծիրանազգեստ շողերի մէջ
Մեծ դիցուհու յաւէժ, անանց
Փառաց տաճարն, հազար-հազար
Ազգ ու լեզուից փառաբանած
Մեհեանն՝ ահա, դիմաց կանգնած։
Տարտարոսի աստուածներին
Փառք, գոհութիւն մենք առաքենք,
Որ մեր կեանքին նոր թոյլ տուին
Եւ վեհութիւնն աչքով տեսանք։

ՄԵՆԻՊՊ. Գերերջանիկ, չքնաղ քաղաք,
Փառքիդ շողերն ողջ աշխարհն է
Ողողել, լցրել։

ԳԵԳԵՍԻՑ. (Դուրս գալով իւր տնից, խօսում է՝ երեսը յետ դարձրած)։

Է՜յ, անպիտան
Ծոյլ սարուկներ, դէհ, շուտ արէք,
Ժիր շարժուեցէք։ Չէք տեսնում, որ
Նաւերն ահա՜ շարան-շարան,
Մրցման ելած, առաջ-կտրուկ
Նաւահանգիստ են շտապում,
Առատ, անթիւ ուխտաւորներ
Քաղաք բերում, որոնց զեղուն
Կըրօնական ջերմ զգացում
Պիտի լայն-լայն բանայ նոցա
Քրսակների բերանները։
Այստեղ եկէք, հետներդ առէք,
Այստեղ բերէք աստուածուհու

Մաքուր կաւից, փայլուն պղնձից
Հրաշակերտած արձանիկներն։

(Հետևեալ խօսակցութեան ժամանակ սարուկները սրահակն են բերում Եփեսոսի Արտեմիսի արձանիկները, տաճարի փոքրիկ յարանմանութիւնները և այլն և շարում են վաճառքի հանելու համար։—
Դիոնն ու Մինիպպը բաժանուելով միւսներից, առաջ են գալիս։ Գեգեսին բարևում է նոցա)։

Ա՜, ողջոյն ձեզ, օտար երկրից
Մեզ հիւր եկած բարեկամներ։
Գրազ կըգամ, թէ առաջին
Անգամը չէ՛, որ Եփեսի
Հողի վերայ ոտք էք դնում։

ԴԻՈՆ. Ճիշտ այդպէս է, ծերուկ յարգի։

ԳԵԳԵՍԻՑ Ո՞ր աշխարհի ծնունդ էք դուք։

ԴԻՈՆ Սիցիլիայի լի դաշտերն են
Մեզ սնուցել, իսկ Սիրակուզն
Մեզ իւր որդի՝ քաղաքացիք
Է ճանաչել։

ԳԵԳԵՍԻՑ Շատ էլ մօտ չէր,
Հերմէս վկայ, այն ճանապարհն,
Որ կտրեցիք, անցաք եկաք։
Բայց աւելի լաւ ժամանակ
Ընտրել երբէք չէիք կարող։
Հաղիւ, ահա, նոր է սկսուած
Աստուածուհուն ձօնած ամիսն։
Արամազդից մեզ պարգևած
Ամեն մի օրն՝ իրեն յատուկ
Ակնապարար հանդէսն ունի,—
Մարզանք թէ վազք՝ կառքով, ոտով
Երգ ու պարեր՝ խենթ, յամրաքայլ,
Խնճոյք ու խինդ՝ ամեն օր կայ։
Նոյն իսկ այսօր դուք կը տեսնէք
Տաճարի մէջ մատաղ կուսից
Վառ ըղձերի շքեղ հանդէս։

ԴԻՈՆ (Դառնալով դէպի տաճարը)
Ասա՛, խնդրեմ, ինչով արդեօք
Ցաւերժացրեց շընորհապարտ

Հայրենիքը՝ կէս-աստծուն։

ԳԵԳԵՍԻՑ Որի՞ մասին ես հարցընում։

ԴԻՈՆ Այս տաճարը կերտող, կանգնող
Մեծ վարպետի՝ Պայոնիայի։

ԳԵԳԵՍԻՑ Հէնց իմ հաւս է, հօրս պապը.
Հայրս դեռ շատ լաւ յիշում էր
Մեծ ծերունի արուեստագէտին։

ՄԵՆԻՊՊ Ազնիւ ցեղի շառաւիղ ես։

ԳԵԳԵՍԻՑ Մեծ նախահօրս բոլոր սրտով
Շնորհապարտ եմ. աշխատանքի
Ծանր ու դժուար բեռն ու հոգսը
Իւր ուսերի վերայ տարաւ,
Իսկ ինձ թողեց փառք ու մուտքի,
Եկամուտի անհատ այս գանձ։
Կարող կլինէր, քաղաքն արդեօք,
Սորանից էլ մեծ յարգ ցոյց տալ
Արուեստագէտի յիշատակին,
Քան արտօնել նորա զարմին
Սրբավայրի փակվալ լինել,
Վաճառք հանել նորա անդրին՝
Իւր իսկ գաւթում։

ՄԵՆԻՊՊ (Ցոյց տալով յետևի, խորքի կողմը)։
Ինչո՞ւ, ասա,
Տաճարի ծանր, պղնձակերտ
Դռներն՝ երկփեղկ, լայն բացուեցան։

ԳԵԳԵՍԻՑ Ասել է թէ, զոհաբերքի
Ծէսերն, արդէն, աւարտեցին.
Եւ Եփեսի պայծառ զարմը
Դիցանոյշի շնչով սրբուած
Սուրբ թափորի գլուխն անցած
Մեզ է դիմում։

(Թափորը դուրս գալով տաճարից, առաջ է գնում դէպի աջ, յետոյ նորից սանդուղքներն ելնելով մտնում է տաճարը։ Առջևից գնում են փողհարներ, որոնք երբեմն երբեմն հնչեցնում են հանդիսական փողերը և շեփորները, քարոզները՝ ձեռքերին բռնած դայիսոններ. Եպեյսը յետևից քրմեր և քրմուհիներ. քաղաքի աւագները, որոնց մէջ երևում է Մեարոգորը. յետոյ երիտասարդներ, կոյ-

սեր, որոնց մէջ և Կլիտիան։ Ժողովուրդը բեմի խորքում, յարդանքով տեղի է տալիս Թափորին և երբ Թափորը հեռանում է, նորա յետևից իրար հրելով տաճար են թափւում)։

ԳԵԳԵՍԻՑ (Բացատրում է փողերի հնչումը դադարելու ըստ վիճակներին

Տեսէք, ահա։
Քայլերն ուղիղ աստուածուհու
Դէպ սրբազան անտառ դարձան։
Խոնարհ ու հեշ ամբոխի տէր
Մեծ քրմապետն՝ քարոզների [1])
Անվերջ շարքին անմիջապէս
Հետևում է վեհ քայլուածքով։
Մեծարելի ծերերն ամեն
Զուտ տօնական պերճ հագուստով։
Նոցանից յետ՝ կրնկակոխ
Զոյգ-զոյգ, կարգով, շարան-շարան
Երիտասարդ, պատանիներն
Եւ ամօթխած չքնաղ կոյսերն։
Օ՜, բազմաթիւ սիրող սրտեր
Ամուսնութեան սուրբ կապերով
Կըմիանան Արտեմիսի
Եւ ժամերի զոյգ օրհնութեամբ։

ՄԵՆԻՊՊ (Նկատելով Կլեոային)
Ասա, դու մեզ, ծերուկ բարի,
Չքնաղ, սիրուն այս աղջիկը
Ճանաչում ես, որի հպարտ
Կեցուածքն ու դիրքն ամենքին է
Հըրապուրում։ Երջանիկ է
Ով որ նորան իւր օջախը
Կառաջնորդէ՝ իւր թևն առած։

ԳԵԳԵՍԻՑ Թոռնուհիս է ձեր ասածը,
Իսկ անունը՝ Կլիտիա. միթէ
Չտեսաք ինչպէս ուրախ ժպտով
Խմբի միջից այս կողմ նայեց։

ՄԵՆԻՊՊ (Կրկնում է կիսաձայն)։
Կլիտիա՛, հա՛...

[1]) Մունետիկ.

ԳԵԳԵՍԻՑ Ամբոխն արդէն
Տաճար մտնել է աշխատում։

ԴԻՈՆ Մնաք բարև։ Մենք էլ կ'երթանք։

ԳԵԳԵՍԻՑ (Կանգնեցնելով նոցա)։
Երկար ինքս էլ ձեզ չեմ պահիլ։
Միայն, խնդրեմ, թեթևակի
Մի աչք ածէք և դիտեցէք
Եփեսոսի Արտեմիսի
Արձանիկներն։ Վաղուց արդէն
Հռչակ ունին անդրիքս ամեն։

ՄԵՆԻՊՊ (Ցած ձայնով Դիոնին)
Հիմա մեզնից ձեռք չի քաշիլ։

ԳԵԳԵՍԻՑ (Սրահակից բերելով մի արձան և ցոյց տալով)։
Տեսէք, որքան ճարտարութեամբ
Արուեստագէտն՝ այն հինաւուրց
Հսկայ արձանն կարող ձեռքով
Մեծ հմտութեամբ, յար և նման
Կաւից կերտել, դուրս է բերել,
Լիքը կրծքով, դաժան դէմքով։
Արծաթափայլ լուսնի շրջան
Գլխի չորս դին չքնաղատես
Բակ է կազմել։ Իսկ շուրջն ամեն
Պար են բռնել մեղուների
Բոյլ անհամար, եզան գլուխ,
Սֆինքս անխօս և կարճառիւծ
Քանդակուած է շուրջը բոլոր։
Միայն ճարտար մի վարպետ է,
Որ ստեղծել գիտէ տիպարն։
(Ցոյց տալով Հերոստրատին)։
Ահա այնտեղ, մենաւորիկ
Անշարժ նստած՝ կարծես ինքն էլ
Կաւից թափած, ձուլուած լինի։
Իրար երբէք չենք հասկանում,—
Դժուար գործ է գլուխ ելնել
Միչտ նորա հետ։ Ինքահաւան
Եւ ինքնասած, յամառ մարդ է.
Երազների աշխարհ միայն
Ցագուրդ կտայ նորա տենչին։

Գործարանիս համար անգին
Գանձ է խպառ։ Իւր կոյր մօր հետ
Ապրում է նա այն տնակում,
Որ քաղաքը ընծայ բերեց
Երբ մարտի մէջ հայրը մեռաւ։
—Ձաչակներիդ յարմար չէ՞ մի,
Էժան գնով կը զիջանեմ։

ՏԵՍԱՐԱՆ II

ԱՌԱՋԻՆՆԵՐԸ ԵՒ ԿԼԻՏԻԱ։

ԿԼԻՏԻԱ (Առաջ վազելով մտնում է աջ կողմից և յետ նայելով՝ խօսում է),
Ո՛չ. ո՛չ, երբէք, հեռու ինձնից.
Անհնար է, էլ դուք ինձ ձեր
Ձիրանների մէջ չէք տեսնիլ։
(Շտապով վազելով կածանով, դառնալով Գեգեսիպին).
Ա՜խ, օգնիր ինձ, անուշ պապիկս։
ԳԵԳԵՍԻՑ Ի՞նչ պատահեց քեզ, զաւակս։
ԿԼԻՏԻԱ Այլ ես նոքա չեն երևում։
ԳԵԳԵՍԻՑ Ո՞ւմ մասին է։
ԿԼԻՏԻԱ Մէկէջ տեսնեմ
Ցանկարծակի սինլիքորներն
Ցարձակուեցան ծածուկ վրաս,
Երդում-կրակ ուտելով, թէ
Էլ չեմ իշխիլ ողջ տարի էլ
Զդձգելով նոցա խաբել։
Թէ յիրաւի փեսայ ընտրելն
Ազատ կամքի է միշտ թողած,
Բայց և այնպէս, պնդում էին,
Ցամառելուս պիտի վերջ տամ...
ԳԵԳԵՍԻՑ (Պահելով Դիոնին և Մենիպպին).
Մի քիչ կեցէք, բարեկամներ...
ԴԻՈՆ Մենք դեռ էլի քեզ մօտ կը գանք։
ԳԵԳԵՍԻՑ Կեցէք, մի քիչ...

ՄԵՆԻՊՊ (Տանելով Դիոնին).
Արի՛, երթանք,
Այդ Կլիտիային անփորձ նայելն
Դժուար գործ է,—տուն, տեղ ու կին
Մի հայեացքով մոռցնել կտայ։
(Գնում են դեպի տաճարը)։

ՏԵՍԱՐԱՆ III

ԳԵԳԵՍԻՑ ԵՒ ԿԼԻՏԻԱ

ԿԼԻՏԻԱ (Շարունակելով)։
Ես նոցանից հազիւ պրծայ...
ԳԵԳԵՍԻՑ (Նեղանալով)։
Ձեռքից փախցրիր գտած որսերս,
Թոյլ չտուիր, որ ծախէի...
ԿԼԻՏԻԱ (Գլխից առնելով պսակը)։
Առ փոխարէնն իմ թարմ պսակս.
Թող ծաղիկներն ու թոռնուհիդ
Մխիթարեն ծերուկ սիրտդ։
ԳԵԳԵՍԻՑ Երես առած, սիրուն թոռնուկս,
Ինչո՞ւ վարդը մրտենու հետ
Ձես կամենում փոխել անհետ։
ԿԼԻՏԻԱ Մեր դիցանոյշն վարդն է սիրում։
(Առնում է նորա ձեռքից արձանիկը և դառնալով՝ վերջնես)։
Ճչմարիտ չէ՞, ասա դու ինձ
Ո՛վ Արտեմիս. հօ բարկութիւնդ
Ձը չարժեցի՞։ Դու կոյսերիս՝
Թևարկողն ես։ Լոկ անարատ,
Մաքուր կոյսը քո հովանին
Վայելելու արժանի է։
Նախանձաւոր սիրով նոցա
Պահպանում ես դու յաւիտեան,
Առատութեան ոսկեղջիւրից
Մաքուր, անմեղ ուրախութեան
Լի պարգևներ չընայելով։
Երբէք, երբէք աղջիկներիդ
Փայփայելով, ով մեր սուրբ մայր,

Բիրտ ու կոպիտ տրդամարդու
Գիրկ չես ձգիլ, որ ուրախ է
Նոցա մի կերպ քեզնից խլել։
Թէև չատ ենք, բայց ամենքըս
Էլ հաւասար վայելում ենք
Խնամք ու սէրդ։ Իսկ, տես, պապս
Իւր մէկուճար թոռնուհուն իսկ
Պատրաստ է տալ հէնց առաջին
Պատահածին։—Պատժէր սորան։

ԳԵԳԵՍԻՑ Առանց այն էլ պատժել է ինձ՝
Որսերս ձեռիցըս խլելով։
Ժամանակ է տուն երթալու.
Թէ չէ, գիտես, դեռ աւելի
Վընասների կը հանդիպիմ։
Ծոյլ ամբոխ է չորս բոլորըս.
Երկու աչք էլ դեռ ուրիշից
Պէտք է առնել։

(Ձայն է տալիս Հերոստրատին)։

Է՜յ, Հերոստրատ,
Դէ՜հ, չուտ արա, գործի կըպիր։
Հը՞, չես լսում։

ԿԼԻՏԻԱ Թող տուր նորան։
Գիտես, որ նա լոկ մի ժամում
Շատ աւելի գործ կը չինէ,
Քան ուրիշը մի ամբողջ օր։

ԳԵԳԵՍԻՑ Է՜, զզուելի, անպէտք մարդ է։

(Երկուսն էլ տուն են գնում)։

ՏԵՍԱՐԱՆ IV

ՀԵՐՈՍՏՐԱՏ ԵՒ ՏԻՄԱՐԻՏԱ

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Իւր կաշկանդուած դրութիւնից մի քիչ սթափուելով)։
Կանչում էր ինձ, արդեօք, մէկը։

ՏԻՄԱՐԻՏԱ (Երեսլով տան շէմքին)։
Հերոստրատ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Այդ պո՞ւ էիր,
Ինձ կանչողը, մայր իմ։

ՏԻՄԱՐԻՏԱ Այո՛,
Առաջնորդիր, որդիս, առաջ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Արի։

(Տանելով դէպի նստարանը)։

ՏԻՄԱՐԻՏԱ (Նստելով)։
Տանը ես քեզ երկար
Որոնեցի։ Երբ դու կանուխ
Մահճից ելնում, դուրս ես գնում,
Ո՞վ ինձ արդեօք, կասէ՝ լուսցաւ,
Թէ դեռ խաւար գիշեր է մութ։
Քո «բարի-լոյսն» արև, լուսին
Է ինձ համար։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Վաղուց արդէն
Լուսացել է։

ՏԻՄԱՐԻՏԱ Աղօթուորի
Ձայնից միայն այդ իմացայ։
Ինչու այդպէս հանդէսներից
Հեռու քաշուել՝ մընացել ես։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Աստուածուհուն օրհներգ էի
Ես մեն-մենակ կարդում, գովում.
Նոցա ժրխոր, աղմկալի
Հանդէսները ես չեմ սիրում։

ՏԻՄԱՐԻՏԱ Քուն ու հանդէս՝ քեզ համար չեն։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Ես ի՞նչ անեմ, փախչողն ինքն է։

ՏԻՄԱՐԻՏԱ Անգին զաւակս, ի՞նչ, կարծում ես,
Թէ լուսթեամբ կարող կլինիս
Սրտիդ ցաւերն ինձնից ծածկել։
Կոյր աչքերիս աւելի չուտ
Մատչելի են որդուս սրտի
Ցաւեր լռիկ, խոցերն անհուն,
Քան արևի չողեր փայլուն՝
Քո աչքերիդ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Ինչու ուրեմն
Հարձ ու փորձով տանջում ես ինձ։
Գիտես բոլորն։

(Ցանկարծական եռանդով)։

Օ՜, թէ հեռու,

Հեռու լինել այս տեղերից
Կարենայի։ Էլ չեմ կարող,
Ծնող մայր իմ, տեսնել, տանել,
Որ իմ առաջ փայլէ այս վեհ
Տաճարն, իսկ ես նորա դիմաց
Իբրև անպէտք, ոչնչութիւն
Կանգնած մնամ անփառունակ
Շուքի նման և կեանք անցնեմ
Անմահութեան հետ կողքէ կողք.
Եւ կամ անյայտ, դատարկ ու սին
Բանդագուշանք, տեսիլ դառնամ...

ՏԻՄԱՐԻՏԱ Ինչու ես քեզ դու զրպարտում
Իզուր տեղը։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Տարիները
Գլորուում են իսկ ես ահա...

ՏԻՄԱՐԻՏԱ Օ՜, դու քեզնում գաղտնի ոյժեր
Ունիս պահած՝ արևելքի
Հըմայական բոյսի նըման,
Որ դեռ երկար ձիգ տարիներ
Ամուլ ու չոր մնալուց յետ էլ
Ցանկարծ գիտէ ծաղկիլ, փըթթիլ
Փարթամ, չքեղ ծաղիկներով։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Եւ կոկոնի մէջ չատերը
Խամրում, թոչնում են ծաղկելուց
Դեռ չատ առաջ։ Ցիչում ես դու
Այն օրերը։ Երբ դեռ մանուկ
Քո զգեստի փեչից բռնած
Մանրիկ քայլով յետևիցդ
Թափառական շրջում էի,—
Երբ հօրս մահուան բօթն ստացար,
Որ մեր այս վեհ սրբավայրը
Պաշտպանելիս՝ հոգին տուեց,
Անվախ, կուրծքը պարսիկների
Նետերի դէմ քաջ դէմ տալով։

ՏԻՄԱՐԻՏԱ Մթթէ աչքերս չկուրացան
Հէնց այդ օրուայ դառն յիշատակ
Արցունքներից։

1002
6438

ՀԵՐՈՍՏՐԱՏ Տաճարի մօտ
Ինձ բերեցիր, արտասուաթոր,
Կրծքիդ սեղմած, բէկ-բէկ ձայնով
Դու ասացիր.—Անուշ զաւակս,
Փառքի հասիր, արժանաւոր
Զաւակ դարձիր արի հօրդ,
Որ գոռ մարտի դաշտում պատուով
Արիւն թափեց։ Տես, անպատճառ
Նորան հասնես։—Ողջակիզի
Սուրբ սեղանի առաջ չոքած
Աղօթք արի.—Մայր դիցանոյշ,
Փառք եմ խնդրում, փառք թող լինի
Բաժինս միայն այս աշխարհում։

ՏԻՄԱՐԻՏԱ Արդարադատ է դիցուհին.
Սրտի խորքից, ջերմին բղխած
Աղօթքներին ունկընդիր է.
Կոյր պառաւիս աղօթքներով
Մխիթարանք մեզ կուղարկէ
Հօրդ կորուստը կը մեղմէ՝
Քեզ փառք տալով, որի յոյսը
Կեանքիս թելը դեռ կը ձգէ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Ոգևորուած)
Դու դեռ կապրես և կը լսես.
Ողջ ժողովուրդն իմ գործերիս
Փառքն ու գովքը կանէ, կանէ։

ՏԻՄԱՐԻՏԱ Գիտեմ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Եւ խոր, չատ խոր հետքեր
Պիտի թողնեն նոցա մտքի
Ցիշողութեան և սրտի մէջ։

ՏԻՄԱՐԻՏԱ Նամանաւանդ՝ մէկի սրտում։
Ցաճախ անքուն, երկար գիշերն
Երբ փրկարար քունն աչքերիցս
Փախչում, գնում հեռանում է,
Քո շրթունքներդ իմ ականջիս
Շշնչում են միշտ մի անուն,—
Կրքոտ, յուզուած...

ՀԵՐՈՍՏՐԱՏ Օ՜, մի խօսիր,
Լռիր, լռիր...

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՊԵՏԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Ս.Հ.Հ. Центральная Библиотека
7/XI--1922
ԵՐԵՎԱՆ, Մասնաճյուղ
Ա. ՍՅԱՍՆԻ ԱՆՎԱՆ

ՏԵՍԱՐԱՆ V

ԱՌԱՋԻՆՆԵՐԸ ԵՒ ԿԼԻՏԻԱ

ԿԼԻՏԻԱ (Դուրս է գալիս Գեգեսկի անից և խօսում է՝ երեսը յետ դարձրած)։
Իսկոյն, իսկոյն
Կուղարկեմ նրան, անուշ պապիկս։

ՏԻՄԱՐԻՏԱ (Ականջ դնելով)։
Այդ խօսողը Կլիտիան չէ՞ր։
Արշալոյսի ճռուող, կարծես,
Լինի ձայնը։ Եթէ նա էլ
Ձայն ունենար, անշուշտ այդպէս
Պիտի խօսէր։

ԿԼԻՏԻԱ (Թեթևակի շառագունելով)։
Խոնարհ ողջոյնս,
Մեծարելի Տիմարիտա։
Այս ծոյլ, դանդաղ մարդուն մի քիչ
Եկայ եռանդ, փոյթ ներշնչեմ...

ՀԵՐՈՍՏՐԱՏ Որ էլ նորից կեանք մաչեցնեմ՝
Վեհն անկերպարան փոքրի՞ դարձնեմ։

ԿԼԻՏԻԱ Փոքրի մէջ էլ վեհ ես դու միշտ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Իսկ վեհի մէջ՝ փոքը ու չնչին.

ՏԻՄԱՐԻՏԱ Օ՜, Կլիտիա-ջան, կասկածանքի
Մռայլ ամպը փչէ, հեռնայ
Նորա ճակտից. դա քեզ համար
Խաղ ու պար է։ Արժէ միայն
Պայծառ օրուայ նման աչերդ,
Հայեացքդ նետես նորա վերայ։
(Անհասատ քայլերով իւր տնակն է դառնում)։

ՏԵՍԱՐԱՆ VI

ՀԵՐՈՍՏՐԱՏ ԵՒ ԿԼԻՏԻԱ

ԿԼԻՏԻԱ (Մի քիչ լռելուց յետոյ)։
Ուրեմն, կերթաս, աշխատելու։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Ո՛չ, ո՛չ. երբէք. չեմ կամենում։

ԿԼԻՏԻԱ Ծերուկն այնպէս գնահատում է
Քո աշխատանքդ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Մի՞թէ. իրա՞ւ։
Քանի՞ դրախմ։ Անշուշտ, արդէն
Հաշուել է նա։

ԿԼԻՏԻԱ Ցանդիմանել
Նորա համար, որ իւր օգուտն
Է փնտռում, արժէ՞ միթէ։
Չէ՞ որ դրանով է պահպանում
Մեզ թէ իրեն։

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Ցանկարծ բռնելով նորա ձեռքից)։
Մի լաւ նայիր։
Այս վեհ տաճարն, այս հրաշալիքն
Նորա և քո մեծ նախահօր
Ձեռքի գործն է։ Մի՞թէ պապդ
Շնչել, ապրել, ոսկի դիզել
Դեռ կարող է։ Այս հսկայի
Շուաքն անգամ կարող չեղաւ
Նորա աչքից լոյս արևի
Վառ շողերը վարագուրել,
Այդ շողերից զրկել նորան։
Անմահ մարդու երկաթի պէս
Ծանր քայլերն նա չէ լսում.
Չի էլ զգում, որ իւր թափի
Եւ ծանրութեան ներքև ճմլում
Տրորում է այդ քայլերը
Փուչ սերնդի ամբողջ ցեղը։

ԿԼԻՏԻԱ Բայց, Հերոստրատ, դորա փոխան
Մենք չնչում ենք, ցօղաթաթախ
Օդ ենք ծծում, մեզ հրճուանք
Է պարգևում լոյս արևի
Պայծառ շողերն, և զեփիւռի
Անոյշ համբոյրն և թարմ ծփանք
Հանգիստ ծովի։ Երբէ՞ք, երբէ՞ք,
Ի՞նձ հաւատա, մեծ Պայոնին
Չեմ նախանձել,—նա մեռած է,
Իսկ ես՝ կենդան։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Սխալւում ես։

Նա է կենդան, իսկ մենք՝ մեռած։
Ինչով արդեօք կարող կլինենք
Մեր խեղճ կեանքի նըպատակը
Արդարացնել։ Մեծ չեն ծնել
Մեզ մեր մայրերն։ Անանց, յաւերժ
Մի յուշարձան չունինք թողած։
Եւ մենք կանցնենք, անհետ կկորչենք
Որպէս թէ կեանք իսկ չենք ունեցել։
Ահա ինչու մեծ հաճոյքով
Կեանքիս վերջին օրերն անգամ
Որպէս խղճուկ, չնչին մի որդ՝
Զոհ բերելուց չէի քաշուիլ,
Միայն մի օր, մի օր միայն
Զգալ, ապրել հնար տային,
Ինչպէս քո մեծ նախահայրդ
Ե՛ւ ապրել է, եւ զգացել,
Երբ ամպերի մէջ ծրարուող
Այս տաճարի կամարակապ
Բանլիք-քարը *) դրեց իրրև
Անմահութեան իւր յուշարձան։

ԿԼԻՏԻԱ Մի՞թէ այդչափ չնչին ու քիչ
Արժէք ունի անդիական,
Մատաղ կեանքը և քեզ համար,
Խելակորոյս։ Հոգիների
Աշխարհն իջիր. Հոմերոսին,
Պայիոնիային ու Ֆիդիասին
Դու հարցրու,—յօժարութեամբ
Չե՞ն տայ արդեօք մեռեալների
Ամբողջ փառքը, միայն նորից
Կեանք առնէին, երիտասարդ՝
Թարմ ոյժերով անտառ, պուրակ
Ցափչըփէին, թարմ-նորփթիթ
Ծաղիկներով զուգած-պճնած
Բաժակները մէկ էլ նորից
Ձեռք առնէին և ջերմ բազկով
Սիրուն ուհի մի գրկէին։

---

*) Замковый камень, La clé de voûte, *պորտաքար*։

Նոցա ձեռքի կերտուածքն անգամ
Պարզ ասում են, որ թէ աշխարհ,
Թէ կեանք, թէ խինդ, ջահելութիւն
Սիրում, պաշտում էին նոքա
Նոյն վառ սիրով, ինչպէս՝ ինքս։
Օ՜, թէ իրաւունք, ոյժ բաշխէին
Ինձ աշխարհս, կեանքն ու խինդը
Ջահելութեան հետ միասին
Մի հնարքով՝ արծաթ թելից
Հիւսած ամուր ուռկանի մէջ
Զգել յանկարծ և պինդ փակել,
Այն ժամանակ, ես գիտէի...

ՀԵՐՈՍՏՐԱՏ Ա՜, երջանիկ,
Անհոգ հոգի։

ԿԼԻՏԻԱ Նախանձո՞ւմ ես
Եւ այն բանին, ինչ քեզ համար
Մատչելի է, եթէ ցանկա՞ս։

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Դառնութեամբ)։
Եթէ ցանկամ, ասում ես դու։

ԿԼԻՏԻԱ Ա՜խ, Հերոստրատ, թէ մօրդ, թէ քեզ
Միայն բարիք եմ կամենում։
Դիտե՞ս որչափ ծանր ու ցաւ էր
Հէնց ինձ համար, երբ հանդիսին
Դու թոյլ տուիր, որ ուրիշը
Մօտս կանգնէ։ Մի՞թէ նոքա
Քեզնից լաւ են,—թէև մի քիչ,
Փի՛չ ջահել են,—ինչի՞ր չասես
Որ ինձ չարին, էլ ինչ խաղեր
Գլխիս, ասես, որ չբերին,
Մինչև որ էլ համբերելու
Ճար չմնաց և ես փախայ.
Իսկ դու այստեղ...

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Դառնացած ձայնով)։
Հանգիստ թող ինձ։
Խղճա Կլիտիա, հանգիստ տուր ինձ.

ԿԼԻՏԻԱ Է՜, չատ բարի, ես գնում եմ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Չէ՛, չէ՛, մնա՛։

ԿԼԻՏԻԱ Շուտով ահա

Կը բոլորի հանդէսների
Ամիսն և մենք ամբողջ տարի
Համբերութեամբ պիտ՝ սպասենք
Նորա դանդաղ գլորուելուն,
Մինչև նորից նոր հանդէսներ
Սահմանելու օրը հասնի։
Ինչու՞, ասա, մեր ծէսերը
Արհամարհում, անգոսնում ես՝
Երբ հէնց նորա հոգնք են մեզ
Հրաւէր կարդում։ Ուրախ պարից,
Վայելք, խաղից խուսափում ես,
Կարծես նոքա քո ոխերիմ
Եւ հինաւուրց թշնամիդ են։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Թշնամիս են։

ԿԼԻՏԻԱ Նոցա համը
Դու չես առել, անծանօթ ես։

ՏԵՍԱՐԱՆ VII

ԱՌԱՋԻՆՆԵՐԸ ԵՒ ԳԵԳԵՍԻՑ

ԳԵԳԵՍԻՑ (Դուրս գալով իւր տնից)։
Ի՞նչ եղաւ նա. չէ՞ խոստացար
Շուտ ուղարկել, հը՞, զաւակս։

ԿԼԻՏԻԱ Դեռ այստեղ է, իմ պապի-ջան...

ԳԵԳԵՍԻՑ Հերմես վկայ, ես էլ գիտեմ,
Որ այդտեղ է. ես էլ այդ եմ
Հէնց հարցնում՝ ինչու՞ այդտեղ
Եւ ո՞չ այնտեղ, գործի կոչած։
(Դառնալով Հերոստրատին)։
Ծո՛յլ անօրէն, չէ՞ որ ես քեզ
Ժամանակին եմ վարձ տալիս։
Եւ այն էլ ինչ սոսկալի վարձ,
Ո՞վ, աստուածներ։ Թէ՞ կարծում ես,
Որ աչխարհումս հատդ էլ չկայ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Նոյն իսկ այսօր, խնդրեմ, գտնես,
Տեղս կանչես։ Դու կանխեցիր
Արտայայտել իմ սեփհական

Ցանկութիւնս. ինքդ ասացիր
Վերջին խօսքը։

ԳԵԳԵՍԻՑ Մի համբերիր,
Մի՛ տաքանար, բարեկամս,
Սիրով կը ներեմ և այս անգամ
Թէ կը զղջաս անկեղծ, սրտանց...

ՀԵՐՈՍՏՐԱՏ Այո՛, չատ խիստ, խիստ զղջում եմ։
Մարդ մտածի՛, թէ ինչպիսի
Գործի վերայ եմ ջանք թափում
Տարիներով։

ԳԵԳԵՍԻՑ (Կլիտային)։
Մի ասա՛ ինձ,
Գժուա՞ել է սա, թէ ի՞նչ եղաւ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Մնաս-բարև։

ԳԵԳԵՍԻՑ Դեռ սպասիր,
Մի համբերիր, խենթ աստուծոյ։
Ինքս կը տամ նոյնչափ վարձ, գին,
Որչափ ուրիշն է խոստանում։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Պարսկաստանի ճոխ ու անթիւ
Հարստութեան հետ չեմ փոխիլ
Աղատ, անկախ անդրէգործի
Խեղճ վիճակը...

ԳԵԳԵՍԻՑ Մի քիչ կամաց։
Մեարօդորն է գալիս այստեղ։
(Մեարօդորն ու Եւպկյոը զրաղուած են խօսակցութեամբ, որ քիչ առաջ դուրս էին եկել Հերոստրատի տնակից՝ յետևի դռնից։ Մեարօդորը բաժանուելով Եւպկյոից, որ մտնում է տաճարը, գիմում է Գեգեսիին)։

ՏԵՍԱՐԱՆ VIII

(Դիմաւորելով նորան)։

ԳԵԳԵՍԻՑ Խոնարհ ողջոյն, արժանաւոր
Խորհրդական։

ՄԵՏՐՕԴՈՐ (Թեթևակի գլուխ տալով Կլիտային և Հերոստրատին)։
Ողջոյն և ձեզ։
Օր ցերեկով քեզ, Գեգեսիս,
Որոնելով հոգիս ելաւ։

ԳԵԳԵՍԻՑ Փառք և հաճոյք է ինձ համար։

(Դառնալով ցած ձայնով Հերոստրատին)։

Խելքի արի։

(Մեսրոգորին)։

Պատրաստ եմ ձեզ

Ծառայելու։ Ի՞նչ կամենաք։

ՄԵՍՐՈԳՈՐ Բանն էլ այն է, որ ես՝ այսօր,

Խորհրդատուս քեզնից խորհուրդ,

Դաս առնելու եմ չտապում։

ԳԵԳԵՍԻՑ Լսում եմ ձեզ։

ՄԵՍՐՈԳՈՐ Այս բոպէիս

Մեծ քրմապետն տարօրինակ,

Ցուզիչ մի լուր ինձ հաղորդեց։

Երբ տաճարի սպասուհիքն

Արտեմիսի անդրին այսօր

Իւր սրբազան հանդերձներով

Պճնում էին, յանկարծ տեսան

Դէմքի վերայ սարսափելի

Մի մեծ ճեղքուած։

ԳԵԳԵՍԻՑ Է՞, ինչ զարմանք,

Փթած փայտը հնութիւնից

Ըսկսում է փչրտուել։

ՄԵՍՐՈԳՈՐ Բայց մի՛ մոռնար, որ ողջ Եփեսն

Սրբի տեղ է պաշտում նորան։

Պարտաւոր ենք ժողովրդի

Ցոյզ ու խռովն հանգստացնել,

Երբ երկիւղած՝ ահ ու դողով

Սկսէ դատել նա այն մասին,

Թէ դիցուհին այս նշանով

Ի՞նչ է ուզում կամ պահանջում։

ԳԵԳԵՍԻՑ Դրանից էլ հեշտ բան կա՛յ միթէ։

ՄԵՍՐՈԳՈՐ Կարծում ես դու...

ԳԵԳԵՍԻՑ Ի՞նչ է ուզում

Ժողովրդից իւր դիցուհին,—

Եթէ հարցնէ ժողովուրդը,

Խօսիր նոցա, հասկացրու՝

Մեծ դիցուհին կամենում է

Դէմքի վնասն ուղղուի շուտով

Ճարտարարուեստ մի նուրբ ձեռքով։

ՄԵՍՐՈԳՈՐ Մեզ խօսք կը տաս նորից չինել

Ճեղքուած մասը արժանապէս,

Որ նախկինից ամենևին

Մազ իսկ անգամ պակաս չլինի։

ԳԵԳԵՍԻՑ Եւ շատ շուտով։

(Ցոյց տալով Հերոստրատին)։

Առաջդ կանգնածն

Ճարտար, հմուտ անդրէգործ է։

Եփեսոսը քանդես, փնտռես,

Ոչ ոք այնպէս նուրբ, ճաշակով

Տուած պատուէրդ չի կատարիլ

Ինչպէս որ սա։

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Սկզբում հազիւ ուշադրութիւն էր դարձնում խօսակցութեանն, իսկ յետոյ հետևում է հեռզհետէ աւելացող հետաքրքրութեամբ)։

Տես, որ հաշուիդ

Մէջ չսխալուես։ Երկրորդ անգամ

Կը թողնէի և կերթայի

Ես քո մօտից, որպէս զի ես

Առ յաւիտեանս մերժէի

Այդ պատուէրը։

ԳԵԳԵՍԻՑ Ի՞նչ ասացիր։

Էլ սորանից մեծ, փառաւոր

Նպատակ գտնել՝ դու չես կարող։

Մեր ամենքիս փառք ու պարծանք

Աստուածուհու անդրին ուղղել

Դու չես ուզում։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Ո՛չ. ոչ և ոչ։

Թիւր մեկնութիւն էք կամենում

Աստուածային տալ նշանին։

Աստուածուհու կամքը պարզ է,

Արտեմիսը չէ կամենում

Համակ ոսկու, մարմարիոնի

Ճոխ բանուածքով իւր տան միջին,

Որպէս աղքատ ողորմելի

Ցնցոտու մէջ փաթթուած մի կին

Դարձած լինել, կէս—նորոգած

Դիմագծերով, որ ծանակի
Նիւթ չդառնայ այն քաղաքն էլ,
Որտեղ ինքը դարեր հետէ
Թագաւորել և իշխել է։

ՄԵՏՐՈԴՈՐ (Ծպտալով)։

Այժմ ինձ համար էլ չատ պարզ է
Եւ քո միտքը։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Արտայայտողն

Ես ինքս չեմ։ Դիցանոյշի
Ցանկութիւնը՝ փթած փայտի
Ճեղքուելով իշխանաբար
Ձեր երեսին պարզ ասուած է.
Բարձր ձայնով նա գոչում է,—
Վեհ տաճարին և վեհ արձան
Վայել միայն արժանի է.
Արձան, անդրի, որ աչխարհիս
Մահկանացուն դեռ չէ տեսել։

ՄԵՏՐՈԴՈՐ Եթէ այդպէս՝ ապա ուրեմն
Իւր տաճարի խոր անկիւնում
Ոլիմպոսի աստուածների
Հին, մաշմչուկ անդրիների
Շարքում պահեն թող իրենն էլ՝
Առ ժամանակ։ Այժմ պարզ է։
Երկրպագու աղօթուորի
Ապչած աչքերն ողջակիզի
Սուրբ սեղանի վերայ հիմա
Կանգնած կը տեսնեն մի նոր արձան
Համակ ոսկուց, փղոսկրերից,
Զուտ ոսկու մէջ պլլուած-պճնած։

ԳԵԳԵՍԻՊ (Մետրոդորին՝ անբաւական ձայնով)։

Բայց բարեկամ, մեկնում ենք մենք
Խիստ կամացի՝ մէկս այսպէս,
Իսկ միւսն այնպէս, դեռ չտեսած
Նոյն իսկ անդրուն հասած վնասն։
Եկէք մէկ տեղ ամենքս երթանք
Տաճարի մէջ աչքով տեսնենք։
Պատրաստ եմ ես երդուել անվախ

Թէ քրմապետ Եւպէյտն, անշուշտ,
Ուռցրել է մեծ մասն ինքը։

ՄԵՏՐՈԴՈՐ Առաջ անցիր։ Ես էլ կը դամ։
(Դեգեսին գնում է տաճար)։

ՄԵՏՐՈԴՈՐ (Հերոստրատին)։

Քո առաջարկն, անշուշտ, հարուստ
Մտքերի ծով պիտ երևայ
Ծերակոյտի աչքի առաջ։
Վաղուց արդէն ես ինձ ու ինձ
Որոճացել, չափելկշռել,
Մտքիս մէջը տուն եմ տուել
Այդքան յանդուգն մի գաղափար։
Դու լոկ միայն ձևակերպիր՝
Մարմին-արիւն դարձրու նորան.
Նոր արձանիդ նախագիծը
Ինձ տուր չուտով։ Շատ լաւ գիտես,
Որ Խորհրդի մէջն մի անդամ
Կը հետևի իմ ասածիս,
Ինչպէս խոնարհ ոչխարի հօտն
Իրենց հովուի ազդող ձայնին։
(Ցոյց տալով իւր բնակարանը)։
Ահա տունը։ Վաղն առաւօտ
Ինձ մօտ արի։ Խորհուրդ կանենք,
Չափենք, կշռենք... իսկ անունդդ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Դեռ չատ վաղ է ինձ այդ մասին
Հարցեր տալդ։ Անունս միայն
Այն ժամանակ կասեմ, երբ որ
Հաւատացած կլինեմ արդէն
Թէ քո մտքից այլ ես երբէք
Նա չի ելնիլ։

ՄԵՏՐՈԴՈՐ Մնաս բարև։
Ց'տեսութիւն մինչ առաւօտ։
(Գնում է տաճար)։

ՏԵՍԱՐԱՆ IX

ՀԵՐՈՍՏՐԱՏ ԵՒ ԿԼԻՏԻԱ

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Ձեռները երկինք բարձրացնելով)։
Ո՜վ, դու անմահ աստուածուհի,
Շնորհապարտ եմ քո առաջ.
Աղօթքս հասաւ սուրբ գահոյքիդ։

ԿԼԻՏԻԱ Պապիս մասին միշտ յիշելով
Քեզնից պէտք է շատ նեղանամ,
Բայց տեսնում ես, որ հէնց հիմա
Ուրախանում եմ ես քեզ հետ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Օ՜, վերջապէս, հասաւ, Կլիտիա,
Այժմ սրտիս ժամ ցանկալի.
Ինչ որ մանուկ, երազական
Շրջանիս մէջ ձգտում էի
Եւ հառաչում անուրջներիս,
Վառ ըղձերի բուռն հասակում, —
Ստեղծագործող՝ հոգի տուող
Ձեռքի համար մի բարձրագոյն,
Վեհ նպատակ, — այժմ առաջս
Մարմին առած, կանգնած է նա
Եւ խոստանում, հրապուրում է
Փառքի պարգև իմ ճակատիս
Պինդ դրոշմել ց՝յաւիտեան։

ԿԼԻՏԻԱ Մեզ խեղճերիս՝ անյայտ, չնչին
Էակներիս կը մոռանաս,
Ի՞նչ խօսք դորան։ Զէ՞ որ ամենքս,
Առհասարակ, չուրջդ բոլոր
Կենդան դիակ ենք քեզ համար։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Քեզ մոռանա՞լ։ Կլիտիա և քե՞զ։
Ա՜խ, մի լսիր, ականջ դիր ինձ։
Այժմ միայն կը յանդգնիմ
Սիրտս բանալ, խոստովանել
Ինչի մասին նոյն իսկ այսօր
Շրթունքներս կրծում էի,
Արիւն-լուիկ դարձնում նոցա,
Որ չլինի՝ յանկարծ բացուին

Եւ գաղտնիքս աշխարհ հանեն.
Քեզ, քեզ միայն կուզեմ փառքից,
Որ ինձ չնորհէ։ Դու—յաղթութեանս
Ճաքեղ պսակ։

ԿԼԻՏԻԱ Եւ կարծում ես,
Ցնորքների, երազների
Աշխարհի մէջ թափառական,
Դու երազողդ, թէ կանացի
Սիրտն էլ՝ քարից կռած-կոփած
Սրտի նման ընկած կշռի
Թաթի վերայ, սպասում է
Թէ ե՞րբ արդեօք ձեր գործերը
Եւ ձեր հուչակ նըժարի թևն
Իրենց քաշով պիտի թեքին
Դէպի ներքև և ապա թէ
Արժանանաք դուք էլ նորան։
Եթէ այդպէս էք երազում՝
Ապա վա՛յ ձեզ։ Մեծ-մեծ գործեր,
Փառքի տենչանք է սահմանուած
Լոկ՝ ձեզ համար։ Իսկ մեր սէրը—
Երբ էլ լինի, ձեռք կը բերէք։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Այո՛, վա՛յ մեզ, երբ ձեր սէրը
Մեզ բաշխելով դշխոյաբար
Ստիպում էք ոտքից ց՝գլուխ
Կարմիր պուտի պէս կարմրել։
Եւ դու, ասա՛, կարո՞ղ էիր
Սիրել՝ առանց յարգ զգալու։

ԿԼԻՏԻԱ Ես չգիտեմ։ Թւում է ինձ,
Եւ շատ անգամ, որ ես անչուշտ
Կը յարգէի միմիայն նորան
Որին սրտով կը սիրէի։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Ահա ես էլ պահանջում եմ
Քեզնից մէկտեղ եւ յարգ եւ սէր։
Ինձ էլ այժմ թւում է թէ՝
Ձեզ զլանայ չնորհել նոցա։

ԿԼԻՏԻԱ Դեռ ոչ ոքի չեմ պատահել,
Որ ինձ համար քեզնից աւել
Անոյշ լինի և սիրելի։

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Զարում է նորա առաջ և գրկում նորա ծնկները)։
Ա՜խ, իմ Կլիտիա։
ԿԼԻՏԻԱ (Շոյելով նորա ճակատը)։
Դէ, չուտ արա,
Ուրախացիր բաց ճակատով։
Մենք միասին այժմ իսկ կերթանք
Երիտասարդ ու կոյսերի
Հանդէսներին մասնակցելու։
Կուզե՞ս երթանք։
ՀԵՐՈՍՏՐԱՏ (Ցանկարծ ոտքի ելնելով)։
Ստեղծել, ստեղծել
Եմ կամենում։
ԿԼԻՏԻԱ (Հիասթափուած)։
Եւ չե՞ս ուզում
Նոյն իսկ ըսպէ զուարճանալ։
ՀԵՐՈՍՏՐԱՏ Գործի մէջն է երջանկութիւնս։
Գիշեր ցերեկ պիտի խորհեմ,
Ձափեմ, կշռեմ, ստեղծագործեմ
Հետն էլ անոյշ երգներով
Ես երգեմ եւ քո մասին։
Եւ երբ պատրաստ բոլորովին
Անդրուց կընկնի հանդիսապէս
Ծածկող քողը, այն փառաւոր
Պայծառ օրը աստուածային
Քո ոտքերի տակ կը փռեմ
Անմահութեանս գանձեր ամեն՝
Եւ դու կրկին ինձ յետ կը տաս
Փառքիս գանձեր,—սիրոյդ անշէջ
Բոցի միջից անցած, զտած՝
Ոսկու չիթեր վրան ցօղած։
(Դէպի աջ գնալով, կանչում է)։
Մայրիկ, մայր իմ։
ԿԼԻՏԻԱ Ահա թէ ով
Հրճուանք կզգայ։ Մայրդ միայն։
ՀԵՐՈՍՏՐԱՏ (Սիրագեղ դառնում է Կլիտիային)։
Կը գա՞ս ինձ հետ։ Երթանք մէկտեղ։
ԿԼԻՏԻԱ (Սառն կերպով)։
Դու նախ գնա, գործդ աւարտիր։

(ՎԱՐԱԳՈՅՐՆ ԻՋՆՈՒՄ Է)։

Բ. ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Ա. Գործողութեան տեսարանը։

ՏԵՍԱՐԱՆ I.

ՏԻՄԱՐԻՏԱ ԵՒ ԿԼԻՏԻԱ։

ՏԻՄԱՐԻՏԱ (Նստած քարէ նստարանի վրայ ճախարակ է մանում, ձախ ձեռքով մալաչը բռնած, որով և թելն է ոլորում, իսկ աջով պտտում է ճախարակի շուռուփկը)։
ԿԼԻՏԻԱ (Դուրս գալով Գեղեսկի տնից, նկատում է նորան)։
Ամբողջ օրը մի՞թէ հանգիստ
Զունիս գործից, Տիմարի՛տա։
Կուզես մի քիչ օգնեմ ես քեզ։
Իլիկ մանել նոյնչափ յաջող
Կարող եմ ես, որչափ ճախարակ
Պտտել արագ. կամ թէ կուզե՞ս
Զեռքիս փաթթեմ ոստիդ մանածն
Առաջդ կանգնեմ, կծիկ անես,
Վիլա դարձնես։
ՏԻՄԱՐԻՏԱ Զէ՛, չեմ ուզում.
Շնորհակալ եմ, սիրուն աղջիկս։
Քո և որդուս համար օժիտ
Պատրաստելու անուշ հոգսը
Թող, մեն-մենակ ես կատարեմ։
ԿԼԻՏԻԱ (Մօտենալով նորան)։
Դեռ ժամանակ շատ կունենաս։
(Մօտը՝ քարէ նստարանի վրայ նստելով)։
Բայց սիրո՞ւմ է, արդեօք, նա ինձ.
ՏԻՄԱՐԻՏԱ (Շարունակելով մանել)։
Եւ կարող ես, դեռ հարց տալ, հա՛։

ԿԼԻՏԻԱ Ա՜խ, կարծում ես, թէ չմա գիտեմ։
Գիտեմ միայն՝ օրերը, շաբաթ
Պիտի անցնի մինչև նորան
Տեսնելու ճար, հնար գտնեմ,—
Այդ ժամանակ անգամ այնքան
Ցրուած, թարթափուն է լինում,
Այնքան չտապ, վրայ տալով
Է բան ասում, նոյն իսկ երբեմն
Խօսքը կիսատ թողնում—անցնում,
Որ կարծես թէ նոր է զարթնել
Խոր, խոր քնից։ Աչքերն յառած
Նայում է ինձ, բայց թէ մտքով
Որտե՞ղ ասես չէ թափառում...

ՏԻՄԱՐԻՏԱ Ճիշդ հէնց այդպէս և ինձ հետ է։
Գործը միայն...

ԿԼԻՏԻԱ Գործը միայն...
Իւր գործն, այո։ Եւ դեռ այսօր
Պահանջում էր, որ ես սիրեմ,
Սիրեմ միայն իւր իսկ գործը։
Բայց, ասա ինձ, դեռ չ'աւարտած
Եւ անկենդան գործը սիրել
Հնչտ է միթէ։ Թագցրնում է
Եւ ինձանից։ Թող թագցնէ։

ՏԻՄԱՐԻՏԱ (Մանելը թողնելով)։
Երբ կաւարտէ յաջող կերպով
Դու կը տեսնես։ Ա՜խ, երանի
Քո աչքերին, որ հիացած,
Ապշած պիտի հրճուին նորա
Գործի տեսքով։ Ես չեմ կարող։

ԿԼԻՏԻԱ Հա՛, սպասել, միշտ սպասել.—
Զինուած հանգիստ ու անխռով
Համբերութեամբ։

ՏԻՄԱՐԻՏԱ (Նորից մանել սկսելով)։
Անուշ զաւակս,
Քո հասակում հանգիստ, անխռով
Սպասելուց էլ հնչտ բան կայ։

ԿԼԻՏԻԱ Իմ ցանկութիւնս, իղձս է եղել,—
Միշտ անթառամ, մատաղ մնալ։

ՏԻՄԱՐԻՏԱ Ա՜խ, յաւիտեանս մատաղ նա է,
Ով որ գիտէ կանուխ մեռնել,
Որի երիտասարդութեան
Թարմ ծաղիկներն առաւօտեան
Արշալոյսի ցօղ-արցունքով
Ցօղուած-թրջուած, դեռ ծաղկում են,
Դեռ չեն թոչնել մարդկանց սրտում,
Այն ինչ Պարկեան անսիրտ քոյրերն
Անքուն աչքով կեանքի թելը
Հա մանում են ու մանում։

ԿԼԻՏԻԱ (Զգաստուած)։
Ո՛չ, ծերանալ չեմ կամենում։

ՏԻՄԱՐԻՏԱ Բնութիւնը յետ է դարձնում
Երիտասարդ անցած օրերն
Մեզ զաւակներ պարգևելով.
Իսկ մեր կորցրած զգլխէչ ժպիտն՝
Թոռնիկների նազ տիպարով։

ԿԼԻՏԻԱ Ա՜խ, չգիտեմ, անուշ մայրիկ,
Ինձ ինչ եղաւ այս քանի օրս։
Մէկ ուզում եմ փրփուր գետի
Ցորձանք լինել ու ծով դիմել,
Մէկ էլ տեսար՝ նիզակ առած
Սարերն ընկնել, վախկոտ երէ՝
Քոչ-այծերի հետևելու
Բուռն զգացումն է ինձ տիրում։
Մէկէլ յանկարծ այդ բոլորին
Տեղի տուէց յաւերժհարսի,
Լեռնանոյշի մեծ խմբի հետ
Ուրախ, անհոգ պար բռնելու
Բուռն տենչանք. կամ թէ այրուող
Վառ այտերով առաջ-կտրուկ
Վազ տալ նոցա բոլորի հետ,—
Վազել-կտրել դաշտեր, պուրակ,
Ոտքի տակ տալ լեռներ, ձորակ։

ՏԻՄԱՐԻՏԱ Է՜, զաւակս, դեռ չգիտես

Ի՞նչ ասել է Սիրոյ ոյժ, թափ։
Բայց կհասնի և քո ժամը,—
Զարաճճին, երևում է,
Զեռք է առել, ծաղրում է քեզ։
Լեռան վայրի պուրակներից
Թպրտացող, բաբախ սրտով՝
Ամբողջապէս կրակ կտրած
Գլխապատառ տուն կը դառնաս։
Վազելուց չէ, որ դու այնպէս
Կրակ ու բոց կտրած կլինիս,—
Ո՛չ. դա սիրոյ և ցանկութեան
Թէժ հրդեհն է կիզում արիւնդ.
Խոպոպներով ծանրաբեռնուած
Քո գանգրահեր այրուող գլուխդ
Տեղ կը գտնէ քեզ պատկանող
Սիրածդ մարդու կրծքի վերայ.
Շրթունքներով նորա շրթներն
Որոնելու ջանքեր կանես,
Եւ երբ անուշ քուն կը պատէ
Նորա աչերն, արթուն, անթարթ
Աչքով նորա չնչառութեան
Հեղ պահապան քեզ կդարձնես.
Ե՛ւ կը փարես, Ա՛ւ քնքշանք
Զեղուն, առատ, սիրող սրտով
Ուժեղ թափով կձօնես, կտաս։—

ԿԼԻՏԻԱ (Մտորմունքով)։
Դու կարծում ես...

ՏԵՍԱՐԱՆ II

ԳԵԳԵՍԻՑ (Դուրս է գալիս իւր տնից. նկատելով Կլիտիային)
Հէնց այդպէս էլ, կարծում էի,
Արամազդի անուն վկայ։
(Կանչում է)։
Կլի՛տիա։

ԿԼԻՏԻԱ Ի՞նչ է, սիրած պապիկս։

ԳԵԳԵՍԻՑ (Կլիտիային)։
Խօսքերս, ասա, ոչ մի արժէք

Զունի՞ն աչքումդ։ Չէ՞ ասացի,
Հրամայեցի, թողնել անշուշտ
Անմիտ գորով, համակրութիւնդ։

ՏԻՄԱՐԻՏԱ (Հպարտութեամբ)։
Ե՛ս չեմ կանչել նորան ինձ մօտ։

ԿԼԻՏԻԱ Ազատ ծնուած, ազատ սնուած
Մեծցած եմ ես։ Ցանկութեանդ՝
Խոնարհ, հլու հպատակ եմ,
Բայց հրամանիդ,—ամենևին։

ԳԵԳԵՍԻՑ Երախտամոռ, դու ապերախտ։
Խղճուկ, անտէր, որբուկ էիր՝
Քեզ պահեցի, մեծացրի.
Թէ հայր կասես՝ հայր եմ եղել,
Թէ մայր կուզես՝ մայր եմ եղել
Ես քեզ համար, իսկ դու այսօր
Թշնամուս հետ սէր ես կապում։

ՏԻՄԱՐԻՏԱ Քեզ թշնամի ինձ չեմ հաշուում։

ԳԵԳԵՍԻՑ Հապա ինչու՞ չը դարձրիր
Նորից ինձ մօտ անխիղճ որդուդ,
Երբ որ երկու ամիս առաջ
Թողեց, յանկարծ, գնաց-կորաւ։

ՏԻՄԱՐԻՏԱ Նա էլ նոյնպէս ազատ-արձակ
Ծնուել, սնուել ու կրթուել է։
Իսկ միւս կողմից՝ երեխայ չէ։

ԳԵԳԵՍԻՑ Է՞, անմիտ մայր։ Ձլինի՞ կարծես
Շատ մեծ կարիք ունիմ նորան,
Ե՞ս—մի չնչին նորելուկի,
Որի համար իմ գործարանս
Արդէն շատ նեղ տեղ է թւում,
Եւ որ իրեն երազում է
Շատ մեծ հանճար։ Զարմանալի՞,
Ծիծաղ բան է։ Գնանք, զաւակս,
Թող քո անմիտ համակրութիւնդ։
(Գնում է դէպի ձախ)։

ԿԼԻՏԻԱ (Շտապով Տիմարիտային)։
Ասա, նորան, որ սովոր չեմ

Ծածկած ու փակ դռան ճեղքից,
Ինչպէս խղճուկ, աղքատ մուրիկ,
Գութ սպասել։ Չէ՞ որ անդարձ,
Անդարձ է գնում, երիտասարդ
Մատաղ օրերն։ Ես ուզում եմ
Սիրել, սիրուիլ։ Կամենում եմ
Ցաղթել, ընկճել եւ փառք, պարծանք,
Ե՛ւ ստեղծող ոգի, հանճար,
Ե՛ւ թէ՝ նոյն իսկ աստուածուհուն։

(Դեղեսկի յեռեից տուն է շտապում)։

ՏԵՍԱՐԱՆ, III

ՏԻՄԱՐԻՏԱ, ՀԵՐՈՍՏՐԱՏ յետոյ ԺՈՂՈՎՈՒՐԴ.

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Հէնց որ Կլիտիան հեռանում է, դուրս է գալիս իւր տնակից)։
Ապսպարանքն ինքս անձամբ
Իմ ականջովը լսեցի։

ՏԻՄԱՐԻՏԱ Այն ժամանակ պէտք է անձամբ
Նորան բռնել, պատասխան տալ։
Դէ՛, չտապիր։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Օ՜, թէ բոպէ
Կարող լինէի գրկիս մէջը
Սեղմել նորան, ջերմ համբուրով
Ծածկել շրթերն, պատասխան տալ,
Զքնաղ լանջի վերայ մոռնալ
Գլուխս այրող, ստեղծագործող
Տանջող մտքերս։

ՏԻՄԱՐԻՏԱ Բայց դու նորան
Արած գործդ տար և ցոյց տուր։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Ցոյց տամ նորան, ինչ որ դեռ ես
Գլխիս մէջն է լոկ սաւառնում։

ՏԻՄԱՐԻՏԱ Գլխիդ, մտքիդ մէջն է միայն։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Այո։

ՏԻՄԱՐԻՏԱ Ինը երկար շաբաթ
Դու չարունակ չէիր ծեփում։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Այս, ինը երկար շաբաթ

Ես չարունակ, ամեն գիշեր
Ոչնչացնում ու փշրում եմ
Ինչ որ ցերեկն ստեղծում եմ։

ՏԻՄԱՐԻՏԱ Ինչո՞ւ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Ինչո՞ւ։ Որովհետև
Ծանր ձեռքս աղաւաղել
Միայն գիտէ իմ ցնորքս,
Դիտումներս։ Դէմք եմ ստեղծում՝
Ամենևին աստուածուհու
Դէմքի շնորհք չունի վերան։
Չէ՛, դա չէ իմ աստուածուհին,
Նա որ դարեր, անյիշատակ
Ժամանակից վառ աստղերին
Իւր իսկ փայլով զուգել պէնել։
Զարդարել է, որ դեռ այսօր
Ե՛ւ իշխում է, եւ դատում։
Դու, անհնազանդ, վատարի ձեռք,
Կամքիս ձայնը միայն լսիր,
Կեանք ու մարմին տուր ցնորքիս,
Որին յղացող մայրն է՝ միտքս,—
Այդ բեղմնաւոր մտքիս համար
Համբաւատար, քարոզ դարձիր։

ՏԻՄԱՐԻՏԱ Միջոցներից մէկը միայն
Դեռ չես փորձել։ Թող մի ուրիշ
Քնքոյշ բազուկ պինդ, գիրգ փաթաթուի
Զեղուն սիրով քո աջ բազկին,—
Վաղուց այդ աջն քեզ է մեկնած։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Սիրտ չեմ անիլ։ Վախենում եմ։
Վախենում եմ նոյն իսկ նորա
Մօտկութիւնից, չնայելով
Նորան տածած անհուն սիրուս.
Վախենում եմ եւ նորանից։
Եւ եթէ հէնց մի անգամ իսկ
Անուշ հաղտուկ, նիրհ ինձ պատէ՝
Ես հեշտութեան բաժկի առաջ
Շուտով կմոռնամ իմ սուրբ պարտքս,
Որ տիրաբար ինձ կանչում է։
Դու լաւ գիտես, որ Աստղիկը

Շատ խանդոտ է,—չի կամենայ
Այլ դիցուհու ընկեր դառնալ
Իշխանութեան իւր սահմանում։

ՏԻՄԱՐԻՏԱ Ա՜յ, ապերախտ, քեզ սիրում է
Աստուածուհին և նորա չափ
Զքնաղ, սիրուն կուսի սէրն ես
Դու վայելում, —հարուստ օժիտն
Աչքիդ այնքան ծանր է թւում։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Թեք, զառիվեր, փչոտ, քարոտ
Բերկրանքից զուրկ ուղին միայն
Անմահութեան է տանում մեզ։
Պարգևն ու վարձն, իբրև տեսիլ՝
Բանդագուշանք, հրապուրում
Կանչում է մեզ։

(Այդ ժամանակ նաւահանգստում հետզհետէ հաւաքւում է ժողովուրդը՝ դուրս գալով ձախ կողմից. ամբոխի մէջ են—Զօցա, Լիսիլլա և Գէօնիդա։ Ամբոխի ձայնը քանի գնում աղմկում է)։

ԶԱՆԱԶԱՆ

ՁԱՅՆԵՐ.— Լսեցի՞ք դուք։—Պահապանը
Արդէն տեսաւ։—Ի՞նչ է եղել։—
Է՜, Ֆիլիմոն, դու չես լսում։—
Մի մեծ նաւ է մեզ մօտ գալիս։—
Հարուստ դանձով ծանրաբեռնուած։—

ՏԻՄԱՐԻՏԱ (Ականջ դնելով)։
Ի՞նչ աղմուկ է, որդիս, այնտեղ։
Դու տեսնում ես, ինձ էլ պատմիր։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Ոչինչ։ Դատարկ, պարապ, անգործ,
Քամի կլանող մարդկաց խումբը
Ժողովուել է նաւահանգստում։

ՏԻՄԱՐԻՏԱ (Ճախարակն առած տուն է գնում)։
Ժամանակ է տուն դառնալու.
Երթամ ճաշի պատրաստութիւն
Տեսնեմ քիչ-քիչ։

(Դուրս է գնում)։

(Հերոստրատը նստում է քարէ նստարանի վերայ՝ երեսը դարձրած դէպի տաճարը)։

ՏԵՍԱՐԱՆ IV

(Ահագին ամբոխ է հաւաքուած նաւահանգստում)։

ԶՕՑԱ, ԼԻՍԻԼԼԱ, ԳԷՕՆԻԴԱ, ԿԱԼԼԻՑ, ԴԻՕԿԼ, ՊԱՀԱՊԱՆ.

ՊԱՀԱՊԱՆ Դէ՜, ճանապարհ։ Ճանրայ տուէք
Խորհրդական Մետրոդորն է
Ինձ սպասում։

(Ճանապարհ բանալով իւր համար, առաջ է գալիս։ Երեք աղջիկներն էլ հետևում են նորան քայլ առ քայլ)

ԶՕՑԱ (Կիթառը ձեռին)։
Ասա, մեզ դու
Ցոյն նաւ է սա։

ԼԻՍԻԼԼԱ (Կրկին-սրինգ առած ձեռքը).
Հարուստ, փարթամ
Օտար հիւրեր է բերում մեզ։

ԳԷՕՆԻԴԱ (Բաւական վերը-բշտած հագուստով, ծաղիկներով լի կողովով)։
Հ՞ը, կոյսերի համչափ պարից
Տարուողներից են, թէ ուրիշ։

ԶՕՑԱ Եւ կիթառի քաղցր ձայնի
Դաշնակութեամբ...

ԼԻՍԻԼԼԱ Կամ սրնգի
Անուշ, գեղ-գեղ ձայնակցութեամբ։

ԳԷՕՆԻԴԱ Իսկ վարդերից հիւսած պսակ
Չի զարդարում նոցա ճակատ
Խոլ խնճոյքի թունդ ժամանակ։

ՊԱՀԱՊԱՆ (Զուարճանալով)։
Ինչու այդքան հարցեր տալ ինձ։
Հէնց իրենցից հարցնէք, լաւ չէ՞,
Արտեմիսի յաւերժահարսներ։—
Թէ որ բան է յիմար դուրս գան,
Գլխապատառ ինձ մօտ եկէք։

(Գնում է դէպի Մետրոդորի տունը, նախաբեմի գռնից)։

ԶՕՑԱ (Նորա յետևից կանչելով)։
Ա՜խ, վայրենի, կոպիտ գռեհիկ։
Եփեսոսում ամենքն արդէն

Ժլատութեան պոչն են բռնել.
Թէ չէ, ասա, ինչ հաչիւ է,
Անծանօթի վզին փաթթուել.

ՖԷՕՆԻԴԱ (Նկատելով Հերոստրատին)։

Ապուշ։ Ամբողջ օրը նստած
Այստեղ դիտում է տաճարը։
Կարծես հայեացքն ուրիշ մի լաւ
Բանով կարող չէր պարարել։

(Մօտենում է Նորան. միւս երկու աղջիկներն ևս հետեւում են իրեն)։

Ի՛մ բարեկամ, չ՚լինի կինդ
Փնփնթացող արարած է.
Այն ժամանակ ինձնից առած
Ծաղիկներով պատիր Նորան։

ԼԻՍԻԼԼԱ Կամ թէ քացի տուր դուրս արա։

ԶՕՑԱ Ի՞նչ սիրում էք դատարկ խօսել։
Գրազ կը գամ, թէ խաբուածի
Մէկը չէ սա։

ՖԷՕՆԻԴԱ Վէրքոտ սրտիդ
Վրայ լցնի՞մ մոռացութեան
Դեղ ու դարման։

ԼԻՍԻԼԼԱ Թէ՞ երգերի
Ձայնով մարեմ քո հառաչներ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Դատարկ խօսքով դուք առաւել
Վեհ ձայներ էլ խեղդել կրնաք։
Կորէք աչքիցս։

ԶՕՑԱ Վայրենի՞ արջ։

ՖԷՕՆԻԴԱ (Կարեկցութեամբ նայելով Նորան)։

Ձէ՛, արևս վկայ, դու ժլատ չես։
Միայն կասեմ՝ չա՛տ աղքատ ես։
Ունեցածիս աւելցուկից
Պէտք է քեզ էլ բաժին հանեմ։
Դէ՛, ա՛ռ, բռնիր։

(Զգում է Նորան մի վարդ)։

ՏԵՍԱՐԸՆ V

ԱՌԱՋԻՆՆԵՐԸ ԵՒ ՄԵՏՐՕԴՈՐ.

ՄԵՏՐՕԴՈՐ (Շտապով ելնում է իւր տան նախագռնից և դառնում է իրեն հետևող պահապանին)։

Գնա՛, չուտով, քրմապետին
Ասա՛, արդէն, նաւն երևաց։
Ցետոյ գնա Գեզեսիպին՝
Սուրբ տաճարի փակակալին
Կանչիր այստեղ։ Ողջ Եփեսը
Պարտաւոր է դիմաւորել
Նորան, որին հիւր է կանչել։

(Պահապանը տաճար է գնում հետևեալ խօսակցութեան ժամանակ Նորից վերադառնում է և գնում Գեզեսիպի տունը և այնտեղից էլ ելնելով, խառնւում է ամբոխի հետ բեմի յետևում՝ ձախակողմը։ Մետրօդորը նկատելով աղջիկներին)։

Ոսկեծղի ուրախութեան
Սիրուն դստերք,—դո՛ւ Լիսիլլա,
Ճարտար, հմուտ սրնգահար,
Դուք էլ Զոյա, Ֆէօնիդա,
Կը կամենա՞ք վաղուան ճաշիս
Մեր սեղանի զարդը լինել։

ԼԻՍԻԼԼԱ Հաճիր միայն հրամայել։

ԶՕՑԱ Մեր երգերի քաջ գնահատող
Բացի քեզնից ուրիշն ունի՞նք։

ՖԷՕՆԻԴԱ Մեր պարերի արժանիքը
Գնահատելու փափուկ գործում
Կը գտնուի՞ մի ուրիշը
Որ սիրտ անէ՝ հետդ մրցէ։

ՄԵՏՐՕԴՈՐ Խիստ պահանջկոտ օտար հիւրի
Առաջ վաղը ոչ մի ջանք, ձիրք
Պիտի չխնայէք Եփեսոսի
Ցայտնի հռչակն ու անունը
Պահպանելու. դուք ինքներդ
Ձեր արուեստից ու չնորհքից
Պիտ զարմացած, տպչած մնաք։

(Ամբոխը հեգնեալ առաջ է գալիս և հետաքրքրութեամբ հետևում է խօսակցութեանը)։

ԿԱԼԼԻՔ (ժողովրդին)։
Հիւրի մասին է խօսակցում։

ԴԻՕԿԼ (ժողովրդին)։
Եկող նաւը խորհրդական
Մետրոդորին հիւր է բերում։

ԶՕՑԱ Նորա դատից, դատաստանից
Վախենալու տեղիք չունինք,
Թէկուզ նոյն իսկ խիստ պահանջկոտ
Մեծ Աթէնքի զաւակ լինի։

ՄԵՏՐՈԴՈՐ Հէնց Աթէնքի զաւակ էլ է։

ԼԻՍԻԼԼԱ (Խօսքը կորելով)։
Աթէնքից է նաւը գալիս։

ԿԱԼԼԻՔ (ժողովրդին)։
Եկող նաւը Աթէնքից է։

ՄԻ ՔԱՆԻ ՁԱՑՆԵՐ (Իրար հաղորդելով)։
Աթէնքի՞ց է։

(Ընդհանուր շարժում։ Ամբոխը, աղջիկներն էլ դիմում են նաւահանգիստ)։

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Ականջ դնելով)։
Աթէնքից է։

(Շտապով ելնում, մօտենում է Մետրոդորին)։
Ո՛վ Մետրոդոր, ասա, խնդրեմ
Նաւի վերայ եկողն ո՞վ է։

ՄԵՏՐՈԴՈՐ Ուխտաւորներ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Բայց քիչ առաջ
Ձէ՞ լսեցի, որ ասացիր
Աթէնացի է եկողը։

ՄԵՏՐՈԴՈՐ Դու իրաւ ես. ուխտաւոր չէ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Հապա ո՞վ է։

ՄԵՏՐՈԴՈՐ Քո ախոյեանդ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Ի՞նչ ասացիր։

ՄԵՏՐՈԴՈՐ Հա՛, բարեկամ,
Շիտակ նա է և առաւել
Կանուխ եկաւ, քան թէ կարծել
Կարող էի։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Իմ ախոյեա՞ն։

ՄԵՏՐՈԴՈՐ Զարմացա՞ծ ես։ Ձէ՞ որ ինքդ իսկ

Հրաւիրելու միտքն յղացար։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Հրաւիրելո՞ւ. ո՞ւմ, ո՞րտեղից։

ՄԵՏՐՈԴՈՐ Վերջին անգամ, երբ ծերերի
Մեծ ժողովին խիզախ մտքիս
Արդիւնքն էի, իբր ծրագիր,
Առաջարկում՝ տաճարի մէջ
Մի նոր արձան դնելու համար,
Իմ իսկ մտքիս ողջ ծանրութիւն
Սրտիս վերայ ընկած զգացի,
Ինչպէս ծանր, դժուար մի բեռ։
Այդ մեծ գործը գլուխ բերող՝
Քեզ ցոյց տուի, քեզ, միայնակ։
Բայց քո ձեռքից ելած անթիւ
Մեծ գործերը չէին փառքիդ
Քարոզները, որ քո անյայտ
Եւ անծանօթ անունդ տուին,
Այլ դէպի քեզ իմ ունեցած,
Տածած անկեղծ վստահութիւնս։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Կար ժամանակ, որ Ֆիդիասի
Անունն էլ էր այդպէս տրւում։

ՄԵՏՐՈԴՈՐ Սուտ չես ասում, իրաւ է այդ։
Անկեղծ հոգով, բոլոր սրտով
Ցանկանում եմ, որ քո փառքի
Արձագանգը աշխարհ բռնէ,
Երկրէ երկիր հզօր ձայնով
Ե՛ւ տարածուի, և՛ հռչակուի։
Բայց և այնպէս պարտք ունէի
Գէթ մի բոպէ խորհել, ասել՝
Թէ որ բան է, յանկարծ մէկ էլ
Մեր բոլորի վառ յոյսերի
Ճիշտ հակառակ նորա ձեռքից
Ելած գործը յաջող չլինի՞...
Այն ժամանակ միմիայն իմ խեղճ
Գլխի վերայ պիտի թափուին
Ամեն կողմից խիստ տեղացող
Կշտամբանքներ, թէ այդպիսի
Ընչանաւոր և մեզ համար
Խիստ կարևոր յայտնի գործն

Ու պատուէրը, առանց մի լուռ
Գիտենալու ումի յանձնելս՝
Վերցրի տուի միայն մէկին։
Չէ՞ որ այդ միտքն ես եմ ծնել։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Սխալուում ես։ Մտքի հայրը
Ես եմ միայն. այդ զաւակը
Ի՛մս է, իմս։ Դառն արտասուք
Ծնեց նորան, իսկ դայեակն էր՝
Անվերջ թախիծս։

ՄԵՏՐՈԴՈՐ (Արհամարհական ժպտով)։
Արժէ՞ միթէ
Վէճի բռնուիլ մէկի համար,
Երբ անթիւ են մտքիս ծնունդ՝
Զաւակներս։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Բայց այն ասա,
Ո՞վ է այն անձն, որին մրցման
Հրաւէր ու կոչ ես ուղարկել։

ՄԵՏՐՈԴՈՐ Կեֆիսոդոտ Աթենացու
Որդին է նա՝ Պրակսիտելն։

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Ապշած)։
Պրակսիտելն է։
(Իսկոյն ինքն իրեն տիրապետելով, սառնասիրտ եղանակով)։
Հա՛, լսել եմ.
Նորա անունն ինձ ծանօթ է։

ՄԵՏՐՈԴՈՐ Թէև նա չատ երիտասարդ,
Մատաղ մէկն է, բայց ասում են,
Թէ իւր գործին չատ հմուտ է։

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Դժուարութեամբ զսպելով յուզումը)։
Հա՛, ասում են...

ՄԵՏՐՈԴՈՐ Ուրիշ ինչով
Կարող էի քեզ ապացոյց
Տալ, թէ որչափ քո հանճարի
Գնահատող եմ, քան այդպիսի
Մի պերճախօս փաստի չնորհիւ։
Մի այդպիսի հռչակ հանած
Արձանագործ միայն պիտի
Կարող լինէր արժանապէս

Հետդ չափուիլ, մրցման ելնել։

ԿԱԼԼԻԹ (Դիոկլի և ուրիշների հետ ելնելով տաճարի սանդուղքների վրայ ակնապիշ նայում է հեռուն)։
Չէ՞ք նշմարում. առագաստներն
Արդէն հեռուում ճերմկտի կտան։

ԴԻՕԿԼ. Տեսէք, տա՛ հ, սկսեցին
Կամաց-կամաց և հաւաքվել
Առագաստներն և թիակներն
Ծովն իջեցնել։

ԿԱԼԼԻԹ Գնանք, չուտով՝
Հանդիպելու, ընդունելու։
(Իջնում են սանդուղքներից և նաւահանգիստ վազում)։

ՄԵՏՐՈԴՈՐ (Դիտելով Հերոստրատին)։
Ինչի՞ մասին ես մտածում։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Ինչո՞ւ ինձնից այսքան երկար,
Ձիգ ժամանակ գաղտնի էիր
Պահում այդ լանն։

ՄԵՏՐՈԴՈՐ Չէի ուզում
Աչխատանքիդ հանգիստն աւրել։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Ինչո՞ւ նորից և կեղծում ես,
Եւ աչխատում, որ ինձ խաբես։
Ուզում էիր ցոյց տալ թէ դու
Վստահութիւն չունիս վրաս.
Կարծում էիր թէ մրցակցից
Կը վախենամ։

ՄԵՏՐՈԴՈՐ Ես քեզ համար
Լայն ասպարէզ, փայլուն ուղի
Եմ բաց անում, որի համար
Դու երազած անգամ չէիր։
Կռուի, մրցման ես դուրս գալիս,
Ոչ թէ միայն քո սեփական
Փառքի համար, այլ և պաչտած
Հայրենիքի պատուի սիրուն։
Դու ես նորա փառքի, պատուի
Բուն մարմնացումն։ Եւ թէ միայն
Կարողանաս քո ձեռագործ
Դիցարձանով օտար երկրից
Մրցման եկած արուեստագէտի

Գործը մոռցնել, նսեմացնել,
Այն ժամանակ, երդւում եմ քեզ
Արամազդով, որ ոչ միայն
Հերոստրատը Պրակսիտելին
Ցաղթեց, ընկճեց, այլ և Եփեսն—
Դոռ Աթէնքին. և ժողովուրդն
Ամբողջապէս քո իսկ փառքով
Տարուած, արբած՝ ուրախ սրտով
Ցաղթանակի տօն կը տօնէ
Այն հերոսի, որ հինաւուրց
Փառքի ոսոխ մեր թշնամուն
Ազատ մրցման մէջ տապալեց։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Կանչիր նորան։ Մրցման հրաւէրն
Ընդունում եմ։ Քեզ, Մետրոդոր
Շնորհաւորւում եմ։

ՏԵՍԱՐԱՆ VI

ԱՌԱՋԻՆՆԵՐԸ ԵՒ ԳԵԳԵՍԻՑ. յետոյ ԵՒՊԷՑՏՆ ու ՔՐՄԵՐԸ։ Յետոյ ԿԼԻՏԻԱ։

ԳԵԳԵՍԻՑ (Շտապ դուրս է գալիս իւր տնից. Մետրոդորին)։
Ուշ եմ հասնում։ Իմ տօնական
Պատմուճանս էի հագնում։
(Եւպէյտն քրմերի և քրմուհիների ուղեկցութեամբ դուրս է գալիս տաճարից. նոքա կանգ են առնում սանդուղքների վրայ)։

ՄԵՏՐՕԴՈՐ Ահա քրմերն եկան, հասան։
(Գեգեսիցի հետ գնում է ողջունելու Եւպէյտին)։

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Խոժոռած)։
Արքայի պէս են ընդունում
Ամենքն։
(Նկատելով Կլիտիային)։
Եւ դու։

ԿԼԻՏԻԱ (Շքեղ հագնուած ելնում է Գեգեսիցի տնից)։
Տանը մենակ
Նստած հաչւում էի, քանի
Օր է, որ դու չես երևում
Եւ փախչում ես միշտ ինձանից,

Երբ դռնապանն եկաւ չտապով
Հիւր է գալիս մեզ մօտ մնալու՝
Մի արուեստագէտ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Իմ մրցակիցս։

ԿԼԻՏԻԱ Չէ՞ որ նորան ինքն Աթէնքն է
Մեզ ուղարկում։ Ինքդ չէ՞ր
Իմ ուսուցիչս՝ նոցա սիրել
Եւ յարգելու արուեստի մէջ,
Եւ կախարդիչ հէքիաթներով
Կապուտակի հեռուից քաշում,
Ու դուրս բերում, ինձ ցոյց տալիս։
Է՜, տես, ահա։

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Խանդավառ)։
Ասա, անկեղծ.
Հաւատ ունի՞ս դեռ դէպի ինձ,
Անգին Կլիտիա։

ԿԼԻՏԻԱ (Զարմացած)։
Կարելի՞ է։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Ի՞նչը։

ԿԼԻՏԻԱ Մի՞թէ, չե՞ս նկատում
Նոր հանդերձներս։ Այս առաջին
Անգամն է, որ ձեռք եմ տալիս,
Հագնում սոցա։ Հաւատո՞ւմ ես։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Օտար հիւրի համար միայն։

ԿԼԻՏԻԱ Ո՛չ. քեզ համար։ Ուզում էի
Ես սոցանով պճնուած, զուգուած
Արհեստնոցիդ դուռը զարկել
Եւ հարցնել—«սիրո՞ւմ ես ինձ»։

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Ցած ձայնով)։
Կեանքիցս աւել։

ԿԼԻՏԻԱ Մտածում էի. թէ որ ասէ՝
Սիրում եմ քեզ, անշուշտ պիտի
Ինձ նայելիս մոռնայ և իւր
Աստուածուհին, գոնէ, գոնէ,
Մի կէս-վայրկեան։ Եւ յաղթութեանս
Համար արդէն այդ կէս-րոպէն
Էլ կը բաւէր։

ՁԱՑՆԵՐ (Հեռուից, նաւահանգստի կողմից)։
Կեցցէ՛, կեցցէ՛։

ՄԵՏՐՕՏՈՐ (Մօտենալով Հերոստրատին)։
Դու չե՞ս գնայ հիւրին ընդ առաջ՝
Ողջամբ գալուստ, կեանք մաղթելու։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Հը՛, ես։ Նորա՞ն։ Որ ամբոխի
Շարքերի մէջ արժանանամ
Նորա ժպտին, քանի ինձ դեռ
Չէ՛ ճանաչում ամենևին։

ՄԵՏՐՕՏՈՐ Բայց նա գիտէ, որ ախոյեան
Ունի այստեղ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Ասա, Նորան՝
Պրակսիտէլին, ամեն բոպէ
Երբ կամենայ ինձ տեսնելու
Արհեստանոցիս մէջ կը գտնէ։
(Գնում է դէպի իւր տունը)։

ՏԵՍԱՐԱՆ VII

ԱՌԱՋԻՆՆԵՐԸ առանց Հերոստրատի։ ՊՐԱԿՍԻՏԵԼ։ ՈՒԽՏԱՒՈՐՆԵՐ։ ՆԱՒԱՁՆԵՐ։ ՍՏՐՈՒԿՆԵՐ։

ՁԱՑՆԵՐ (Բեմի վերայ)։
Կեցցէ՛, կեցցէ՛։

(Ամբոխը լցնում է բեմը։ Նաւը մտնում է նաւահանգիստ. Թիերը ժողովում են՝ ձգում են խարիսխը։ Տախտակամածի վերայ կանգնած է Պրակսիտելը, շրջապատուած ուխտաւորներով, նաւաձներով և ստրուկներով։ ուրախ զուարթ պատասխանում է ողջոյններին։ Ֆէօնիդան և միւս աղջիկները ծաղիկ են տեղում դէպի նաւը)։

ԿԱԼԼԻԹ Ահա՛, ինքը։

ԴԻՕԿԼ Ի՞նչ ես կարծում, ո՞րն է արդեօք։

ԿԱԼԼԻԹ Գեղեցկադէմ, բարձրահասակ
Կայմին թիկնած, կանգնողն է նա։

ԶՕՑԱ Երիտասարդ, ջա՛հել մէկն է։

ԼԻՍԻԼԼԱ Կարծեմ, հեռը խիստ վարուելու
Իսկի պատճառ չէիր ունենայ։

ԳԻԳԵՍԻԹ Հին Աթէնքի արուեստագէտներն,
Առհասարակ, թէ տարիքով,

Թէ լուրջ, վգօն էին լինում։

ՁԱՑՆԵՐ (Նաւից պատասխանում են ողջունողներին)։
Կեցցէ՛, կեցցէ՛...

ՈՒՐԻՇ ՁԱՑՆԵՐ Կեցցէ՛, կեցցէ՛։

(Նաւին սանդուղքներ են կպցնում։ Պրակսիտելը թեթև ոտքունով գետին է ցատկում։ Նորան հետևում են ուխտաւորները։ քրմերը ողջունում են նոցա, որից յետոյ նոքա ցրւում են բեմում։ Ամբոխը գրոհ տալով առաջ և միևնոյն ժամանակ երկուսի բաժանուելով մէջ տեղից ազատ անցք է թողնում։ Կլիտիան կանգնած է աջ կողմը, նախաբեմի վրայ եղողների մէջ։ Սարուկները նաւը դատարկում են)։

ՊՐԱԿՍԻՏԵԼ (Ընդունելով Զեւսի մօտից, զարկում է նորա կեթաւի լարերին)։
Որչափ չքնաղ են Յոնիայի
Աղջիկները։

ՄԵՏՐՕԴՈՐ Ոտք կոխելով
Մեր ափերը՝ իմ սրտագին
Ձերմ ողջոյնս առ, ընդունէ։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Դո՞ւ չես, արդեօք, իմ հիւրընկալ
Խորհրդական Մետրօդորը։

ՄԵՏՐՕԴՈՐ Այո՛։ Բայց ձեր մեծ Աթէնքում
Իմ անունս իմաստասէր,
Քան խորհրդի մարդ է յայտնի։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Հաւանական է. չեմ վիճում...
Հըրաւէրիդ համար այժմէն
Շնորհակալիքս յայտնեմ, տամ քեզ։

ՄԵՏՐՕԴՈՐ Շնորհակալիք քեզ վայել է,
Որ հրաւէրս անտես չարիր։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Իմ ականջիս թովիչ ձայնով
Հնչեց մէկէն քո այդ հրաւէր։

ԵՒՊԷՕՏ (Հանդիսաւոր եղանակով)
Քեզ, Պրակսիտել, յանուն հանուրց
Մեր մեծ Մօրը, օրհնում եմ ես
Եւ ձեռնարկիդ՝ ոյժ ու կորով
Յաջողութիւն եմ ցանկանում։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Քո ողջոյնդ, մեծ քրմապետ,
Ամաչեցնում է ինձ իսպառ։

Այս աշխարհի զաւակ եմ ես
Եւ արուեստովս միայն գիտեմ
Ցարգել, պատուել աստուածներին։

ԳԵԳԵՍԻՑ (Առաջ անցնելով)
Քեզ ողջունողն Գեգեսիյն է։
Քո մայրենի քաղաքդ վաղուց
Ճանաչում եմ։ Քառասուն տարի
Սորանից առաջ այցելել եմ։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Ճանաչում ես մեծ Աթէնքը
Եւ դու այսքան ձիգ ժամանակ
Ձեզ էլ եղել նորից այնտեղ։
Նորա անձուկ քեզ չէր վառում։

ԳԵԳԵՍԻՑ Իմ հայրենի տուն-օջախիս
Ամուր կապով կապուած եմ ես.
Նախ՝ առևտուրս, ապա՝ յարգի
Մեծ պաշտօնս—մեծ տաճարի
Ժառանգական փակակալն եմ։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Երջանի՜կ մարդ։ Վեհագունի
Պահապան ես։ Եւ թէ ինչպէս,
Տեսնում ես դու, նորա չքնաղ
Տեսքից շատ էլ յուզուած չեմ ես,
Ապա գիտցիր, այն պատճառով,
Որ շատ վաղուց հոգուս ներսը
Ապրում է նա՝ պարզ ու մէկին
Իւր ողջ չէնքի ճիշդ պատկերով։
Ուրիշ կերպ իսկ չէր էլ լինի։
Նա տալիս է ինձ այն միայն
Ինչ որ վաղուց խոստացել էր։
Եւ վառ յոյսերս ամենևին
Չէ կամենում խաբել, ինչպէս
Հաւատարիմ և կատարեալ
Աղնիւ, յարգի մի բարեկամ։

ՄԵՏՐՕԴՈՐ Մտիր տունս՝ ինչպէս քոնդ։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Ողջունեցի՛ ես, չգիտեմ,
Ամեն-մէկին, ով որ ինձնից
Ողջոյն ունի սպասելու։
Երկրի օրէնք, սովորութիւն
Ես հեշտութեամբ չեմ կոխ տալիս։

ՄԵՏՐՕԴՈՐ Կատարել ես, ինչպէս պէտք էր։

ՊՐԱԿՍԻՏԵԼ (Նկատում է Կլիտիային, որն առաւել լաւ գիտելու համար բարձրացել է ժայռոտ բարձրութեան վերայ և կանգնած է միւսներից բոլորովին առանձնակի՝ կարծես պատուանդանի վերայ)։

Օ՜, ոչ։ Ես դեռ նոյն իսկ իրեն՝
Աստուածուհուն չեմ ողջունել։

ՄԵՏՐՕԴՈՐ Նա իշխում է իւր տաճարում։

ՊՐԱԿՍԻՏԵԼ (Անթարթ նայելով Կլիտիային)։
Ո՛չ, իւր գահից իջել է նա
Եւ իւր անհուն սիրով ընտրել,
Բնակուել է մահկանացուի
Մարմնի միջում։ Խոնարհ ողջոյնս,
Մեծդ Արտիմես։

(Լսում է հեռագնեան աճող զարմացման և սրտմտութեան յուզում և աղմուկ)։

ՄԵՏՐՕԴՈՐ Ի՞նչ եմ լսում։

ՁԱՅՆԵՐ Հայհոյում է աստուածուհուն։

ԿԼԻՏԻԱ (Խորապէս յուզուած և ամաչելով)
Ես՝ Կլիտիան եմ, մահկանացու
Մի խեղճ աղջիկ։

ԵՒՊԷՅՏ (Մօտենում է Պրակսիտելին, որ յափշտակուած նայում է Կլիտիային և ձեռքը նորա ուսին դնում)։

Ուշքի արի,
Օտարական։ Ոչ ոք մեզնից
Մինչ այս բոպէս դեռ չէ լսել
Մեր աշխարհում մի այդպիսի
Խիստ անմաքուր պարսաւ, դարով
Աստուածուհու մաքուր անուան։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Ի՞նչ պարսաւանք, ում հասցէին,
Ասա, խօսիր, մեծ քրմապետ։

ԵՒՊԷՅՏ Սրբութիւնը անմտութեամբ
Դու կոխ տուիր, հայհոյեցիր։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Երկրպագել էր իմ միտքս
Այդ սրբութեան, ոչ պարսաւել։

ԵՒՊԷՅՏ Մահկանացուին անուանեցիր
Այն անունով, որ կրում է

Մեր ահարկու, վրէժխնդիր
Անհաս, ահեղ, կեանքի աղբիւր,
Կեանք պարգևող աստուածուհին։
Օ՜, զղջա դու։ Ահ ու մահ է
Նորա ցասու՛, բարկութիւնը։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Ներիր անդէտ և ակամայ
Սխալանքս։ Մեծարելի
Մարդկանց ահեղ բարկութիւնից
Միշտ փախչում եմ։ Բայց չեմ վախում
Աստուածուհու բարկութիւնից.
Եթէ այս կոյսն Արտիմեսը
Չէ, ապա նա՝ երկրի վերայ
Աստուածուհու չքնաղատես
Ամօթխած քոյր Ֆէբ Արեգի
Տիպա՛ն է ճիշդ, որ գիշերուայ
Լռիկ պահուն սահում-սուրում
Ջերմ համբոյր է դրոշմում գնում
Հանգիստ ննջող Էնդիմիոնի
Պարզ ճակատին։

(Ամբոխը նորից յուզւում է)։

ԵԻՊԷՑՏ Երկրայինը
Մի՛ չփոթիր ամենևին
Աստուածայնին։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Ոչինչ երկրում
Այն աստիճան աստուածային
Տարը չէ կրում իւր սուրբ ծոցում,
Որչափ չքնաղ գեղեցկութիւնն։

ԵԻՊԷՑՏ Ի՞նչ նոր հաւատ ես քարոզում,
Անլուր կրօն՝ մեր ականջին,
Խիզախ, անմիտ դու պատանի։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Ուրեմն գիտցիր։ Այդ հաւատը,
Անլուր կրօնը — մեր Աթէնքն է,
Իսկ ես նորա խոնարհ քուրմը։
Երբ ձեր զգաստ ականջներին
Պղծութիւն է հնչում ասածս,
Ապա թողէք ես տուն դառնամ։

Իսկ թէ ձեռքիս գործն է պէտք ձեզ՝
Ապա կասեմ, որ լոկ միայն
Իմ հաւատովս գործ կատարել
Եւ գործ յանձնել՝ ընդունակ եմ։

(Նորից դառնալով Կլիտիային)։

Աստուածուհու չքնաղ տիպար,
Խոնարհ ողջոյնս առ, ընդունէ։

(Գնում է Մեարօդորի յետևից)։

(ՎԱՐԱԳՈՅՐՆ ԻՋՆՈՒՄ Է)

ГОСУДАРСТВЕННАЯ ПУБЛИЧНАЯ БИБЛИОТЕКА

Գ. ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Բ. գործողության տեսարանը։

ՏԵՍԱՐԱՆ I

ՊՐԱԿՍԻՏԵԼ, ՄԵՏՐՕԴՈՐ և Ստրուկ։

(Դուրս են գալիս Մետրօդորի տան կողմնակի դռնից)։

ՊՐԱԿՍԻՏԵԼ (Ստրուկին)։
Գնա, ասա, քո տիրոջդ՝
Գեգեսիլին, որ ես այստեղ
Սպասում եմ ժամից աւել.
Ապա պայծառ բակը դուրս բեր,
Ինչ որ պէտք է գործիս համար։
Քո տէրն արդէն զիջաւ. այստեղ՝
Արհեստանոցս պիտ լինի։

(Ստրուկը գնում է Գեգեսիլի տունը)։

ՄԵՏՐՕԴՈՐ Ցուսամ, գործիդ բուռն եռանդը
Չի խանգարիլ մասնակցելու
Այն խնճոյքին, որ ես այսօր
Ի պատիւ քո պիտի սարքեմ։

ՊՐԱԿՍԻՏԵԼ (Ծպտուն)։
Գործը երբէք ուրախութեան
Չի խանգարիլ։ Կտեսնեմ արդեօք
Անդրէգործին միւս հիւրերիդ
Շարքում այսօր։ Նա՝ որին դու
Անուանեցիր։

ՄԵՏՐՕԴՈՐ Եթէ այդչափ
Հաճելի է նորա լինելն...

ՊՐԱԿՍԻՏԵԼ Ախոյեաններն, ինձ հաւատա,
Ոչ թէ միայն կռուի դաշտում

Եւ մրցութեան ասպարիզում
Պիտի տեսնուին ու հանդիպին,
Այլ և փրփուր ու կայծ նետող
Գինու բաժակ ձեռներն առած։

ՄԵՏՐՕԴՈՐ Իրաւացի է ասածդ։
Իսկոյն և եթ մարդ կուղարկեմ՝
Հրաւէր կարդայ նորան գալու։

(Դիմում է դէպի Հերոստրատի տունը)։

(Գեգեսին այդ ժամանակ դուրս է գալիս իւր տնից։ Զբաղուած լինելով սարկի հետ խօսակցութեամբ՝ նա չէ նկատում Պրակսիտելին և Մետրօդորին. ստրուկը դառնում է Մետրօդորի տունը, իսկ Գեգեսին անցնում է նախարեմը)։

ՏԵՍԱՐԱՆ II

ՊՐԱԿՍԻՏԵԼ և ԳԵԳԵՍԻՑ

ԳԵԳԵՍԻՑ Տեսնէ՞լ կուզես ինձ, Պրակսիտել։
Ինչո՞վ կարող եմ ծառայել։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Օ՜, թէ միայն ճիշդ ասացին,
Թէ այն աղջիկն, որին երէկ
Այնպէս տարուած ու հրճուանքով
Ողջունեցի,—թոռնուհիդ է...

ԳԵԳԵՍԻՑ Գիտէս և այն, թէ ողջոյնդ
Որչափ վիշտ, ցաւ հասցրեց նորան։
Երբէք, երբէք, ինչպէս երէկ,
Մի օր անգամ կեանքիս մէջը
Ես չեմ տեսել նորան այդպէս,—
Աչքերն ուռած, արցունք կոխած,
Ցուզուած, վհատ, դողը բռնած։
Աստուածուհու սարսափելի
Վրէժխնդրութեան սպասելիս։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Հէնց երկիւղիս պատճառն այդ է։
Ուստի լացով, աղաչանքով
Խնդրում եմ քեզ՝ նորա առաջ
Խեղճիս համար միջնորդ եղիր.
Ե՛կ, համոզիր դու Կլիտիային,—
Կլիտիա է չէ՞ նորա անունն,—

Որ իւր ուչքը, չնորհն անհուն
Գոնէ վայրկեան ինձ նուիրէ։
Ես չեմ կարող հանգիստ առնել,
Մինչև որ նա սխալանքս
Ինձ չը ներէ։

ԳԵԳԵՍԻՑ Միթէ այդ էլ
Կարող կլինեմ քեզ մերժելու
Այժ ուններնայ։ Երբ որ դառնայ...

ՊՐԱԿՍԻՏԵԼ. Հապա այժմ որտեղ է նա։

ԳԵԳԵՍԻՑ Երբեմնակի, հէնց այս ժամին
Նա գնում է Պան—Շահապի
Սուրբ քարանձաւն։

(Նայում է հեռուն, ձեռքով աչքից արևի լոյսը արգելելով, դէպի բեմի աջ կողմի գեղջի յետևը)։

Ահա հեռուում
Նորա զգեստի քղանցները
Երևում են։ Կամաց-կամաց,
Ցուչիկ քայլով տուն է դառնում
Թաւ ձիթենու չուաքներով։

(Կանչում է Նորան)։

Աղջի, Կլիտիա, այստեղ արի։

ՊՐԱԿՍԻՏԵԼ. Որչափ սէգ է, արքայական
Նորա քայլքը։ Ասես գիտէ,
Որ յետևից անխօս, անտես,
Ցաւերժհարսներն նիզակ առած
Հետևում են մեղմ սուրալով։

ԳԵԳԵՍԻՑ (Նորից կանչում է Նորան)։
Անուշ զաւակս, դու չե՞ս լսում։
Դէ, չուտ արա, այստեղ արի։

ՊՐԱԿՍԻՏԵԼ. Շտապցնելու կարիք չկայ.
Թող որ հանգիստ ու հանդարտ դայ։
Նորա հանգիստ քայլքն անխռով
Կարծես անոյշ նուագ լինի։
Մի՞ խանդարիր այդ ներդաշնակ
Վեհ ընթացքը, որ ակնածու
Իմ հայեացքս ագահարար
Կըլանում է։ Իսկ թէ որչափ

Թաղնուած չնորհ կայ այն հազիւ
Պարանոցի թեքուածքի մէջ՝
Այդ ես գիտեմ։ Մի գիծ անգամ,
Չնչին մի գիծ աւել լինէր,—
Արդէն կորաւ աստուածային
Կերպարանքի ողջ վեհութիւն։

ՏԵՍԱՐԱՆ III

ԱՌԱՋԻՆՆԵՐԸ, ՊՐԱԿՍԻՏԵԼ և ԿԼԻՏԻԱ

ԿԼԻՏԻԱ (Իջնում է աջ կողմի քարաժայռի ոտնատեղերով։ Դեգեսիցին)։
Դու ձայն տուիր, ինձ կանչեցիր։

(Նկատում է Պրակսիտելին և շառագունում)։

ԳԵԳԵՍԻՑ Տես, քո առաջ Աթենացի
Մեր հիւրն ահա գլուխ ծռած,
Սարջացած և զղջացած՝
Ներողութիւնն իւր չրթերին
Քեզնից ներումն է խնդրում։
Ես նորանից չծածկեցի,
Թէ ինչպիսի ծանր անարգանք,
Վիրաւորանք է քեզ հասցրել.
Բայց դու էլ չատ խիստ չլինիս։

(Դուրս է գնում)։

ՏԵՍԱՐԱՆ IV

ՊՐԱԿՍԻՏԵԼ, ԵՒ ԿԼԻՏԻԱ

ՊՐԱԿՍԻՏԵԼ. Խիղճս հանգիստ չէ տալիս ինձ.
Սիրտս ցաւում և տանջւում է,
Որ քեզ Կլիտիա, վշտացրի
Զմտածած խօսքիս չնորհիւ։
Ինձ դատելու իրաւունքը
Քոնն է միայն։ Քո ձեռքով եմ
Դատապարտուած,—միթէ ուրեմն
Կասկածել իսկ կարող կլինեմ,
Թէ քո առաջ մեղաւոր եմ։

(Կլիտիան լուռ է)։

ՊՐԱԿՍԻՏԵԼ (Մի փոքր լռելուց յետոյ)։
Հայրենիքումս չքնաղ կուսին,
Թէև լինի մահկանացու,
Աստուածային անուամբ կնքել
Մահացու մեղք չէ համարուում։
Բայց այդ մասին ձեր Եփեսում
Այլ կերպ մտածել են կամենում։

ԿԼԻՏԻԱ Անցողակի միայն տեսար
Ինձ իմ տեղում... Բայց և այնպէս...

ՊՐԱԿՍԻՏԵԼ Բայց և այնպէս։

ԿԼԻՏԻԱ Իմ ինչքս մէջ,
Արդեօք, դտար, այդ խաբուսիկ
Նմանութիւնը։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Քո չարժուածքի,
Դիմագծերիդ գեղ կերտուածքի,
Նուրբ իրանիդ, պայծառ արև՝
Վառ աչերիդ հայեացքի մէջ։
Ամեն բանով յիշեցնում ես
Արծաթփքին աստուածուհուն.
Ընդունակ ես, անշուշտ, մերթ բուռն
Կրքով վառուիլ, մերթ ինքնասած՝
Քմշոտ լինել, մէկ էլ յանկարծ
Հեզիկ, քնքոյշ, սարսուռ-երկչոտ
Եւ ահաբեկ լինել կրկին
Ինչպէս ինքը գիշերային
Հեզ թագուհին։

ԿԼԻՏԻԱ Ո՞վ է պատմել
Մէկիկ-մէկիկ քեզ այդ բոլորն։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Ով է պատմել։ Իմ աչքերս։
Ասա, հիմա, թէ որ աչքերս
Խաբել են ինձ։ Բայց այդ ասել
Դու չես կարող։ Բայց և այնպէս
Բարկացել ես խեղճիս վերայ,
Եւ մինչև իսկ լաց էլ եղել...

ԿԼԻՏԻԱ (Աշխուժով, արագ)։
Օ՜, ոչ։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Ի՞նչպէս թէ ոչ. բայց ես գիտեմ։

ԿԼԻՏԻԱ (Հայեացք նետելով դէպի Գեղեսիի տունը)։
Սուտ ու չինծու խօսք է թռցրել։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Ինչո՞ւ համար ես լաց եղել։

ԿԼԻՏԻԱ Արտեմսի աստուածային
Երկիւղով եմ ես մեծացել...

ՊՐԱԿՍԻՏԵԼ Ուրեմն երկիւղն էր պատճառը։

ԿԼԻՏԻԱ Ի՞նչ հարցեր են։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Երկիւղը չէ՞ր։

ԿԼԻՏԻԱ Կարծելով թէ ծաղրում էիր...

ՊՐԱԿՍԻՏԵԼ Երբէք այդպէս չէիր կարծում։

ԿԼԻՏԻԱ Խոստովանիր առաջս անկեղծ,—
Ինձնից, անշուշտ, չա՛տ, շատ չքնաղ
Գեղեցկուհիք ես դու տեսել
Եւ շատերն են իրենց սէրը
Քեզ նուիրել։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Ամենքի մէջ
Աստուածային կայծ եմ փնտռել.
Բայց քո առաջ տեսածներիս
Չքնաղ տիպար, կերպարանքներն,—
Նսեմանում ու թոչնում են։

ԿԼԻՏԻԱ Եւ ո՞վ գիտէ քանի անգամ
Ցանդգնաբար ուրիշներին
Նոյնն ես կրկնել, երբ նայել ես
Ցաղթողի պէս՝ նոցա վերայ...

ՊՐԱԿՍԻՏԵԼ Կեանքը կորած գանձ է միայն
Ով որ յանդուգն աչք չէ նետում
Մեզ պատահած գեղեցկութեան
Վերջին խօսքին։

ԿԼԻՏԻԱ Այն բոպէին,
Ինձ թւում էր, թէ ամօթից
Պէտք էր, որ ես գետին անցնեմ,
Կամ թէ գլուխս առնեմ կորչեմ...

ՊՐԱԿՍԻՏԵԼ Ապա ուրեմն երկիւղից էր,
Հա՛, որ այդչափ սարսափ ազդող
Երևեցայ ես քեզ երէկ։
Հապա հիմա։

ԿԼԻՏԻԱ Այժմ հոգիս
Խաղաղ, լուռ է։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Ի՞նչն էր ուրեմն
Խաղաղութիւն քեզ պարգևողն։

ԿԼԻՏԻԱ Արշալոյսի վառ շողերի
Հէնց առաջին փայլփլուքին՝
Հարուստ զոհեր առած հետս
Ես դիմեցի Պան-Շահապի
Սուրբ անձաւը, որ չատ հնուց,
Աւանդութեամբ, մեր՝ կոյսերիս
Սրբավայրն է։

(Նոցա հայեացքներն իրար են հանդիպում։ Կլիտիան այլայլուած՝ աչքերը ցած է ձգում։ Մի փոքր լռութիւնից յետոյ)։

Չէիր լսել։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Ո՛չ. չեմ լսել։ Պատմիր, խնդրեմ։

ԿԼԻՏԻԱ Ժամանակով Պան-Շահապը
Այն մազմզուտ, թաւ աստուածը
Սիրենքս չքնաղ յաւերժհարսին
Հետևում էր. և մի օր էլ
Նեղը ձգած, տարաւ հասցրեց
Ահա, այն մեծ այրի դուռը։
Ցուսակտուր, անօգնական
Սիրենքս հարսը դիցանուշին
Դիմեց լալով—արգահատել,
Նեղ վիճակից փրկել իրեն։
Արտեմիսը ընկերուհու
Պաղատանքին ականջ դրեց
Եւ եղէգնի փոխակերպեց։
Պան-Շահապը կարծեց միայն,
Թէ թագնուել է իւր ձեռքից
Ցաւերժհարսը եղէգնի մէջ,
Ուստի սկսեց ագահ, անյագ
Համբոյր տեղալ նորա վերայ.
Իսկ եղէգնիկն միայն մեղմիկ
Հառաչներով պատասխանեց։
Շահապն իսկոյն կտրեց եղէգն
Եւ սրնգի ձևափոխեց.

Իսկ սրինգը, ի յիշատակ
Մատաղ կուսին՝ յաւերժհարսին
Այնուհետև Սիրենքս [1]) կոչեց,
Եւ քարայրի մութ անկիւնում
Անձկոտ սրտով կախեց յուսրեկ։
Այն օրից դէս միայն աղջիկ,
Կոյս՝ անարատ անձաւն երթալ
Լոկ կարող են. իսկ թէ կոյս չէ,
Այլ կին երթայ, իսկոյն սրինգն
Լալահառաչ ձայն է հանում,
Գետին ընկնում։—Ինչո՞ւ անխօս,
Լուռ կանգնել ես։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Ի՞նչ ասացիր։

ԿԼԻՏԻԱ Անուշադիր, թարթափուն [2]) ես։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Ես հիացած դիտում էի
Եւ հետևում ձեռքիդ քմշոտ,
Նուրբ շարժումին։ Ինչպէս ազատ,
Անբռնազբօս նա իւր ձևերն
Փոփոխում էր, նոր ձև առնում՝
Մէկը միւսից նուրբ, յաղթական,
Իւր ձիւնափայլ գեղ, հոլ բազկին
Ամեն անգամ նոր փայլ տալով։
Թէ որ նորա հարիւրաւոր
Մէկը միւսից նուրբ, զգլխէջ
Շարժումներից գոնէ մէկը
Գրոցովս խլել, անմահացնել
Կարենայի...

(Բռնում է նորա ձեռքը)։

Իսկ այս ձեռքը
Խիստ անողորմ է պատժում ինձ՝
Իմ յանդուգն մեղքիս համար,
Ինձ ցոյց տալով, թէ մինչև այժմ
Ոգևորուած արուեստագէտ
Երբէք, երբէք ես չեմ եղած,
Այլ հասարակ մի գործաւոր։

---

[1]) Սիրենքս յունարէն նշանակում է—սրինգ։
[2]) Ցրուած, distrait.

ԿԼԻՏԻԱ (Ձեռքը զգուշութեամբ ազատելով)։
Այժմ այլ ես չեմ բարկանում,
Պրակսիտել։ Աստուածուհին
Թող պահապան լինի գլխիդ։
(Կամենում է գնալ)։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Մի՛, մի գնայ։ Աղաչում եմ.

ԿԼԻՏԻԱ Զէ՞ որ հիմա հէնց լսեցիր,
Որ ասացի, թէ այլ ես
Չեմ բարկանում։ Էլ ի՞նչ կուզես։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Մի բան միայն։ Մինչև գնալ,
Հեռանալդ, եկ որոշիր։
(Ցոյց տալով դէպի նաւահանգիստը)
Հէնց այսօր իսկ արագաթև
Նաւս խարիսխ կառնէ, կելնէ
Դէպի Աթէնք չուելու համար։
Ինձ էլ, արդեօ՞ք, կառնէ հետը։

ԿԼԻՏԻԱ Ի՞նչ, ուզո՞ւմ ես վերադառնալ։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Դո՛ւ, դու միայն կարող կլինիս
Լուծել հարցը և վճիռ տալ։
Ես չեմ կարող աստուածուհու
Անդրին ստեղծել, արձանացնել
Առանց քո ջերմ մասնակցութեան։

ԿԼԻՏԻԱ Որչա՞փ սխալ կարծիք ունիս։
Ես սովոր եմ գնդակ նետել,
Իլիկ մանել և քընարի
Վերայ ածել։ Իսկ քո գործի,
Արուեստի մէջ ինչո՞վ պիտի
Ես օգտակար հանդիսանամ։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Միայն նորան մարմին տալով։

ԿԼԻՏԻԱ Ի՞նչ... ինչ ասացիր։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Լսիր, ասեմ։
Կլիտիա անունն ու Արտեմիս՝
Երկուսն ես համ-հաւասար
Արժէք ունեն և ինձ համար
Նոյն բաներն են։

ԿԼԻՏԻԱ Կամենում ես...

ՊՐԱԿՍԻՏԵԼ Խնդրում եմ քեզ՝ իբրև չնորհ
Արտօնես ինձ,—հլու բազկով
Քո հրաշալի դիմագծերդ
Եւ ողջ մարմինդ կերպարանեմ,
Մարմարիոնի ժեռ ու կոպտար
Քարին յանձնեմ, որ պահպանէ
Դարուց ի դար, մինչ յաւիտեան։

ԿԼԻՏԻԱ Ո՛չ, ոչ, երբէ՛ք։ Անկարելի
Բան ես խնդրում։
Թէ կմերժես՝

ՊՐԱԿՍԻՏԵԼ Ես արձանի համար չինած
Անդրուց զրկուած պատուանդանի
Վերան միայն կը փորփրեմ՝
«Անկարելի բան եմ խնդրում»։
Ապա կրկին իմ հայրենի
Աթէնքս կերթամ և ձեռք կառնեմ
Կիսատ թողած խեղճ Կիպրիդս։

ԿԼԻՏԻԱ (Անվճռաբար)։
Նորա համար նոյնպէս գտար
Մահկանացուի չքնաղ տիպա՞ր։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Ուրիշ ի՞նչ կերպ կարող եմ ես
Արձան կերտել, ստեղծագործել։

ԿԼԻՏԻԱ Գեղեցի՞կ է գտած ուրիդ։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Դա ի՞նչ խօսք է։ Կասկածել իսկ
Չի կարելի։

ԿԼԻՏԻԱ (Ամօթից շառագունելով)։
Օ՜, ամօթից
Կը մեռնէի։ Չէ՛ի կարող։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Այժմ՝ այսօր ես չեմ ուզում
Պատասխանես։ Ո՛չ։ Դու հանգիստ
Ու անխռով ասածներս
Լաւ որոճայ, կշռադատէ։
Ես կը սպասեմ. թէև անգործ,
Պարապ կեանքը, անյայտութեան
Հետ միացած, ինձ կոպանեն.
Բայց և այնպէս՝ ես կսպասեմ։

ԿԼԻՏԻԱ Այժմ թող ինձ, որ ես երթամ։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Բայց իմացիր, որ քո մերժումդ
Պիտ ստիպէ, որ ես թողնեմ
Իմ աշխատանքս, տուած խոստումս
Եւ հեռանամ։ Դորա հետ էլ
Եւ քեզանից, Կլիտիա, պիտի
Ընդ միշտ բաժնուիմ։ Եւ չգիտեմ
Թէ դոցանից ո՞րն ինձ համար
Ծանր կորուստ պիտի հաշուեմ։

ԿԼԻՏԻԱ Ես... Ուզում եմ... Պրակսիտել...

ՊՐԱԿՍԻՏԵԼ Ի՞նչ պատահեց։ Դու դալկահար...
Ուշաթափուում... անզօր... Կլիտիա...

(Առնում է իւր գրկի մէջ և արագ համբուրում շրթունքները)։

ԿԼԻՏԻԱ (Դողալով, կամաց ձայնով)։
Թող ինձ հանգիստ... խնդրում եմ քեզ...

ՊՐԱԿՍԻՏԵԼ Ուրեմն ե՞րբ կարող եմ ես
«Այո» լսել քո բերանից։

ԿԼԻՏԻԱ Ինքս էլ դեռ ոչինչ չգիտեմ։

(Գնում է Գեղեսկի տունը)։

ՏԵՍԱՐԱՆ V

ՊՐԱԿՍԻՏԵԼ (Ցետոյ) ՄԵՏՐՕԴՈՐ և ՀԵՐՈՍՏՐԱՏ։

ՊՐԱԿՍԻՏԵԼ (Միայնակ)։
Օ՜, մեղրածոր, քաղցր շրթունք,
Դուք ինձ, անշուշտ, կը դարձնէք
Այն բոլորը, ինչ որ այսօր
Ձեզ յանձնեցի և ստացաք։

(Մետրօդորն ու Հերոստրատն երևում են վերջին տան շէմքից)։

ՄԵՏՐՕԴՈՐ (Հերոստրատին)։
Ահա ինքը։ Թող հէնց անձամբ
Ասածներս քեզ հաւաստէ
Քանի որ դու չես հաւատում։

(Գնում է դէպի իւր տունը՝ նախադռնից)։

ՏԵՍԱՐԱՆ VI

ՊՐԱԿՍԻՏԵԼ ԵՒ ՀԵՐՈՍՏՐԱՏ։ (Ցիչ յետոյ) ՁՕՅԱ, ԼԻՍԻԼԼԱ ԵՒ ՖԼՕՆԻԴԱ

ՊՐԱԿՍԻՏԵԼ (Մօտենալով Հերոստրատին)։
Կասկածեմ թէ ոչ՝ քեզ խնճոյքում,—
Բայց ընկերոջ եմ ձեռք մեկնում
Պինդ սղմելու և թոթուելու։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Մենք դեռ իրար ծանօթ էլ չենք։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Հմուտ ձեռքիդ ու արուեստիդ
Գործերն վաղուց ինձ ծանօթ են.
Մենք օտար չենք։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Թագաւորներն
Շատ հեշտութեամբ համեստութեան
Տէրն են դառնում։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Օ՜, մի ասիլ,
Թագաւոր չեմ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Դորա փոխան
Պրակսիտել ես։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Դու—Հերոֆանտ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Եւ դեռ յամառ հաւակնութեամբ
Ուզում էլ ես ինձ համոզել,
Թէ իմ անունս նոյնչափ գիտես,
Որչափ ես քոնն։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Այո՛, կասեմ,
Հերոֆանտն ես։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Իմ անունս
Հերոստրատ է,

ՊՐԱԿՍԻՏԵԼ (Թեթևակի շփոթուելով)։
Ճիշդ հէնց նոյնը
Ասել կուզեմ։ Սխալանքս
Խնդրեմ ներել։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Հէնց այդքանը
Ապացոյց է, թէ ինչպիսի
Սար ու ձորեր ու անդունդներ
Բաժանում են մեզ իրարից։

ՊՐԱԿՍԻՏԵԼ. Ո՛չ, սխալ ես։ Ասա, խնդրեմ,
Ի՞նչ կարող է մեզ արգիլել
Կամ խանգարել բարի կապեր
Պահպանելու։ Մրցութիւնը՝
Թշնամանք չէ։ Նոյն բանակի
Զինուոր ենք մենք։ Միևնոյն չէ՞,
Թէ մեզանից, որի կառքը
Շուտ կհասնի որոշ կէտին։
Երկուսս էլ մի անբաժան
Նպատակի ծառայող ենք,—
Սուրբ արուեստի ստրուկներ ենք։

(Նկատում է աղջիկներին, որոնք ձախ կողմից՝ Մեթրոդորի անից ելնելով, յամրաքայլ առաջ են գնում)։

Տե՛ս, ինչ չքնաղ ծաղկեփունջ է։
Առաջ բարի, [1]) զեղեցկուհիք։

ՋՕՅԱ. Մեթրոդորի տունն ենք գնում։

ԼԻՍԻԼԼԱ. Մենք հարկիքի ողջ ժամանակ
Պիտի պարենք, լորուստ [2]) երգենք...

ՖԷՕՆԻԴԱ. Եւ թէ չոյենք ու պարարենք
Քմահաճոյ, բաղդի զաւակ
Ամէնքի ճետ հիւրի ականջ
Ու աչքերը։

ՊՐԱԿՍԻՏԵԼ. Փառք և պատիւ
Հիւրընկալող տանտիրոջը։

(Աղջիկներն ուրախ քրքիջով գնում են Մեթրոդորի տունը՝ նախադռնից)։

ՀԵՐՈՍՏՐԱՏ. Զարմանում եմ, որ դու այդպէս
Թէ անհոգ ես և թէ ուրախ։

ՊՐԱԿՍԻՏԵԼ. Բայց ինչու՞ ես ուրախ չլինեմ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ. Երէկ միայն դեռ նոր տեսար
Աստուածուհու մեծ մեհեանը։

ՊՐԱԿՍԻՏԵԼ. Այո՛, յետոյ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ. Ու նա հոգիդ
Զընկճեց, ճնշեց։

---

[1]) Առաջ բարի=ո՞ւր էք գնում։
[2]) Լորուստ=Թեթև բովանդակութեամբ, բայց երգեր։

ՊՐԱԿՍԻՏԵԼ. Ամենևին։

ՀԵՐՈՍՏՐԱՏ. Դու չէ՞ս խորհել, մտմտացել
Գործի մասին, որի համար
Քեզ կանչել են։

ՊՐԱԿՍԻՏԵԼ. Այն գործն արդէն
Կազմ, պատրաստ է։

ՀԵՐՈՍՏՐԱՏ. Ի՞նչ ես ասում...
Ինչպէս թէ կազմ ու պատրաստ է։

ՊՐԱԿՍԻՏԵԼ. Իրար մի քիչ լաւ հասկանանք։
Կազմ, պատրաստ է գաղափարը։
Դու լաւ գիտես,—ինչ խօսք դորան,—
Որ ամեն բան, ինչ որ կերտում,
Ստեղծում ենք՝ չնորհւում է
Մեզ մուսայից մի վայրկենում
Եւ կամ երբէք։

ՀԵՐՈՍՏՐԱՏ. Մեր տաճարը
Հարիւրաւոր տարիներում
Հազիւ-հազ է չինուել, պրծել։

ՊՐԱԿՍԻՏԵԼ. Հարիւրաւոր տարիներ են
Անցել, սահել, որովհետև
Ծանր, կոպտար, յամառ քարեր
Պէտք էր տաշել ու յարդարել
Եւ թէ երկինք, տանել-հասցնել.
Բայց հէնց նորա՝ այդ տաճարի
Հսկայական անդամների
Խիստ վեհապանծ ու կատարեալ
Ազատ, անշեղ օրէնքի խօսք
Ամբողջութիւնն մեզ՝ ամենքիս
Համար շատ պարզ ապացոյց է,
Թէ մեծ վարպետ՝ արուեստագէտի
Ճարտար գլխում ձեր տաճարի
Նախատիպար գաղափարը
Մի վայրկեանում է յղացել,
Ծնունդ առել։—Կասկածո՞ւմ ես։

ՀԵՐՈՍՏՐԱՏ. Ե՞ս... ո՛չ. երբէք։
Եւ դու նոյնպէս մի՛ կասկածիր,—

Այժմ չատ պարզ հասկանում եմ
Խաղցած խաղդ։

ՊՐԱԿՍԻՏԵԼ. Խաղ... իմ կողմից։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Դեռ այս գլխից խնջոյքների
Թունդ հրաւէր, համակրութեան
Մեծ-մեծ խօսքեր, այնուհետև
Կեղծ ու պատիր անդորրութիւն,
Ուրախ, անհոգ արտաքին տեսք,
Իբրև թէ այն վսեմ գործը,
Խաղ ու պար է լոկ քեզ համար,—
Թեթև ջանքով հիւսած պսակ
Որի համար չարժէ նոյն իսկ
Եւ ձեռք մեկնել։ Այդ բոլորն էլ
Այն պատճառով, որ ցոյց տաս թէ
Հուչակ հանած արուեստագէտ ես
Եւ մրցակցից երկիւղ կրելու
Տեղիք չունիս. իսկ յաղթութիւն
Վաստակելու՝ վաղուց արդէն
Հաւատացած ու վստահ ես,—
Կասկած չունիս։

ՊՐԱԿՍԻՏԵԼ. Ես անարդար
Կասկածներից վիրաւորուել
Չեմ էլ կարող։ Երէկ արդէն
Նկատեցի, որ չկայիր
Դիմաւորող ժողովրդի
Շարքերի մէջ. բայց որպէս զի
Դու էլ, իրաւ, տեղեակ լինես
Այն պատճառին, որն ստիպեց
Ինձ հաւատալ, թէ յաղթութիւնն
Այս գործի մէջ քոնն է միայն...

ՀԵՐՈՍՏՐԱՏ Հնարաւոր բան է միթէ...
Եւ դու ինքդ...քո բերանով...

ՊՐԱԿՍԻՏԵԼ. Դու հայրենի հողի վերայ
Ամուր կանգնած և քո աղգի
Հաւատալիք—աւանդութեան
Քաջ հմուտ ես. ուստի և նա
Ճարտար ձեռքիդ ու արուեստիդ

Հմուտ գործը իւր խոհերի,
Զգացմունքի արտայայտող
Ճշգրիտ պատկեր պիտ համարէ։
Իսկ ես իսկոյն քո Եփեսցոց
Աչքի առաջ գաղտնիքս բացի,
Թէ իւր պաշտած աստուածուհին՝
Ինձ օտար է, նա իմս չէ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Շնչասպառ)։
Նորան, անշուշտ, կը ցանկայիր
Շատ առաւել բարձր ու ահեղ
Արձանացնել։

ՊՐԱԿՍԻՏԵԼ. Ընդհակառակն՝
Շատ առաւել փոքր չափով,
Ոչ էլ այնքան ահեղ տեսքով։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Հասկանում եմ,—փղոսկր, ոսկի
Ցեսա ձգելու վարպետ միջոց։

ՊՐԱԿՍԻՏԵԼ. Պարզ մարմարիոն է ընտրածս։

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Աւելի ու աւելի ցոյց տալով իւր հաճելի հիասթափութիւնը)։
Աստուածուհու անդրու համար։

ՊՐԱԿՍԻՏԵԼ. Գեղեցկութեան տիպար կնոջ
Մարմնի համար։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Հանաք է, հա՞։
Աստուածուհին մի գեղեցիկ
Կնոջ նման, եւ սրբապիղծ
Մաքերդ արդէն խիզախեցիր
Արտայայտել ժողովրդի
Աչքի առաջ։

ՊՐԱԿՍԻՏԵԼ. Դեռ աւելին։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Նոցա նոյն իսկ իմ հրաշալի
Դիցանոյշի չքնաղ տիպարն
Ինքս անձամբ ես ցոյց տուի։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Կին արարած։

ՊՐԱԿՍԻՏԵԼ. Այո՛, մի կին,
Մի չքնաղ կոյս։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Եւ ժողովուրդն

ՊՐԱԿՍԻՏԵԼ. Ու քրմերը—լուռ, անխռով

Այդ լսեցին։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Ո՛չ. վրդովուած։—
Բայց ինձ ներիր։ Շուտով արդէն
Մեզ խնճոյքի կը հրաւիրեն
Իսկ ես պսակ և տօնական
Զգեստ անգամ չունեմ վրաս։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Դո՛ւ ես ասում քո բերանով,—
Վրդովմունքով քեզ լսեցին
Եւ դեռ դարձեալ դու ուզո՞ւմ ես
Աստուածուհուն արձանացնել
Այնպէս, ինչպէս դո՛ւ ես մտածել։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Հապա ուրիշ կերպ կարող եմ։

(Գնում է Մեսրոդորի տունը՝ նախադռնից)։

ՏԵՍԱՐԱՆ VII

ՀԵՐՈՍՏՐԱՏ, ՑԵՏՈՅ ԿԼԻՏԻԱ

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Միայնակ՝ մի փոքր լռութիւնից յետոյ, ոգևորութեամբ)։
Լսածներս երազ չէին...
Թէ ես սխալ, թիւր հասկացայ...։
Այստեղ, այստեղ կանգնած էր նա
Եւ խօսում էր... Օ՜, աստուածներ։
Նորից սիրտս յուսով լցրիք։
Ե՛ւ յաղթանակ, և՛ փառք, և՛ սէր...
Սէր, սէր անվերջ։

(Արագ քայլերով մտնում է Գեգեսիի տունն ու կանչում է)։

Է՜յ, դռնապան։
Շուտով գնա, Կլիտիային,
Այստեղ կանչիր։ Ասա, նորան
Ուրախ լուրերն դուռն առաջ
Սանձակոտոր ու անհամբեր
Ձիու նման իւր չէմքերն են
Դոփում, զարկում։

(Դառնալով դէպի Մեսրոդորի տունը)։

Դէ, չտապիր,

Պրակսիտել, խնճոյք գնա,
Ծաղիկներով քեզ զարդարիր։
Իսկ իմ խնճոյքս մի քիչ յետոյ
Կը կատարեմ չատ առաւել
Ճոխ ու չքեղ, քան կերազես։

ԿԼԻՏԻԱ (Ցնից ելնելով, հիասթափ և պլպլուած նորա տեսքից)։
Հերոստրա՞տ... Դո՞ւ ես միթէ...

ՀԵՏՈՍՏՐԱՏ (Շտապելով դէպի նա)։
Այո՛, Կլիտիա, Հերոստրատդ է։
Բայց ոչ այն ժանդ ու կասկածոտ,
Ցօնքեր կիտած Հերոստրատը,
Որին սովոր ես միշտ տեսնել,—
Այլ ապահարկ կապանքներից,
Ազատ սրտով, վստահ հոգով,
Այժմ ահա թէ ով եմ ես,—
Եւ ինչպէս եմ դէպ քեզ դիմում։

ԿԼԻՏԻԱ (Ցետոյ բաշուելով)։
Քեզ ի՞նչ եղաւ, բա՞ն պատահեց։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Տէս, լայն բացած բազուկներով
Քեզ եմ դիմում, գրկել խնդրում
Եւ պահանջում, ինչ որ վաղուց
Իմս է եղել իրաւունքով։
Մի ժամ միայն, ժամ երջանիկ...
Սոփիլիր ինձ, որ ես մոռնամ
Աստուածուհիս... այժմ արդէն
Դու կարող ես, այդ ոյժն ունես։

(Հեգնելով)։

ԿԼԻՏԻԱ
Կարո՞ղ եմ ես...

ՀԵՐՈՍՏՐԱՏ Պարտաւո՞ր ես։

ԿԼԻՏԻԱ Բայց դիցանոյշդ կթողնի՞ այդ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Այո՛, Կլիտիա, համոզուած եմ,
Քաղցր աչքով պիտի նայէ։

ԿԼԻՏԻԱ Բայց ինչն, արդեօք, նորա բարի,
Քաղցր հայեացքն ու հաճութիւն
Քեզ պարգևեց։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Օ՜, լսիր ինձ։

Երէկ՝ երկար տանջանքներից
Յետոյ միայն կարող եղայ
Գտնել այն ձևն, որ արժան է
Նորա ահեղ, աստուածային
Կերպարանքին։ Իսկ պարծենկոտ
Աթենացի արուեստագէտը,
Գիտէս ինչպէս կը կամենար
Պատկերացնել աստուածուհուն՝
Ողջ աշխարհի վեհ թագուհուն։
Ինչպէս չքնաղ, գեղեցկատիպ
Մի կոյս, մի կին... այդչափ միայն։

ԿԼԻՏԻԱ (Սաստիկ յուզուած ու պլպլուած)։
Ես...

ՀԵՐՈՍՏՐԱՏ Դու, այո, զարմացած ես։
Մի մտածիր, մարմարիոնից
Կերտած տիկնիկ՝ մի խաղալիկ,
Եղծանելի ու վաղանցուկ
Գեղեցկութեան նմանութիւն՝
Եփեսոսի Արտեմիսի
Ոսկի գահի վերայ բազմած։
(Կլիտան ձեացել է շփոթուած, չիմանալով ինչ պատասխանէ)։
Ա՜հ, դու լուռ ես,—դա մօտալուտ
Բաղդ ու յոյսի նախազգացումն
Է չչնչում քո ականջին.
Դու զգում ես, որ ակնապիշ
Երկար ատեն իմ սպասած
Ուրախութեան ժամն է զարկում։
Արի, երթանք մենք թևանցուկ
Հզօր ու սուրբ աստուածուհու
Ողջակիզի բեմի առաջ.
(Կամենալով գրկել Նորան)։
Գնանք, գնանք։

ՏԵՍԱՐԸՆ VIII

ԱՌԱՋԻՆՆԵՐԸ ԵՒ ՊՐԱԿՍԻՏԵԼ

ՊՐԱԿՍԻՏԵԼ (Տօնական զգեստով, գլխին պսակ, դուրս է գալիս Մեսրոգորի տան առաջին դռնից և նկատելով Կլիտային, ուրախ զարմանքով)։
Ինչ եմ տեսնում։—Զուր տեղն երբէք
Ներքին ձայնիս ես չեմ լսել։
Ո՛չ, մի օր իսկ չէի կարող
Ես կեանք անցնել և կամ ուրախ
Խնճոյքի մէջ թինկ-տալ, պառկել,
Մինչև որ քեզ կրկին անգամ
Զը տեսնէի։

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Պրակսիտելին)։
Ճանաչում ես,
Ուրեմն, սորան։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Եւ կարող ես
Ինձ այդ մասին դեռ ևս հաղց տալ։
(Աղերսագին ձայնով Պրակսիտելին)։

ԿԼԻՏԻԱ Լռիր։ Նա դեռ չէ կասկածում։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Ա՜հ... Ինչպէս թէ... Նա չգիտէ
Այն, ինչ որ ես բարձր ձայնով
Ժողովրդին պարզ յայտնեցի։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Սա ինչ բանէ, ասա, Կլիտիա։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Թէ գուցէ նա պիտի լսէ
Ուրիշներից և մտածէ,
Թէ վատաբար թագցրել եմ
Միայն իրենից։
(Վշտաբար)։

ԿԼԻՏԻԱ Ո՛չ, պարզ ասա,
Ասա բոլորն, պատմիր իրեն
Եւ մի թագցնիր։
(Կլիտային)։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Դու... այդ դո՞ ես,
Կլիտիա, խօսիր։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Բայց կարելի

Բան է միթէ։ Այսօր,—ինչ խօսք,—
Դու առաջին անգամը չէ,
Որ տեսնում ես Կլիտիային,
Եւ քեզ ու քեզ գլխի չընկար,
Գոնէ այժմ, թէ ինչ կոյսի
Մէջ եմ գտել աստուածուհիս։
Սորա նման կամ հաւասար
Շատերն ունես Եփեսոսում։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Անլուր ամօթ և նախատինք։
Եւ դու երես դեռ ունեցար
Ժողովրդի ողջ բազմութեան
Առաջն ասել... Ասել սորա
Հէնց երեսին...

(Կլիտիային)։

Երէկ նորան
Ականջ դիր, այսօր անգամ
Դու լսում ես,—և բարկութեան
Այնքան պաչար մէջդ չեղաւ,
Անօրէնի երեսն ի վեր
Բարձր ձայնով դու գոռայիր,
Որ նա այդպէս լպիրշ կերպով
Ոտքով կոխեց սրբութիւնը։

ԿԼԻՏԻԱ Ո՛չ, Հերոստրատ...

ՀԵՐՈՍՏՐԱՏ Օ՜...

ԿԼԻՏԻԱ Ամենևին
Նա սրբապիղծ բան չէ արել։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Թշուառական, ուշքի արի։

ԿԼԻՏԻԱ Ականջ դիր ինձ։ Խելայեղ չեմ.
Գիտեմ հաստատ, համոզուած եմ,
Որ նա բնաւ անհաւատ չէ,
Ի՛ոչ սրբութիւն ոտքով կոխող,
Այլ հաւատուոր. ջերմ հաւատն է,
Որ խօսում է այդպէս վառուած։
Բոլոր հոգովս ես զգում եմ,
Իւր բոց խօսքով, հուր շրթունքով,
Երբէ՛ք, երբէք ոչ մի արատ
Ու նախատինք իմ անուանս

Ու իմ պատուիս չէ հասցրել.
Ընդհակառակն մեր առօրեայ
Նեղ շրջանից, մեզ շուրջ պատող
Գծուծ երկրի իմ քոյրերից
Առել-տարել, բարձրացրել է,
Եթեր հանել։

ՊՐԱԿՍԻՏԵԼ (Ոգևորուած հրուա նայուածքով դիտելով Կլիտիային)։
Աղատ, վստահ,
Թեթև-թեւով դու իմ յոյսերս
Առար, տարար, երկինք հասցրիր։
Աչքերս, իրաւ, չը խաբեցին։
Ինչ որ քո մէջ տեսայ, զգացի,
Այդ ամենը և աւելին
Մէջդ պահած, ծրարած ունիս։
Ինձ լիովին ըմբռնել ես։
Այժմ խնդիրս դու չես լսել։
Դեռ իմ նաւս խարիսխ ձգած
Սպասում է։ Կ'արտօնես ինձ...

ՀԵՐՈՍՏՐԱՏ Լռի՛ր։ Իզուր մի՛ հրապուրիր,
Գլխից հանիր։ Եթէ նոյն իսկ
Համաձայնէ՝ ալաչանքիդ
Ձայնին լսէ, ես կարգիլեմ։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Ո՞վ քեզ, արդեօք, այդպիսի լայն
Իրաւունքներ բաշխեց, տուեց։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Կլիտիա, սա դեռ հարցնում է
Թէ ո՞վ, արդեօք, ինձ այդպիսի
Իրաւունքներ տուեց, չնորհեց։
Նա ի՛մս է, իմս, գիտես։
Նորան վա՛ղուց, չատ վաղուց է
Սիրում եմ ես. սիրել, տանջուել,
Եւ լռել եմ. սրտիս խորքում,
Խոր անկիւնում կիրքս ծածկել։
Տարիների դառն տանջանք,
Տանջուած սրտի լեղի վշտեր
Ջարչարել են մեզ միասին։
Նա ի՛մս է։ Իսկ դու հազիւ
Երէկ միայն դեռ ոտք դրիր

Մեր ափերին և հէնց այսօր
Հարցնում ես, որ օրէնքով,
Իրաւունքով կարող եմ ես
Արգելք դնել...

ԿԼԻՏԻԱ. Եւ ոչ մի բան
Դու արգելել ինձ չես կարող:

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Դոռալով):
Եւ դու, Կլիտիա:

ԿԼԻՏԻԱ. Ազատ Յոնիոյ
Ես զաւակ եմ. ոչ մի երդում,
Ոչ մի չղթայ ինձ չեն կապում:
Ահա արդէն ամիսներ են
Անցել-գնացել այն օրից դէս,
Երբ առաջին անգամ քեզնից
Սիրուդ մասին խոստովանանք
Ես լսեցի: Եթէ միայն
Լոկ մի վայրկեան մոռանայիր
Այն բոլէին սիրուս համար
Փառքիդ տենչանք աստուածուհուդ,—
Վաղուց արդէն ես քոնն էի:
Բայց դու անսիրտ յետ մղեցիր,
Եւ մերժեցիր ձօնած ընծաս:
Անցան ժամեր, օրեր, շաբաթ
Եւ ամիսներ,—և միշտ միայն
Արտեմիսիդ համար հարուստ,
Առատ էիր, իսկ ինձ համար՝
Միշտ կուչ եկած, կծկուած բազուկ,
Աղքատ էիր: Աղատութիւնս
Զը կապտելով, այժմ գլխիս
Տէր դառնալու, հրաման տալու
Դու կամք ունիս: Քեզնից ոչինչ
Չեմ ստացել: Եւ չ'տուածդ
Տօկօսներով առնել կուզես:

(Նայում է Կլիտիային անթարթ աչքերով. Հերոստրատին):

ՊՐԱԿՍԻՏԵԼ. Օ՜, ասա, ինձ: Քանի-քանի
Գործերիդ մէջ անմահացրիր,
Արձաններից որի՞ մէջը

Մարմնացրիր սորա նրբին,
Աստուածային մարմնի ձևեր:
Դու լռում ես: Դու չես խօսում:
Եւ ոչ մի տեղ: Չեմ հաւատում:
Բայց թէ ստիպուած ես հաւատամ,
Ապա նորից պիտի հարց տամ,—
Ո՞վ քեզ տուեց այդ իրաւունքն,
Որ ամենքից թագցընէիր
Այս արմաղան, անգին գանձը,
Որին այնքան երկար ատեն
Տէր լինելով՝ չօգտուեցար
Ոչ մի բանով:

(Կամնալով տանել Կլիտիային):

ՀԵՐՈՍՏՐԱՏ
Գնանք, գնանք,
Կլիտիա, դէ՛, եկ: Քեզ պատասխան
Ուրախութեամբ տալ պատրաստ եմ,
Բայց պրտկերես այս եկուորին՝
Ամենևին, որը արբած
Իւր արփաթև փառքի փայլից
Եւ իւր բոլոր կիրք-ցանկութեան
Գլխից հանած սանձ ու կապանք,
Քո առաջդ բոցբորբ յոյզերն
Անուշ խօսքի կեղծ հանդերձանք
Հագցրած՝ կուզէ խելքդ առնել:
Միայն ուզիր և պահանջիր՝
Եւ ես սիրով ոտքերիդ տակ
Կը տարածեմ սրտիդ ուզածն...

ԿԼԻՏԻԱ Եւ կխլես նորա ընծան:

(Ցուսահատ):

ՀԵՏՈՍՏՐԱՏ
Օ՜, եկ, գնանք:

ԿԼԻՏԻԱ Ի՞նչ յուսալրծարծ
Ընծաներով դու միտք ունիս
Ինձ հրապուրել, մղոնել-տանել:
Քո ապագայ փառք ու պատուով:
Բայց ինձ ի՞նչ նա: Ես կին եմ, կին:
Դու հէյհա, վռազ չտապ
Երազական փառք ես փնտռում,

Այն էլ միայն լոկ քեզ համար.
Իսկ նա բացեց և իմ առաջ
Անմահութեան տանող դռներն,
Եւ դորա հետ խոստանում է
Մատաղ կեանքի անանց հրապոյր։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Ինքս էլ աղքատ չեմ այդ կողմից։
Կարծում ես թէ սրտի ալքից
Ժայթքած արիւնն արժան բան է։
Համակչիռ, ծանր չեն գայ
Իմ ջերմ սէրս, անձիս ձօնը,
Եփուն յուսով ողջ էուրիւնս
Բերած զոհս, քան չողոքորթ
Եւ հնհնուք սորա խօսքերն։
(Պրակսիտելին)։
Օ՜, թող սորան։ Թող, հեռացիր։
Աստուածները քեզ հետ հաշիւ
Պիտ ունենան։ Եւ մի՛ ձգտիր
Թեթև ձեռքով, խաղ ու պարով
Մանգղել, ինչ որ ուրիշներին
Է պատկանում։ Թող տուր սորան։

ՊՐԱԿՍԻՏԵԼ (Կլիտիային)։
Աղատ կամքով ընտրիր, Կլիտիա։
Եթէ սրտիցս արմատաքի
Քանցես, հանես ծաղկափթիթ
Այն յոյսերը, որ քո ձեռքով
Սընուցել ես,—ապա գիտցիր,
Որ իմ բերնից և այդ պահուն
Կշտամբանքի խօսք չես լսիլ։
Ինքդ վճռիր։ Դեռ արևը
Մայր չմտած իմ նաւս արդէն
Ազատ ծովին յանձնուած կլինի...

ԿԼԻՏԻԱ Բայց առանց քեզ։

ՊՐԱԿՍԻՏԵԼ (Ձեռները նորան մեկնելով)։
Վճռեցիր դու։

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Կատաղած)։
Խաբուած, առակ-նշանակի
Նիւթ եմ եղած, ոտքի կոխան
Մարդ եմ դարձած։ Մռայլ դժոխք,

Քեզ եմ դիմում, դու օգնիր ինձ...
(Վազում է դէպի Գեղեսիպի տան որահակը և Պրակսիտելից ու Կլիտիայից ծածուկ, խլում է պատից կախած վաճառ հանած դաշոյններից մէկը)։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Ուրեմն այդպէս. ես կը մնամ։
Այստեղ մի նոր Աթէնք գտայ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Վերադառնալով բեկ-բեկ ձայնով)։
Մոռցիր, վատթար, ամօթալի
Առաջարկիդ լսիրշ խօսքեր։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Երբէ՛ք ինձնից այդ չես լսիլ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Ցարձակումը է է նորա վերայ մերկացրած դաշոյնով)։
Մեռի՛ր ուրեմն։

ԿԼԻՏԻԱ (Ընկնում է նոցա երկուսի մէջ պաշտպանելով իրենով Պրակսիտելին)։
Ո՛չ... Ի՛նձ առաջ...

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Օրօրուելով յետոյես է գնում)։
Ուրեմն նորան դու սիրում ես...
(Ինքն իրեն կորցրած)։
Որ նա ապրէ ու անդադար
Ծաղր ու ծանակ ինձ դարձնէ։
Ո՛չ. լսում ես։
(Նորից կամենում է յարձակուել Պրակսիտելի վրայ)։

ՊՐԱԿՍԻՏԵԼ (Առաջ անցնելով)։
Առաջդ կանգնած,
Կեցած եմ ես, Հերոստրատ։
Եթէ այդ է ուզած վառքդ,—
Զարկ, սպանիր և թող տկար
Այժիդ համբաւ ողջ Հելլադան
Առուահոսէ։ Ամեն բերան
Կաղաղակէ, որ ինձ մեռցրիր,
Որովհետև քո գրոցով
Ինձ յաղթելու այլ չունեցար։

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Բոլորովին ամօթահար և ոչնչացած)։
Օ՜...
(Դաշոյնն ընկնում է նորա ձեռքից. նա կանգնած է քարացած)։

ՊՐԱԿՍԻՏԵԼ (Քնքշութեամբ գրկած պահում է դողացող

(Կլիտեմնեստրան և ուղեկցում է Նորան մինչև իրենց տան դուռը)։

Նորան այժմ թող տուր մենակ.
Իսկ ինձ համար՝ մի վախենալ.
Այժմ արդէն զինաթափ է։

ԿԼԻՏԻԱ (Դռան առաջ, վրդովմունքով)։

Բայց և այնպէս...

ՊՐԱԿՍԻՏԵԼ (Շէշտելով)։

Վաղն ուրեմն։

ԿԼԻՏԻԱ (Մեղմով)։

Այո, վաղը։

(Մանում է տուն։ Մեսրոգորի ամից լսւում են կիթառի և սրնգի ձայներ, որ շարունակւում է մինչև գործողութեան վերջը)։

ՊՐԱԿՍԻՏԵԼ (Վերադառնալով՝ առաջ է անցնում)։

Ուրախ, փայլուն
Խնճոյքն արդէն սկսուել է։—

(Հերոստրատին)։

Անմիտ, արի դու ինձ լսիր
Եւ երգերի ձայնների մէջ
Թեթևութիւն, հանգիստ փնտռիր։
Կեանքը, կասեմ, կարծածիդ չափ
Դառնահամ չէ։ Սիրտդ միայն
Դու յաւիտեան ուհիներից
Մէկին չտաս...Սիրել գիտցիր
Միմիայն կեանքը, կեանքը միայն,
Եւ հաւատայ ասած խօսքիս,
Երբէք կեանքը մեզ չի խաբիլ։
Ձակտիդ վրայի կնճիռները,
Թող յուսարծարծ ժպտի փոխուին՝
Կիտած նոթերդ՝ հրուտ նայուածք,
Գանգուրներդ բոյր պսակով
Դու զարդարիր։ Անոյշ նեքտար,
Հրնետ ցայլքով պլլուած գինի
Առ ձեռքդ, եղբայր։ Հայեացքներս
Գեղեցկուհու, պարուկաքաւոյ
Պարարելով, մենք միասին
Այժ կունենանք փառքն ու հուչակ

Այպանելու։

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Մարած, յուսակտուր ձայնով)։

Փառքը ծաղրել
Կարող է նա, որի ափում
Սղմուած է նա։

(Ձեռքի հրամայական շարժումով)

Գնա։

(Պրակսիտելն ուսերը թօթուելով գնում է Մեսրոգորի տունը՝ նախադռնից)։

ՏԵՍԱՐԱՆ IX

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Մենակ)։

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Ձեռները վեր է բարձրացնում՝ աղօթողի պէս)։

Ո՛վ Արտեմիս, հզօր աստուած,
Շող ու լոյսի աղբիւր, կենդրոն,
Դու կատարիր ինձ խոստացածդ,—
Փոփոխամիտ ու յեղյեղուկ
Կին չես, անշուշտ։ Վրէժխնդիր
Եղիր դեմս լարած խարդախ
Նենգաժուութեան։ Քո իսկ պատուի
Վրէժխնդիր եղիր նոցա։
Շնորհիր ինձ այժ, կարողութիւն՝
Երկինք հանել քո մեծութիւն,
Պատուհասել ուխտազանցին
Ինձ փառք չնորհիր, փառք ապաբաղդ։
Քեզնից չնորհած կեանքս հանիր
Այս աշխարհի վէս հիւրերից
Շատ վեր, շատ վեր։

ՎԱՐԱԳՈՅՐՆ ԻՋՆՈՒՄ Է

Դ. ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Նոյն տեսարանը։

Մեսրոպոդորի տան կողմնակի դուռը ծածկուած է վարագուրով։ Նորա առաջ թափթփուած են մարմարիոնի խոշոր կտորներ։ Նոցանից մի կի վերայ դանուում է զանազան գործիքներ, մուրճ և այլն։

ՏԵՍԱՐԱՆ I

ԵՒՊԷՑՏ ԵՒ ՀԵՐՈՍՏՐԱՏ (*Դուրս են գալիս վերջինս տնից*)։

ԵՒՊԷՑՏ Դու՛ Հերոստրատ, իմ սրբազան
Պատերազմի մեծ դաշնակից,
Ճիշտն եմ ասում, ես առաւել
Նախամեծար կը համարեմ,
Թէ որ այժմ ինձ ցոյց տուած
Կաւից թրծած նախատիպար
Անդրու փոխան՝ ես դիտէի
Համակ ոսկուց և թանգագին
Աղնիւ, Հնդիկ փըղոսկրից
Կազմ ու պատրաստ՝ աստուածուհու
Վեհ արձանը։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Մեծ քրմապետ,
Շատ հեռու չէ և այդ օրը։

ԵՒՊԷՑՏ Ձանք ու հուանդդ ես գովում եմ.
Վերջին անգամ այս առաւօտ
Արշալոյսին թեթեւսոլիկ
Աթենացին իւր արձանի
Վրայից անցրեց գրոցի լեզուն։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Անկարելի բան ես պատմում։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Անկարելի բան ես պատմում։

ԵՒՊԷՑՏ Ազնիւ խօսքս քեզ երաշխէք։

ՀԵՐՈՍՏՐԱՏ (*Ծաղրական եղանակով*)
Աւելի վատ։

ԵՒՊԷՑՏ Ստրուկն յանկարծ
Բերնից թռցրեց։—Անդրին ամբողջ
Կազմ, պատրաստ է և փայլում է
Իւր մերկութեամբ։ Իսկ քոնը դեռ
Սկսուած էլ չէ։ Հէնց սկզբից
Խուժան ամբոխն հետաքրքիր
Իւր հայեացքին յագուրդ կտայ,
Աչքի առաջ պարզ տեսնելով,
Ինչ որ քնքոյշ գեղեցկութիւնն
Զգայնական քիմքն է չոյում։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Ամեն մի իր, անձ ու անհատ
Որ պատած է Արտեմիսի
Փող, չղարշով՝ անպարտ, անյաղթ
Միշտ կմնայ. իմ հաւատը,
Իմ յոյսն է այդ։

ԵՒՊԷՑՏ Աստուածուհու յոյսն էլ դու՛ ես։
Դժուար բան չէ նորա համար
Անօրէնի կերտած անդրին
Կայծակ-նետով ջարդել, փշրել,
Հետք ու փետուր անհետ անել.
Բայց և յաճախ մահկանացուի
Ձնչին բազուկն իւր բարկութեան
Ձէնք ու գործիք է դարձրել։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Ասելդ ինչ է։

ԵՒՊԷՑՏ Եթէ այսօր,
Պատահաբար, եկուոր հիւրի
Մարմարիոնը ջարդ ու փշուր
Դարձած գտնուի՝ շատ հեշտութեամբ
Ես երկիւղած խուժ ամբոխին
Կը համոզեմ, թէ երկնքից
Ինքն իր ձեռքով է ուղարկել
Աստուածուհին իւր բարկութեան
Շանթ ու կայծակն։

ՀԵՐՈՍՏՐԱՏ (*Զարմանքով նորան ոտքից-գլուխ*)։

Խելօք խօսք է։
Աստուածուհին ինձ առաւել
Մեծ յաղթութիւն կը պարգևէ
Մի այլ զէնքով։

ԵԻՊԷՑՏ Ոչինչ չունիս.
Քո ասածիդ պէս թող լինի՝
Բայց չմոռնաս, որ մրցակիցդ
Վտանգաւոր ախոյեան է։
Դու էլ գիտես՝ աստուածների
Պահած գառը գայլ չի ուտիլ։
Ով ինքըն է իւր գործի տէր,
Աստուածները նորան էլ միշտ
Օգնական են։ Ցարմարագոյն
Ժուկ-ժամանակ դու չես գտնիլ,—
Արևն արդէն խոնարհւում
Դէպի իւր մուտքն. ադմուկ, ժխոր
Վաղուց հետէ դադարել է,
Եւ սրբազան մեր մեհեանի
Շուրջը բոլոր հէնց այս ժամին
Անդորրութիւն է լոկ իշխում։—
Ահա որտեղ դու կգտնես
Քո թշնամու ձեռքի արդիւնք։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Մի փորձիր ինձ, մի հրապուրիր։

ԵԻՊԷՑՏ Միայն բարակ վարագուրով
Քողարկուած է իւր վարպետի
Անհոգ ձեռքով։ Այստեղ նայիր.
Տես ինչպիսի անհոգութեամբ
Գրոց, դուրիկ և ծանր մուրճն
Ընկած են վայր, ոտքի տակի։
(Առնելով մուրճը ձեռքը ծանր ու թեթև է անում)։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Ինձ փորձութեան մի տանիր դու։

ԵԻՊԷՑՏ Այժմ հեռու, շատ հեռու է։
Ես սրբազան անտառի մէջ
Հանդիպեցի նորան՝ ուրախ
Անհոգ, փայլուն ու վառ դէմքով
Զբօսնում էր նա թևանցուկ
Այն կնոջ հետ...

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Բացականչում է)։
Հ՞ը, նորա հե՞տ...

ԵԻՊԷՑՏ Ընտրելուհու հետ միասին,
Որը նորան ի տրիտուր
Իրեն անմահ դիցանուշին
Համհաւասար բաղդատութեան
Դնելու համար, հէնց այժմենից
Երկրիս վերայ իւր սիրելուն
Արքայութիւն է պարգևում։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Օ՜, տուր ինձ այդ ծանր մուրճը։

ԵԻՊԷՑՏ (Թեթև կերպով թողնում է, որ մուրճը ձեռքից խլէ)։
Աղնիւ, արդար բարկութեամբ ես
Լցուել, վառւում։ Դնա, փչրիր
Եւ խորտակիր գեղեցկութեան
Արքայութիւնն։ Եւ տապալիր
Ցափշտակած, խլած գահից.
Ես քաղաքում ուրախառիթ
Այդ համբաւին եմ սպասում։
(Դուրս է գնում ձախ կողմից)։

ՏԵՍԱՐԱՆ II.

ՀԵՐՈՍՏՐԱՏ. Յետոյ ՏԻՄԱՐԻՏԱ.

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Միայնակ)։
Այժմ արդէն վրէժխնդիր
Ես կը լինեմ։
(Բարձրացրած մուրճով վազում է դէպի ծածկուած արձանը և քողը բարձրացնում, պոկում։ Մի առ ժամանակ նա կանգնած է, որպէս քարացած՝ տեսածի զարմանքի տակ։ Ա յդպէս նա կանգնած է մի փոքր ժամանակ էլ անշարժ, առաջուայ պէս անթարթ նայելով արձանին, ինչպէս մի երկնային տեսիլի։ Կակազելով յուզումից)
Ես... ես... այնտեղ...
(Դողում է ամբողջ մարմնով։ Վերջապէս դժուարութեամբ շնչելով, գլուխը դարձնում է, կարծես ինքն-իրեն սոիպելով իրական աշխարհ դառնալ և նկատում է Տիսմարիտային, որ նոր էր դուրս եկել անից իւր անհասասա քայլերով։ Մուրճը ձեռքից չթողնելով, օրօրուելով, դիմաւորում է նորան և բացականչում է յուսահատութեամբ)։
Մայր իմ...

ՏԻՄԱՐԻՏԱ Որդիս, դու այստեղ ես։

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Զզվանքաբար սղմում է նորա ձեռքը)։

Նա այլ ես ինձ չէ սիրում։

ՏԻՄԱՐԻՏԱ Ժամանակ է. կարծեմ, որդիս,

Մոռնալ, ձգել սիրադրժին։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Աստուածուհին նոյնպէս, մայր իմ,

Աստուածուհին նոյնպէս նորան

Առաւել է սիրում, քան ինձ։

ՏԻՄԱՐԻՏԱ Ի՞նչ ես ասում։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Ահա այնտեղ

Դրուած է նա՝ նորա արձանն..

Դա Կլիտիայի արձանացրած

Տիպ ու պատկերն է իսկապէս,—

Ի՞նչ եմ ասում. շատ առաւել

Վեհ, քան Կլիտիան։ Թէ որ տեսնե

Կարենայի՞ր։ Ա՜խ, թէ ես էլ

Կոյր լինէի, ինչպէս դու ես։

Այդ արձանը ես փչրելու

Էի եկել. բայց, մայր, ասեմ,

Որ արձանը ինքն ինձ փչրեց

Ու տապալեց...

ՏԻՄԱՐԻՏ Դեռն ես տալիս։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Չէ, ես կուզեմ ինքս ինձ խաբել,

Թէ չեմ տեսել այդ արձանը։

(Արագ մօտենում ծածկուած արձանին)։

Հեռու, հեռու, բանդագուշանք։

(Առնում, ձգում է ծածկոցը)։

Բայց և այնպէս՝ ես տեսնում եմ։

Առաջս կանգնած, կեցած է նա.

Եւ յաւիտեան՝ հուր-յաւիտեան

Պիտի կանգնած մնայ նա միշտ։

Ոչինչ, ոչինչ է իմ ձեռքի,

Մտքի ծնունդ, արտադրութիւն։

ՏԻՄԱՐԻՏԱ Ի՞նքդ ես ձգտում, դու թուլամորթ,

Ստորացնել, քեզ վայր ձգել։

---

[1]) Զառանցում ես։

Քո կոյր մօրդ ականջ արա,—

Ահա մօտ է փառքիդ ժամը,

Վեհ, ուղղամիտ է քո գործը։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Հա, հա, հա, հա... Ձեռքիս գործ՞ը։

Անվերջ ջանքի ու տանջանքի

Միայն պտուղ, իմ գեղեցիկ,

Անանց ու վեհ արտադրութիւն,

Ահա քեզ մօտ եմ շտապում։

(Մուրճը ձեռքին վազում է դէպի իւր տունը)։

(Այս տեսարանի ժամանակ մթնշաղն արդէն ընկել է։ Տաճարից դուրս են գալիս երկու սարուկ, ձեռքերին մոմ վառ ջահ, գնում են ջահձողերի վրայ և գնում Գեոգեսիայի տունը)։

ՏԵՍԱՐԱՆ III.

ՏԻՄԱՐԻՏԱ յետոյ ՊՐԱԿՍԻՏԵԼ և ԿԼԻՏԻԱ։

ՏԻՄԱՐԻՏԱ (Կարծելով թէ դեռ ևս Հերոստրատի հետ է խօսում որի հեռանալը չէր նկատել)։

Այն վեհ գործը քեզ աւելի

Կլինի, անշուշտ, մխիթարող,

Քան թոյլ խօսքերս։

(Վերադառնում է իւր տունը։ Պրակսիտելն ու Կլիտիան երևում են աջ կողմից)։

ԿԼԻՏԻԱ Գիշերն արդէն

Վրայ հասաւ։

(Ինքնում է նեղ շաւղով)։

Ահա այսպէս

Քեզ հետ միասին առաջ երթամ

Անյայտ հեռուն. ոչ գիշերուայ

Խաւարն ու մութ, ոչ անախորժ

Վատ եղանակ, ոչ փրփրադէզ

Ծովի ալիք, ոչ սաստկաշունչ

Ահեղ մրրիկ, և դոցանից

Եւ ոչ մէկը ինձ փոյթ էլ չեն։

(Մութն աւելի ու աւելի է ընկնում ամպերի յետևից երևում է լուսինը)։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Այնտեղ, տես, որտեղ հեռուում,

Մայր-մտոցի հրաժեշտ տուող

Ճառագայթը ոսկէ չողեր
Սփռած չերտով զիկ է բռնել՝
Այնտեղ չքնաղ իմ Աթէնքն է։

ԿԼԻՏԻԱ (Նորա գլուխը բռնելով և իրեն դարձնելով)։

Օ՜, ուչ. երբէք քո հայեացքը
Պիտի չիշխէ հեռուն փախչել
Եւ թափառել։ Ինձ, ինձ միայն
Այդ հայեացքի վառ, փայլ չողեր
Պիտի զուգեն։ Տես, տես ահա
Արտեմիսն էլ իւր սրարշաւ
Կառքի վերայ սուրում-սահում
Եւ գաղտ աչքով, աչքի-պոչով
Մութ սաղարթի ցանցի միջից
Մարմարիոնէ իւր սեփական
Տիպ արձանին աչք է նետում։

(Մի փոքր բարձրացնում է արձանի ծածկոցն, այնպէս որ լուսինը լուսաւորում է)։

Մի լաւ նայիր, ով դիցանոյշ,
Արուեստագէտի գործը, արդեօք,
Քեզ գահացում չէ՞ պատճառում։

ՊՐԱԿՍԻՏԵԼ (Նստելով մարմարիոնի կոպտար կտորի վերայ։

Մի՛ բաց անիլ։ Ինչ որ այնտեղ՝
Մթնշողում, քողով ծածկուած
Ու պահուած է—վերջացած է,
Բայց դորա հետ այս օրուանից
Է՛լ կորած է։

ԿԼԻՏԻԱ Քո արձանը
Այս օրուանից միայն սկսած
Կեանք է բուրում,—նա ապրում է։

ՊՐԱԿՍԻՏԵԼ. Այո միայն ուրիշների
Աչքի համար։ Իսկ ինձ համար՝
Արդէն մեռաւ, անկենդան է։

ԿԼԻՏԻԱ Երբ նուաճած ազգ ու ու լեզու,
Իրրև մրրիկ իւր թափի հետ
Առած կտանէ յաղթանակով
Նոյնպէս նոցա, որ սկզբում
Ոտք դէմ դրած նորա առաջ

Կանգնած էին, երբ դղրդող
Օրհներգութեան ձայների հետ
Իւր նոր տունը՝ դռներն արձակ
Լայն բաց արած տաճարի մէջ
Ոտք կը դնէ...

ՊՐԱԿՍԻՏԵԼ Օ՜, լուռ կեցիր։
Այդ բոլորը թոյլ արձագանգ
Կլինէր միայն այն նուագի,
Որ հնչում էր հոգուս խորքում,
Մինչ դեռ նորան կերտում էի։
Թող հիւրընկալս բոլորովին
Կազմ ու պատրաստ ձեռքիս պտուղն
Իւր տաճարի չքեղ, հարուստ
Ձեղնայարկի տակը տանէ,
Խունկ ու կնդրուկ, ողջակիզի
Հոգսերն ամեն վրան առնէ։
Ես չատ կանուխ լիքն ըմպանակ՝
Բաղտի բաժկից բաժինս առի։—
Տականքները ես չեմ սիրում։

ԿԼԻՏԻԱ (Կողքէ-կողք նստում է Պրակսիտելի հետ և սեղմում նորան)։

Այսպէս երբէք դու չես եղել։
Երկիւղ, սարսափ է տիրում ինձ,
Պրակսիտել։ Այս երեկոյ
Ցոյս ունէի տեսնել հպարտ,
Հրճուող, ուրախ...

ՊՐԱԿՍԻՏԵԼ Դիտէս, Կլիտիա,
Անջատումի ամեն չիթից
Վիչտ է ժայթքում, ցաւ է ծորում...

ԿԼԻՏԻԱ Անջատումի։ Ի՞նչ անջատում...

ՊՐԱԿՍԻՏԵԼ. Անջատուելցի իմ աւարտած
Մաքիս զաւակ, ձեռքիս գործից։
Հրաժեշտիս ողջոյն տուի։
Նորա չքեղ հանդէսներին
Մէկ էլ մարող այն արևը
Որ ծովն ի՛ջաւ, կծագի նորից
Երբ ես այնտե՛ղ... հեռուում կլինիմ։

ԿԼԻՏԻԱ Ասա, խօսիր, Պրակսիտել,

Ի՞նչ ես փնտռում, նորից խուզում
Ամպով պլուած հորիզոնի
Գաղտնարանում։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Իմ Աթէնքս։

ԿԼԻՏԻԱ Բայց յիշո՞ւմ ես, որ ասացիր,—
«Այստեղ մի նոր Աթէնք գտայ»։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Օ՜, թէ գոնէ՝ լոկ մի անգամ
Տեսած լինէիր։

ԿԼԻՏԻԱ Այդչափ չքնաղ,
Գեղեցի՞կ է։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Մի ժամն ի՞նչ է.
Մի ժամ անգամ հեռու լինելն
Կորած բան է. ամբողջ աշխարհս
Պարփակում է իւր մէջ միայն։
Նորա դռնից ոտք դուրս դնելն՝
Աքսորանքի ցուպ առնել է։
Նորա օդը, օդը անգամ
Ողջ հմայք է տեղն ու տեղը։
Այնտեղ գեղը, հաճ ժպիտով
Ողջունելով ծնուող մանկան,
Այնուհետև ամեն քայլում
Դարանակալ հետևում է
Այդ ծնուածին մինչ գերեզման։

ԿԼԻՏԻԱ Օ՜, թէ քեզ հետ այնտեղ լինեմ...

ՊՐԱԿՍԻՏԵԼ (Շարունակելով)։
Սաղարթախիտ լուռ պարտիզում,
Լեռան լանջին կանգնած է մի
Պարզ, հասարակ, բարձրահայեաց
Պայծառ, ուրախ տուն՝ մենաւոր.
Նուրբ, սիւնազարդ անդաստակով [1]),
Որ երեսի վերայ ձգուած
Որբ է մնացել. թէ չէ՝ ուրախ
Մուրճի զարկերն կեանք կտային
Կ'աղմկէին են բոլոր տունը։
Դա — իմ տունս է։ Եւ նիրհում է
Այնտեղ ընկած անձև, կոպտար

[1]) Portique

Մարմարիոնը։ Նա եմ կոչին
Ականջ սրած սպասում է
Նոր կերպարանք ստանալու,
Ա՜խ, Թախիծը...Թախիծն օձի
Նման փաթթուել, սիրտս կրծում
Ու մաշում է՝ իմ մոռացուած,
Լքուած, թողած աստուածներիս
Սրտմաշուքով։ Ա՜խ, այդ Թախիծն...

ԿԼԻՏԻԱ (Արագ)
Քո Աստղկան խիստ կարօտով։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Նամանաւանդ նորա կարօտն...

ԿԼԻՏԻԱ (Տեղից վեր թռչելով)։
Դու սիրո՞ւմ ես, հա՞, դեռ նորան։

ՊՐԱԿՍԻՏԵԼ (Ելնելով տեղից)։
Միշտ սիրել եմ, պաշտել նորան։
Իսկ դո՞ւ, ասա, դո՞ւ չես սիրում
Փրփուր-ծնունդ Կիպրոսուհուն։

ԿԼԻՏԻԱ (Զուգմունքով)։
Նրա երկրաւոր նախատիպար
Կինը... արդէն սպասում է
Քեզ անհամբեր։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Այն կի՞նը, ի՞նձ։

ԿԼԻՏԻԱ Նորա կարօտն է քեզ մաշում։

ՊՐԱԿՍԻՏԵԼ (Հանաքով)։
Ախ, դու խենդ։ ուկ։

ԿԼԻՏԻԱ Խոստովանիր։
Ի դէմս նորա աստուածուհուն
Ես դու սիրում, ինչպէս իմ մէջ
Մի քիչ առաջ սիրում էիր
Արտեմիսին, որի հետ էլ
Անհետ կորայ ես քեզ համար։
Դու ինձ համար ամեն ինչ էիր,
Եւ քեզ ամեն ինչ ձօնեցի
Առ՝ դոցա և կեանքս էլ։
Թպրտացող իմ խեղճ սիրտս
Տար դիր նորա ողջակիզի
Բագնի վերայ, իբրև նոր զոհ։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Եւ ասողը Կլիտիան է, հա՞.

Ազատակամ ընկերուհի՛ս,
Որը գիտէր իմ նպատակս
Եւ համակուած էր ինձ սիրող
Վառ հաւատով։ Լո՛ւծ ես ուզում
Դնել վրաս՝ խանդոտ օղակ,
Շղթաներով՝ գործի սիրով
Բորբոք ձեռներս կապե՛լ կուզես,
Եւ իմ առաջ ընդ միշտ փակել
Գեղեցկութեան բարձունքում
Իւր բունն հիւսած յարկի դռնե՛րն։

ԿԼԻՏԻԱ Ա՜խ, ո՛չ՝ ներիր, ներիր ինձ դու։
Ներիր անմիտ զառանցանքներս։
Էլ մի՛ս անգամ դու չես կրկնիլ
Քո հարցերդ։ Իմ սէրն երբէք
Քեզ կաշկանդող շղթայի դեր
Չի կատարիլ։ Ստեղծագործող
Բազուկդ երբէք ես չեմ խլիլ
Ժողովրդից։ Ինձ դու միայն
Հէնց այն չնչին հանգամաքով
Ուրիշներից շատ վե՛ր, շատ վեր
Տարար, հասցրիր, որ ողջ սիրտդ
Ի՛նձ ձօնեցիր։ Ես լաւ գիտեմ
Դու այն մէկին չես էլ կարող
Սիրել այնպէս, ինչպէս որ ինձ։
Եւ քո սրտի գաղտնարանի
Բանալիքը չես հաւատայ
Նորան երբէք։ Թո՛ղ նա ինձնից
Շատ գեղեցիկ, չքնաղ լինի.
Եւ թէ նոյն իսկ աստուածների
Մեզ պարգևած ամեն մի օրն
Դու չարունակ աստուածուհու
Դիմագծերն առնես, կերտես
Նորա դէմքից, ապա գիտցի՛ր,
Չեմ նախանձիլ ամենևին
Նորան երբէք։ Միայն թէ ես
Հետդ մէկտեղ կարող լինիմ
Ծծել շուրջդ պատող օդը,
Եւ մթնչող երկոյին

Ցոգնած գլուխդ առնեմ գիրկս...
Քո յետևից քաշ գալ, ուր որ
Քայլերդ կուզես, ուր որ երթաս՝
Ինչպէս ստրուկ հաւատարիմ։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Կամենո՞ւմ ես...

ԿԼԻՏԻԱ Ուր որ լինես,
Ուր էլ չերթաս՝ իմ հայրենիքս
Էլ այնտեղ է։ Տա՛ր ինձ Աթէնք։
Թո՛ղ կապտին տայ հեռուում սրտիս,
Հոգուս հատոր, իմ անձկալի
Եփեսոսի անուշ ափերն,
Բայց ես գլուխս չեմ էլ թեքիլ
Նորա կողմը, չեմ էլ նայիլ։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Լա՛ւ մտածիր որոշումդ։

ԿԼԻՏԻԱ Չափել, կշռել, մտածել եմ։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Նաւահանգիստ իսկոյն և եթ
Կ'իջնեմ այժմ,—սլահապանը
Դեռ քնած չէ,—ես կիմանամ՝
Գուցէ վաղը, նաւս ուղղնել
Կարողանայ առագաստներն,—
Մեզ Ատիկէ հասցնելու։

ԿԼԻՏԻԱ Ի՞նչ։ Հէնց վա՞ղը։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Դողո՞ւմ ես դու,

ԿԼԻՏԻԱ Օ՜, ո՛չ. ոչինչ։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Լա՛ւ մտածիր.
Օտար երկրում սիրած բոլոր
Ծաղիկներդ իսկ չեն բուսնում։
Քո բնական հողդ սա է.
Եւ ինչ էլ ճոխ, փարթամ ծաղկել,
Բացուել ես դու։ Դու նորա հետ
Կապուած, կպած ես արմատով,—
Թէև նոքա քո աչքերից
Անտես լինեն,—արժէ միայն
Դանակ քաշել այդ արմատին
Եւ խեղճ ծաղիկն՝ անհետ կորաւ։

ԿԼԻՏԻԱ Ո՛չ, ո՛չ։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Ինչու՞ ուրեմն այդպէս

Դող ու սարսուռ է քեզ պատել։

ԿԼԻՏԻԱ Պատճառն այն չէ, որ իմ սրտիս
Ցաւ ու կսկիծ է, որ յանկարծ
Հայրենիքից պիտի բաժնուիմ,
Այլ այն միայն, որ դու այստեղ
Իմս էիր, ամբողջապէս,
Իմս միայն, իսկ, ահ, այնտեղ
Էլ իմս չես։

ՊՐԱԿՍԻՏԵԼ — Օ՜, սիրելիս։
Ես պարտք ունիմ, պարտք անվճար
Խղճիս, ինչպէս և քո առաջդ։
Ի՞նչ կանէի Եփեսոսը
Ես առանց քեզ։ Դու, դու դարձիր
Նորան կեանքիս դագաթնակէտ։
Ինչու արդեօք վառ արևի
Հապճէպ ընթացքն ես չեմ կարող
Կանգնեցնել և կամ ասել,
Հրամայել, որ թանգագին
Ժամանակի բոպէները
Էլ չը շարժուին։ Արդէն ահա
Վաղուայ օրը դարբասի մօտ
Կանգնած, ծեծում և բարձրաձայն
Պահանջում է արքայական
Իւր իրաւունքն։ Ի՞նչ է բերում
Նա մեզ համար իւր թիկնոցի
Տակ թաղցրած։ Մենք չգիտենք։
Սիրով նայենք մեր անցեալին։
Ինչպէս որ իմ ստեղծագործած
Անդրին դարեր պիտ հոլովէ,
Այնպէս մեր միտքն անցեալ բաղդի
Օրերն ամուր կը պահպանէ
Իւր սուրբ ծոցում։—Ես վայր կիջնեմ
Նաւահանգիստ, տեսնեմ ինչ կայ։

ԿԼԻՏԻԱ Բայց, ասա, ինձ, երբ կը դառնաս։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Շուտով կը գամ։

ԿԼԻՏԻԱ Քո լուր տալուն
Կսպասեմ ես։ Հէնց որ կանչես,—
Պատրաստ կլինեմ հետդ մեկնել։

ՊՐԱԿՍԻՏԵԼ Ե՛կ, մի անգամ էլ համբուրիր։

ԿԼԻՏԻԱ Հազար անգամ։

(Գրկախառնուում և համբուրուում են։ Պրակսիտելն առաջ ազատուում է նորա գրկից և շտապով նաւահանգիստ իջնում)։

ՏԵՍԱՐԸՆ IV

ԿԼԻՏԻԱ։ Յետոյ ՀԵՐՈՍՏՐԱՏ։

ԿԼԻՏԻԱ (Մենակ. Նորից նստում է մարմարիոնի կոորի վրայ։)
Զեփիւռ, դու արի, այստեղս հովցուր,
Բայց իմ խեղճ սրտիս՝ իսկի ձեռք չտաս,—
Նորան հաճելի է կիրք ու բոցեր։
Թէ իմ մաղերիս հետ խաղաս, կասեմ,—
Սիրելուս մատներն են չոյում նոցա։
Հովեր, դուք եկէք այստեղս համբուրէք,
Թող ձեր ամեն մի հով չունչ հոսանքում
Զգամ ես նորա ջերմ չունչ, գուրգուրանք.
Այդ չունչ, գուրգուրանք իմս են բոլոր։
Անտեսս լարերից օրհներգ էք հնչում
Ի պատիւ նորա. ձեր մեղմ հպումով
Ակացիոյ թուփը, արև-չողերի
Շամանդ փոշիներն, հուժկու ծովերի
Գանգուր ալիքներն,—իմ շուրջս բոլոր,
Բոլոր տարերքը նորան են երգում,
Իմ խեղճ սկանջիս նորան չչնջում։

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Ալեալուած և բոլորովին պլակերպ դեմքով, ծանր շունչ քաշելով, դուրս է գալիս իւր տնից՝ մուրճը ձեռքին։ Նա անհասատատ քայլերով առաջ է գալիս)։

ԿԼԻՏԻԱ (Նկատելով նորան, սարսափում և տեղից վեր է թռչում)։
Ո՞վ է այնտեղ։
(Ճանաչելով)։
Ի՞նչ ես ուզում։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Հ՞ը, այդ դու ես, հա, դաւաճան,
Պահապան ես դարձել այստեղ։
(Զարհուրած Նորա տեսքից)

ԿԼԻՏԻԱ
Օ՜...

ՀԵՐՈՍՏՐԱՏ Նորից դողում, սարսռում ես

Քո պաշտելի անձի համար։
Մի՛ վախենար։ Միայն կուզեմ
Դարձնել նորան ինչ որ իրեն
Է պատկանում։ Յետ տուր իրեն։
(Մեկնելով նորան մուրճը)։

ԿԼԻՏԻԱ Սա ի՞նչ բան է... ինչի՞ նշան...
Այս մուրճն ի՞նչ գործ ունի ձեռքումդ...

ՀԵՐՈՍՏՐԱՏ Պրակսիտելի մուրճովն ահա,—
Հէնց այս մուրճով,—ջարդ ու փշուր
Արի իմ գործս, աշխատանքս։
(Շպրտում է մուրճը)։

ԿԼԻՏԻԱ Դո՛ւ, քո՞ ձեռքով...

ՀԵՐՈՍՏՐԱՏ Հարիւր կտոր
Դարձրի նորան։

ԿԼԻՏԻԱ Բայց... բայց ինչո՞ւ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Ինչպէս էլ չուտ էր կատարւում,
Որքան ուրախ, թեթև սրտով։
Նըպատակիս արդէն հասայ։
Չէ՞ որ արժէր ջանք գործ դնել։
Հ՞ը, ճշմարիտ, չարժէ՞ր միթէ
Ջանք գործ դնել։

ԿԼԻՏԻԱ Օ՜, անմահներ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Նպատակիս չատ թանգ գնով
Ես չհասայ։ Իզուր չէր, որ
Դեռ իմ քնքոյշ մանկութեանս
Հէնց առաջին իսկ օրերից
Ուտիչ մի միտք ճնշում էր ինձ.
Իզուր չէր, որ ամբողջապէս
Նորան մատնուած, տարուէտարի
Ցանջւում էի ես անընդհատ
Ցաւերի մէջ և յուսահատ
Հծծում էի. իզուր չէր, որ
Երիտասարդ տարիներս
Ես զոհ բերի իմ ճիւաղին,
Ուրախութիւն և հրճուանք
Խիստ մտրակով ինձնից հեռու
Ես քշեցի. իզուր չէր, որ
Բաղդը ժպտուն չեմքիցս դուրս

Վռնդեցի։ Եւ այդ բոլորն
Այն պատճառով, որ գիտենամ՝
Թէ ով եմ ես,—մի խեղճ դաճաճ,
Անճար թզուկ, խլուրդների
Զարմ ու զաւակ, ուրիշ ոչինչ։
Թէև փոքրն ու չնչինը
Ատում էի բոլոր հոգւովս,—
Բայց և մեծին անընդունակ
Մարդ էի ես. մի խեղճ ճիճու
Փոչու, ցեխի մէջ սողացող,
Ողորմելի որդ ապիկար,
Որ արծուի թև ու թռիչք
Էր երազում։ Մեծ հսկայի
Գարշապարը կոխեց, ջնջեց
Խեղճ գոյութիւնս և ես ինքս
Ծաղր ու ծանակ ինձ դարձրի։

ԿԼԻՏԻԱ Որչափ հիւանդ ու ընկճուած ես։
Թէ որ հնարք ունենայի
Քեզ այդ ցաւից բժշկէի...
Եթէ վատ բան կամ չարութիւն
Քեզ արեցի, իմացիր, որ
Դիտմամբ եղած չէր արածս։
Քո անողոք վատ թշնամիդ
Հէնց քո մէջդ է բնակւում։
Ինձ հաւատա, Հերոստրատ,
Երբ որ սրտիցդ հանես, ձգես
Սև նախանձը, որ դէրի պէս
Սիրտդ փորում ու ծակում է,
Նորից ուրախ, անհոգ օրերդ,
Երիտասարդ ոյժերդ կը գան։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Եւ եթէ ես կարող լինեմ
Այդ կատարել...

ԿԼԻՏԻԱ Կարողացիր։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Նորան կը տամ անմահութիւնն
Ցաղթութեան հետ, խոնարհութեամբ
Գլուխ կը ծռեմ ունայն, չնչին
Ու վաղանցուկ կեանքի լծին։
Ա՜խ, անաստուած, իմս եղիր,

Դու միայնակ։ Քեզ սիրում եմ.
Բայց սիրում եմ խելառի պէս,
Զար նախանձով, զզուանքով լի։
Ի՛մս եղիր։ Թող քո ջերմին,
Հրուա կրծքիդ անցրած բոպէս
Անանց հաչուեմ։ Ի՛մս եղիր։
Թող ես մոռնամ, յափշտակուեմ
Կրքոտ հեշտանք փափկութեան մէջ
Իմ գոյութիւնս. սիրոյ անանց,
Շքեղ, պայծառ խնճոյք տար ինձ։
Բայց, մէկ ասէն,—յիմար, անմիտ,
Ի՞նչ անազան հիւրի նման
Դուռ ես ծեծում...

ԿԼԻՏԻԱ (Ցեռ-յետ է բաշխում, դանդաղութեամբ գլուխը շարժելով)։
Ես չեմ կարող։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Ա՞յժմ դարձար հաւատարիմ։
Կոյր-աչիկայ, դու կարծում ես,
Արժէք ու գին կը տայ սիրուդ։
Երբ և իցէ նա կը սիրէ՞
Ինչպէս ես եմ սիրել՝ խելառ։
Դու ինձ համար ե՛ւ կեանք էիր,
Ե՛ւ փրկութեանս ամուր խարիսխ,
Ե՛ւ լոյս անչէզ, ե՛ւ կարևոր
Քան սեփական սրտիս բաբախ։
Միակ կինը երկրիս վերայ։
Նորա համար... Զմհ կը բերէ
Իւր ապագայ փառք ու համբաւ
Սիրուդ համար. կը մոռանայ
Իւր արուեստը լոկ քեզ համար։

ԿԼԻՏԻԱ Ո՛չ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Եւ դարձեալ...

ԿԼԻՏԻԱ Սիրում եմ ես,
Սիրում Նորան։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Թէև դորա
Փոխարէն քեզ արհամարհէր ..

ԿԼԻՏԻԱ Սիրում եմ, սիրում Նորան։...

ՀԵՐՈՍՏՐԱՏ Թէև լքէր, դէն շպրտէր...

ԿԼԻՏԻԱ Սիրում եմ, սիրում Նորան։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Կին դու, բաւ է, ինձ մի տանջիր։
Գոնէ յոյսի մի չնչին կայծ
Շնորհիր, տուր ինձ, որ ես Նորա
Մութ շողերով խղճուկ օրերս
Քաշ տամ անցնեմ։ Մի մտածիր,
Պաշտած կուռքդ կերթայ չուտով
Եւ կմնաս դու մէն-ւենակ.
Նորա հմայքից կամաց-կամաց
Աչք կը բանաս և մի ուրիշ
Ներող սիրոյ ձեռք կը մեկնես...

ԿԼԻՏԻԱ Ես Նորա հետ Աթէնք կերթամ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Բացականչելով)։
Ո՛չ. չես գնայ։

ԿԼԻՏԻԱ Բոլոր սրտով
Խղճում եմ ես անբաղդ վիճակդ,
Բայց չեմ կարող մեղմել Նորան։
Արհամարհիր, ատիր դու ինձ։
Չեմ էլ կարող այլ բան սպասել,
Արարքս միայն դրան է արժան։
Բայց ես պէտք է Նրան հետևեմ,
Հետը մեկնեմ։ Պարտաւոր եմ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Ծիծաղելով)։
Զարմանալի արար-աշխարհ։
Ողջ աշխարհս մէկի համար
Իսկ ինձ համար—և ոչ մի բան,
Ո՛չ սեղանի փշրանք չնչին,
Ո՛չ մի թերթիկ չքեղ փնջից։
Այդպէս բաշխել միայն գիտէ
Վեհ դիցանոյշն իւր պարգևներ։
Եւ դեռ, ապուշս, սիրում էի
Հաւատալ Նորա արդարութեան։
Այդ դեռ քի՛չ է—պաշտում էի։
Այո, հարիւր անգամ աւել
Ջերմ, բոց սիրով էի սիրում,
Պաշտում Նորան, քան ինքն ինձ։
Ճիշդ քեզ նման մի խորամանկ,
Նենգ ու խարդախ կին է միայն...
Թող անիծուի Նորա անունն։

ԿԼԻՏԻԱ Լռիր, անմիտ, խելակորոյս։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Արդարացի բաժինս՝ կուզեմ։
Այդ տուր, գոնէ, ով դիցանոյշ։
Բայց այլ ես ոչինչ, ոչինչ
Ես այդ մասին չեմ էլ խնդրում։
Ի՛նքս կարող կլինեմ բանալ
Կծկուած ձեռքդ։ Թէ կարծում ես,
Որ անզօր եմ՝ ոյժ, զօրութիւն
Ինձ չտալով։ Դու կարծում ես
Հռչակաւոր ձեղնայարկդ՝
Քո տաճարը քեզ կը փրկէ,
Կը պահպանէ՞... Ով չի կարող
Ստեղծագործել՝ քանդել, աւրել
Միշտ կարող է։

ԿԼԻՏԻԱ Ի՞նչ եմ լսում,
Սարսափելի բան ես ասում։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Եւ սարսափով ողջ մարդկութիւն
Կուզեմ կապել ու կաչկանդել,—
Ահա թէ փառք։ Կեանք ունենալ
Եւ ազգերի սրտի խորքում
Դող ու սարսափ միայն ազդել
Եւ այն էլ միշտ, հուր-յաւիտեան,—
Ահա որն է կեանք ասածդ։
Մի գիշերում ստեղծագործող
Վարպետի մէջ ողջ աշխարհի
Հրաշակերտի միտքը ծնեց։
Մի գիշերում ստեղծագործած
Հրաշակերտը բոց-կրակի
Փայփլուքով կը զարդարեմ։
Լսում ես թէ, խուլ ես դեռ ես,
Սուտ, խաբեբայ, աստուածուհի։
Թող վառ ջահից սփռող բոցը
Թող կեղծ փայլդ իբրև վառուող
Անշէջ մի ջահ՝ իմ անունս
Դարեր անանց անմահացնէ,
Եւ միշտ յիշուի։

ԿԼԻՏԻԱ (Նորա առաջը կորելով)։
Կանգնիր, անմիտ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Թող ինձ, թող տուր։

ԿԼԻՏԻԱ (Աշխատելով զօրով պահել)։
Օ՜, օգնութիւն...

ՀԵՐՈՍՏՐԱՏ Դէն, դէն գնա։ Մի խանգարիր.
Այժմ միայն ճանաչեցի
Անմահութեան ճանապարհը։

(Արագ դիմում է դեպի բեմի խորքը, պոկում է ձողաջահի վրայից վառուող կերոնը և, ձեռքին բռնած, սանդուղքներով վազելով բարձրանում, մտնում է տաճարը և դուռը փակում իւր յետևից)։

ՏԵՍԱՐԱՆ V

ԿԼԻՏԻԱ Ցետոյ իսկոյն ՏԻՄԱՐԻՏԱ, քիչ յետոյ ԿԱԼԼԻՑ, ԴԻՕԿԼ։ Քաղաքացիք։ Ժողովուրդ, ՄԵՏՐՕԴՈՐ, ԳԵԳԵՍԻՑ, ԵՒՊԻՑՏ։

ԿԼԻՏԻԱ (Ինքն իրեն կորցրած, վազում է դեպի ձախ. բարձրաձայն)։
Օ՜, օգնութիւն... օգնութիւն, վայ...
Օ՜, մայր իմ, մայր Տիմարիտա։
Սարսափելի ճակատագիր։
Ա՜խ, չուտ հասիր, կանչիր նորան։

ՏԻՄԱՐԻՏԱ (Դուրս գալով իւր անից)։
Ո՞վ էր ինձ մայր կանչողն հիմա։

ԿԼԻՏԻԱ (Շնչասպառ)։
Հարցնելու ժամանակ չէ։
Կանչիր նորան։

ՏԻՄԱՐԻՏԱ Ուրեմն դու՞ ես։
Եւ դեռ ես վստահացա՞ր...

ԿԼԻՏԻԱ Որդիդ... որդիդ խելքն է թռցրել...
Ինքը իրեն չէ ճանաչում...

ՏԻՄԱՐԻՏԱ Ի՞նչ գործ ունիս դու որդուս հետ։
Դէ, հեռացիր, գնա, կորիր։

ԿԼԻՏԻԱ Դու, դու միայն նորան փրկել
Դեռ կարող ես։ Մի վայրկեանի
Գործ է միայն... Դէ, չտապիր։

ՏԻՄԱՐԻՏԱ Բայց ո՞ւր գնամ։
Դէպի տաճա՞ր...

ԿԼԻՏԻԱ Խելագարը կամենում է

Անհետ կորցնել ողջ տաճարը։

ՏԻՄԱՐԻՏԱ Գնա, կորիր, իմ չէմքիցս։

(Բեմի խորքում ձախ կողմից երևում են քաղաքացիք. նոցա առջև և Կալչ ու Դիոկլ)։

ԿԱԼՉԻՑ Բարդ-բարդ ծուխ է քլքլում։

(Բոցը տաճարի առաստաղի տակից դուրս է ժայթքում)։

ԿԼԻՏԻԱ (Նկատելով այդ բանը)։

Սարսափելի բան պատահեց։

Այժմ արդէն, էլ չատ ուշ է։

ԶԱՆԱԶԱՆ (Աղաղակելով և իրար ընդհատելով)։

ՀԱՑՆԵՐ Տաճարն է... Վա՛յ մեր տաճարն է

Այրում-վառում։—Տաճարն է, ա՛խ...

ՏԻՄԱՐԻՏԱ Կէս գիշերին ինչ են այսպէս

Գոռում գոչում բարձրացրել։

ԿԼԻՏԻԱ Մեծ տաճարն է բոցավառուել։

ՏԻՄԱՐԻՏԱ Սուտ են ասում...

ԿԼԻՏԻԱ Որդի՛դ, որդիդ

Հրդեհ ձգեց։

ՏԻՄԱՐԻՏԱ Սո՛ւտ ես ասում,

Որ այդպիսով կորցնես նորան։

ԿԼԻՏԻԱ Թշուառակա՛ն, ես քեզ միայն

Հաւատացի և գաղտնիքը

Քեզ ասացի,—ուրիշ ոչ ոք

Չի իմանալ։

(Կրակը հետզհետէ բորբոքւում է. շուտով ամբողջ ձեղունը կորչում է բոցերի մէջ)։

ԱՄԲՈԽԸ Հրդեհն անցրէք։—

Մեծ տաճարը փրկելու ճար,

Հնար գտէք։—Է՜յ, օգնութիւն։—

Դէ՛, շուտ հասէք։—Ա՛յս կողմն եկէք...

(Տաճարի սանդուղներից վեր բարձրանալով, հրում են դռները)։

ՈՒՐԻՇ ՀԱՑ Դռներն ամուր, պինդ փակուած են։—

ՆԵՐ Ներսից սողնակ է անցրած։—

Զարդ ու փչուր արէք շուտով։

ՏԻՄԱՐԻՏԱ (Հանգիստ ու անխռով)։

Այդ անողը իմ որդին չէ։

ՀԱՑՆԵՐ Դժբաղտութի՜ւն....

(Ամբոխը արագ աճում է, վերջը ամբողջ բեմը բոլորովին լցնում Հաւերը իրար յետևից գալիս են՝ Եպիստը նախաբեմի դռնից, ձախ կողմից Գեգեսիկ և Մեարոդոր՝ իրենց տնից։ Ընդհանուր իրարանցում. ամենքը դէս ու դէն են վազում, յուսահատութիւնից ձեռներ-մատները ջարդելով)։

ԱՄԲՈԽԸ Կացին տուէք, սանդուղտ բերէք։

ԵՒՊԷՑՏ Սրբավայրը բոցերի մէջ

Անհետ կորաւ։ Փո՛ղ փչեցէք,

Շեփորները հնչել տուէք։

ԳԻԳԵՍԻՑ Ի՞նչ, աշխարհիս վերջն է հասել։

ԿԼԻՏԻԱ Ո՞ւր է, արդեօք, Պրակսիտելն։

(Ճղում անցնում է ամբոխը և անհետանում բեմի խորքում)։

ՄԵՏՐՕԴՈՐ Օ՜, սարսափի անմանց գիշեր։

Արիւնագոյն բոցերի մէջ

Սրբավայրն է անհետ կորչում.

Մի սրբավայր, որի հատը,

Հաւասարը չունի աշխարհս։

(Բեմի յետևից լսւում է փողերի անընդհատ ձայները)։

ԺՈՂՈՎՈՒՐԴ Օ՜, չար, նենգ բաղդ... Դժբաղդութիւն։

Մենք կորած ենք։—Վա՛յ մեր գլխին։

Երկնքիցն է թափւում հուրը—

Աստուածների բարկութիւնն է։

ՄԵՏՐՕԴՈՐ (Ձայնը բարձրացնելով)։

Բոլորովին իզուր է ձեր

Ողբ, աղաղակ։ Աստուածների

Ցասումը չէ խառնուած այնտեղ,—

Դա մի մարդու անլուր, ստոր

Մեծ չարութեան, ձեռքի գործ է։

Անողն, անչուշտ, Եփեսոսի

Թշնամին է, մեր մեծութեան

Չար նախանձորդ։ Որոնեցէ՛ք,

Գտէ՛ք նորան։

ԺՈՂՈՎՈՒՐԴ (Կատաղած)

Որոնեցէ՛ք.

Գտէ՛ք շուտով։ Մահ, մահ նորան։

Հազարաւոր կտոր արէք

Պիղծ մարմինը։

(Անընդհատ կացնի հարուածների տակ տաճարի երկփեղկ դռները բացւում են երկուսն էլ Շէմքի վրայ երևում է Հերոստրատը, վառուող ջահը բարձր բռնած. դէմքը կորած մուրի մէջ, մազերը գզգզուած։ Ամբոխը առրոպէ զարհուրած նորա տեսքից յետ յետ է քաշւում)։

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Վազելով իջնում է սանդուխներից, վայրենի ուրախութեամբ շարժելով ձեռքի ջահը)։

Մեղաւորին էք որոնում։
Գիտցէք, ուրեմն, լաւ իմացէք
Ե՛ս եմ, ես այդ, Եփեսացի
Հերոստրատս,—ձեր մտքերում
Թող սլինդ դրոշմուի, արձանանայ
Իմ անունս, որ յաւիտեանս
Էլ չմոռնաք։—Ե՛ս եմ արել,
Ես՝ Հերոստրատս։ Եւ՝ արածովս
Պարծենում եմ։

(Ընդհանուր զայրոյթի և սարսափի աղմուկ։ Մի ակնթարթում կատաղած ամբոխը շրջապատում և կալանաւորում է Նորան։ Տիմարիտան, որ մինչ այդ հպարտ ուղիղ կանգնած էր նախաբեմի վրայ, այդ խօսքերը լսելիս, առանց ձայն հանելու, ինչպէս կայծակնահար, գետին է գլորւում։ Տաճարի առաստաղը ահագին աղմուկով փուլ է գալիս)։

(ՎԱՐԱԳՈՅՐՆ ԻՋՆՈՒՄ Է)

Ե. ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Ոչ շատ մեծ դահլիճ։ Ձախ կողմը՝ առաջամասում մի դուռ, աջ կողմը՝ առաջամասում մի ուրիշ աւելի փոքր դուռ։ Բեմի խորքում երկար սիւնաշար, սիւների մէջը լայն անցքերով, ոչ շատ բարձր ծովեզր, որտեղից բացւում է տեսարան դէպի ծովը։ Նաւերի առանձին-առանձին երևացող կայմերի կատարներից նկատելի է, որ շինութիւնը կառուցուած է հենց ծովափին՝ նաւահանգստի մօտ։ Յետևի մասում, դեռ ևս երևում է ծխացող և արևի շողերով լուսաւորուած տաճարի կողմնակի ճակատի աւերակները։ Ձախ կողմը բարձրավանդակի վրայ, առանձին տեղ դատաւորների համար։ Աջ կողմը փայտէ նստարան։

ՏԵՍԱՐԱՆ I

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Ճղթայակապ, գլուխը նստարանին յեց, քնած է յատակի վերայ։ Երբեմն-երբեմն ձախ կողմից լսւում է դուրսն աղմկող ամբոխի խուլ ձայնը։ Ձախ դրան դրսի կողմից դղրդոցով բացւում է դրան ծանր սողնակը)։

ՄԵՏՐՕԴՈՐ (մտնում է զինուորի ուղեկցութեամբ)։

ՄԵՏՐՕԴՈՐ (Դիտելով Հերոստրատին)։
Քնած է, հա՞։

ԶԻՆՈՒՈՐ Հէնց որ այստեղ
Բերինք նորան և ամբոխի
Զայրոյթ-վրէժից ազատեցինք,
Իսկոյն քնեց մահանման
Խորունկ քնով։

ՄԵՏՐՕԴՈՐ Բայց չփորձեց
Փախուստ տալու։

ԶԻՆՈՒՈՐ Առաջներս
Ընկած կղաւ, կարծէք, հարսնիք
Կամ հրաւէր գնալիս լինէր։

ՄԵՏՐՕԴՈՐ Օտարոտի բան ես ասում։
Մի գուցէ թէ՝ ձեր աչալուրջ

Հսկողութեան գլխին անուշ,
Քաղցր երազ բերել կուզէր...

ԶԻՆՈՒՈՐ Իզուր. անմիտ փորձ կլինէր։

(Ցոյց տալով բեմի խորքը)։

Խոր, անյատակ գահավէժ է
Այնտեղ՝ Ներքև...

ՄԵՏՐՈԴՈՐ (Ներքև նայելով և յետոյ ցոյց տալով աջակողմի դուռը)։
Իսկ այս դռուռը։

ԶԻՆՈՒՈՐ Արթուն հակող պահապան կայ
Եւ խիստ ամուր կողպէք ունի։

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Քնի մէջ)։
Մինչ յաւիտեան... հաւատարիմ...

ՄԵՏՐՈԴՈՐ Զառանցում է։

(Լսւում են ամբոխի աղմուկի ձայներ)։

Ամբոխն հազիւ
Կարող լինենք զսպած պահել։
Իրաւացի պահանջ էլ է,—
Շուտ դատաստան կարել, պրծնել։
Բայց բանն այն է, որ դորա հետ
Ազատ մուտք չեն տալիս գալու
Դատողներին։—Դուք ճանապարհ
Բացէք եկող դատողներին։—
Ես կը մնամ առ այժմ այստեղ։

ԶԻՆՈՒՈՐ Այս րոպէիս։

(Դուրս է գնում ձախ կողմից)։

ՄԵՏՐՈԴՈՐ Զարթիր։ Վեր կաց։
Արդէն լոյս է։ Առաւօտ է։

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Փակ աչքերով)։
Առաւօտ է...

ՄԵՏՐՈԴՈՐ Ե՛լ, եկ. զարթիր։

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Աչքերը բանալով)։
Ո՞վ էր ասում առաւօտ է։
Դռռ էիր, հա։

(Ախորժանքով ձգուելով)։

Օ՜, շատ վաղուց,
Վաղուց էր, որ այսպէս հանգիստ
Չէի քնել։ Ի՜նչ կազդուրիչ
Անուշ քուն էր։—Սա առաջին
Անգամն է, որ երկար, անթիւ

Դառն օրերից յետոյ միայն
Այսպէս հանգիստ քնում եմ ես,
Վաղուան տանջող յաջողութեան
Հոգսից ազատ։ Արժէ, անչուշտ,
Որ մարդ հանգիստ, անդորր առնէ
Իւր կատարած գործից յետոյ։

ՄԵՏՐՈԴՈՐ Դու դեռ ես վառանցում ես։

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Կես բարձրացած, նայում, դիտում է տաճարը)։
Ա՜խ, ոչ։ Միայն դեռ նոր ծագող
Արեգակի շող ու լուսով
Հազիւ կարող եղայ զգալ
Իմ անկաշառ հայեացքովս
Արած գործիս ողջ մեծութիւն։
Գոհ եմ, գոհ չատ. արած գործս
Կատարեալ է։

ՄԵՏՐՈԴՈՐ Մի ականջ դիր,
Թելքի-պտուկ։ Ժողովուրդը
Մի ընդհանուր բերան դարձած
Անէծքով է արտասանում
Քո անունդ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Հրացայտ աչքերով)։
Իմ անո՞ւնս։
Այն էլ ամբողջ ժողովո՞ւրդը։
Օ՜, գիտէի, ըզգում էի։

ՄԵՏՐՈԴՈՐ Այս րոպէիս դատաստանի
Առաջ պիտի ելնես, գիտես։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Եւ անվրդով սպասում եմ։

ՄԵՏՐՈԴՈՐ Զէիր ուզել սրտիդ բեռը
Մի փոքր ինչ թեթևցնել։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Հը՜մ... քո առաջ։ Չես ըմբռնիլ։

ՄԵՏՐՈԴՈՐ Մի մոռանար, Մետրոդորն եմ,
Որ ամենից խոստովանած
Թելք-հանձարով դժուարագոյն
Առեղծուածներ եմ բաց արել։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Խղճում եմ քեզ բոլոր հոգով։
Միայն ինքդ ես քո հոգածուն
Ու գնահատողդ։ Քո յիշատակդ
Կանցնի չուտով, կանցնի նոյնպէս

Իմաստութիւնդ։ Հպարտացիր,
Քանի դեռ ես մոռացութեան
Անլոյս, խաւար, անհոգ ովկիան
Չէ կուլ տուել տարիներդ։

ՄԵՏՐՈԴՈՐ Չէ որ, դժբաղդ, ես էլ նոյնպէս
Դատողներիդ թուի մէջ եմ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Չէի ուզիլ մեր դերերը
Լոկ մի բոպէ փոխուած տեսնել։

ՏԵՍԱՐԱՆ II

ՀԵՐՈՍՏՐԱՏ, ՄԵՏՐՈԴՈՐ, ԹՐԱՍՈՆ, (և ուրիշ երեք հոգի էլ վեհ, յամրաքայլ մտնում են ձախ կողմից)։—ԵՐԿՈՒ ԶԻՆՈՒՈՐ. (մտնում են նոցա յետևից և կանգնում դռան երկու կողմը)։

ՄԵՏՐՈԴՈՐ Դատաւորներդ եկան արդէն։

(Դատաւորները լուռ նստում են իրենց տեղերը։ ԹՐԱՍՈՆԸ նստում է մէջ տեղը. առաջին նստարանը մնում է Մետրոդորի համար)։

ՄԵՏՐՈԴՈՐ (Դիմելով դէպի իւր աթոռը)։
Մեծարելի Թրասոնին
Ողջոյն յաւէտ։

ԹՐԱՍՈՆ (Գլխի շարժումով շնորհակալութիւն յայտնելով)։
Երբէք դեռ ես
Այսչափ թախիծ, վիշտ ու մորմոք
Չենք զգացել մենք սրբազան
Դատաստանին ձեռք զարկելիս։
Դեռ մեր միտքը չէ կամենում
Հաշտուել, տեսնել,—թէ նոյն իսկ իւր՝
Եփեսոսի ծնունդ զաւակ,
Մեր իսկ արիւնն այդ անաստուած
Գործի տէրն է։ Երբ մեղանից
Ամէն մէկս վստահօրէն
Կարող էինք չը հաւատալ
Այդ ամենին։ Բայց դու ինքդ,
Քո բերանով քեզ մեղաւոր
Ճանաչեցիր ու յայտնեցիր։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Եւ նորից նոր, կրկին անգամ

Դատողներիս առաջ կասեմ
Բարձր ձայնով.—Ես արեցի,
Չեմ թագցնում այդ ամենը։

ԹՐԱՍՈՆ Քեզ ո՞վ դրդեց։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Եւ ոչ մէկը։

ԹՐԱՍՈՆ Բացի քեզնից ուրիշ ոչ ոք
Տեղեկութիւն անգամ չունէր
Քո չարամիտ գործի մասին։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Ո՛չ ոք։ Միայն ես գիտէի
Դիտում ու գործս. և արեցի.
Չեմ էլ զղջում դորա համար։

ԹՐԱՍՈՆ Ասա, դու մեզ, ինչ պատճառով,
Ի՞նչ դիտումով անվիրջ, յաւէտ
Անէծքի տակ դրիր գլուխդ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Միևնոյն չէ՞ ձեզ համար, թէ
Ի՞նչ դիտումով կամ պատճառով,—
Ահա հէնց այժմ իմ իսկ գլխովս
Ցանցանքս քաւել պատրաստ եմ ես։
Երկար հարցեր էլ չ՚տաք ինձ։
Առէք կեանքս և այդ գնով
Փրկանք տուէք այն ամենին
Ինչ որ արի, կատարեցի։

ԹՐԱՍՈՆ Այդպէս, անշուշտ, չէիր խօսիլ,
Թէ որ անձդ արդարացնելու
Հնար ու ճար ունենայիր։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Ի՛նքս եմ ինձ արդարացնողն։

ԹՐԱՍՈՆ Բայց ո՞ւմ առաջ, եթէ ոչ քո
Առաջդ նստած դատողներիդ։

(Աչքերը երկինք դարձնելով)։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Աստուածուհու աչքի առաջ։

ԹՐԱՍՈՆ Հը՞մ, նորանով, որ անսահման
Անարգանքի՞ ենթարկեցիր։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Դորա փոխան և անսահման
Սիրում էի, պաշտում նորան։

ԹՐԱՍՈՆ Դեռ հայհոյել, սրբապղծել
Դու կարող ես նորա անունն։
Բայց մեզ պատճառն, պատճառն ասա
Քո նենգամիտ չար խորհրդի։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Մահուան դիմաց կանգնած բոպէն
Խոր լռութեամբ սքողելն, անշուշտ,
Շատ առաւել արժանի է։

(Թրասոնը նշան է տալիս զինուորներին, որոնք բաց են անում դուռը։ Շէմքի վրայ երևում է Տիմարիտան, որին զինուորներից մէկն առաջնորդում է դատաւորների մօտ)։

ՏԵՍԱՐԱՆ Ш.

ԱՌԱՋԻՆՆԵՐԸ և ՏԻՄԱՐԻՏԱ

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Ցնցւում է մօրը տեսնելիս)։
Օ՜...
ԹՐԱՍՈՆ Ճանաչո՞ւմ ես դու այս կնոջն։
ՀԵՐՈՍՏՐԱՏ Իմ մայրս է, մայրս է դա։
ՏԻՄԱՐԻՏԱ (Բոլորովին գունատուած, բայց կամքի ոյժով ծածկում է իւր յուզումը. հանգիստ ձայնով)։
Նորա մայրն եմ։
ԹՐԱՍՈՆ Գիտե՞ս, ինչո՞ւ,
Տիմարիտա, այստեղ ես դու։
ՏԻՄԱՐԻՏԱ Գիտեմ, այո։
ԹՐԱՍՈՆ Դու չե՞ս կարող
Նորա արած սարսափելի
Գործի պատճառն մեր ամենքիս
Մտքի առաջ պարզել, մեկնել։
ՏԻՄԱՐԻՏԱ Ո՞վ անաչառ, դատաւորնե՛ր,
Մի՛ հաւատաք նորա խօսքին։
Իզուր տեղը ցնորք-տապից
Խելքը կորցրած, սուտ է ասել,
Մատնել իրեն ու զրպարտել։
ԹՐԱՍՈՆ Ինչո՞վ, արդեօք, կարող ես դու
Ասած խօսքերդ ապացուցել։
ՏԻՄԱՐԻՏԱ Ինձնից նորան ժառանգութեան
Անցած չիտակ, անշեղ ոգով։
Այն առաջին իրն, առարկան,
Որ գրաւեց իւր մանկական
Եւ առաջին անմեղ հայեացքն՝
Սուրբ տաճարն էր։ Եւ ես նորա
Օրօրոցը օրօրելիս

Երգել եմ միշտ աստուածուհուն,
Նորա լոյսի, չքնաղ կայան։
Եւ երբ արևն արշալոյսին
Իւր վարդամատ փայլ շողերով
Դիցանոյշի սուրբ տաճարի
Եռանկիւնի դրուագաւոր
Բարձր ճակատն ալ ծիրանի
Երանգներով զուգում, պճնում,
Զարդարում էր, իւր մանկական
Մանրիկ թաթերն ամեն անգամ
Նոր հրճուանքով դէպի նա էր
Պարզում, մեկնում և ծափ զարկում։
Իմ աչքերս հանգան անյետ
Եւ մարեցին, որ նոր ի նոր,
Կրկին անգամ վառուին, փայլին
Նորա պայծառ աչերի մէջ։
Եւ ինչպէս որ խիստ հոգատար
Պարտիզպանը իւր մարգերի,
Ածուների ծաղիկներից
Բոլորի մէջ մէկը միայն՝
Հազուագիւտը գգւում, պահում,
Պահպանում է, այնպէս էլ ես
Իւր հոգու մէջ միակ ձգտում,
Իղձ եմ դրել, անել, մեծցրել,—
Իւր անունը փառաւորել,
Մեծ սրբութեան անուան հետ յար
Կապել, ձուլել հուր յաւիտեան։
Այժմ ասա՛, անգին զաւակս,
Դո՞ւ ես արել այն ամենը։
ՀԵՐՈՍՏՐԱՏ Ե՛ս եմ արել, անուշ մայրիկս։
ՏԻՄԱՐԻՏԱ (Գոռալով)։
Սո՛ւտ ես ասում։
ՀԵՐՈՍՏՐԱՏ Ե՛ս եմ արել,
Ես միայնակ։ Եւ դո՛ւ միայն
Կարող կլինիս ինձ հասկանալ։

(Զինուորներից մէկը արագ մօտենում և կամենում է վայր ընկնող Տիմարիտային բռնել)։

ՏԻՄԱՐԻՏԱ (Հեռացնելով Նորան)։

Թողէք ինձ դուք։ Դեռ կարող եմ
Թոյլ ոտքերիս վերայ կանգնել։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Ինչ երազում, ըղձում էի,
Այժմ արդէն կատարուած է։
Հրճուէիր, մայր իմ, Ցոյսերդ ամեն
Կատարուեցան։ «Փառք տուր ինձ, փառք,
Ինձ փառք չնորհիր, աստուածուհի»
Այդպէս էիր փոքրիկ մանկանդ
Սովորեցնում աստուածուհուն
Աղօթելիս։ Այժմ արդէն
Աստուածուհին պարգևել է
Ինձ այդ փառքը։ Թէև զօռով,
Ակամայից՝ բայց տուել է.
Իմ անունս այսուհետև
Իւր տաճարի յիշատակի
Եւ անուան հետ կապուած է միշտ,
Միշտ անբաժան։ Դու կը լսես,
Թէ ինչպէս նա՝ իմ անունս
Բերնէ-բերան կանցնի չուտով։
Դեռ ծխացող աւերակներ
Մնացորդներից նա թէև կառնի,
Կը սաւառնի աշխարհ բոլոր,
Կը տարածուի և յաւիտեան
Մարդկանց մտքում բուն կը դնի։

ԹՐԱՍՈՆ Ուրեմն այդ է դրդել քեզ, հա։
Ցիմար, անմիտ, սխալուել ես։
Անհետ կանցնի քո չար գործի
Վատ համբաւը և ծխացող
Այս մեհեանի բեկորների
Վերայ նորից մի նոր տաճար
Կկանգի չուտով։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Բայց մի համեստ,
Ինչպէս և դուք, խղճուկ մի բան
Քարից կերտած չքեղ մի տուն—
Կնոջ համար։ Բայց ոչ այն վեհ,
Հուժկու, ահեղ սրբազան վայր,
Հսկայ նախնեաց հսկայ և գործ,
Որ խղճալի ձեր սերնդին
Եւ կուրացնում ու ճնշում է։

ԹՐԱՍՈՆ Մենք կփչրենք, անհետ կանենք
Քո ըղձերդ, երազներդ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Անկարող էք։

ԹՐԱՍՈՆ Թող քո անունդ
Մարդկանց մտքից անհետ կորչի։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Չ'երազէք իսկ...

ԹՐԱՍՈՆ Օրէնք, պատուէր
Մենք, կը հանենք —ծանր պատիժ
Կստանայ նա, ով այսուհետ
Քո անունդ արտասանէ։

ՄԻԻՍ ԴԱ-
ՏԱՒՈՐՆԵՐԸ Մահուան պատիժ թող սահմանուի։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Ապարդիւն ջանք, զուր աշխատանք։
Նախ փորձեցէք չղթայ զարկել
Քամիներին, ծովի ալիքն
Ամուր կապով կաշկանդեցէք,
Սկիւթայի է՛ն ծայրերից
Մինչև սիւներն Հերկուլեսեան
Ստիպեցէք, որ ձեր օրէնքն
Ամենքն յարգեն, հնազանդուեն...
Ապա յետոյ անունս անհետ
Կորցնելու միջոց գտէք։
Ինձ սպանել դուք կարող էք,—
Բայց իմ անունս մինչ յաւիտեան
Կապրի անվերջ. ես այդ անունն
Բոց տաւերով եմ քանդակել
Որձաքարի ժայռի վերայ։
Երբ ձեր կորած, մամռով պատած
Գերեզմանն իսկ չի էլ պատմի
Թէ աշխարհումս դուք եղել էք,
Երբ ձեր հողին հաւասարուած
Քաղաքն անհետ կորած կլինի,
Այն ժամանակ անգամ ամենքն
Դեռ կը յիշեն արած գործս,
Հերոստրատիս անունը դեռ
Կը յեղյեղուի մարդկանց բերնում։

ՄԵՏՐՈԴՈՐ Բայց անէծքով ու զզուանքով։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Չէ՞ս պարծենում, մայր, քո որդովդ։

ՏԻՄԱՐԻՏԱ Որդիս չէ՞ս դու,—եթէ հայրդ

Անհիւրընկալ մռայլ Ստինքսի
Ափերից իսկ վերադառնար,
Անշուշտ նա էլ քեզ կմերժէր՝
Ճիշդ ինձ նման։ Սրտիցս ահա
Ես հանում եմ դէպի քեզ իմ
Տածած սէրս, ինչպէս անպէտք
Մի մոլեխոտ, դէն շպրտում։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Մա՜յր։

ՏԻՄԱՐԻՏԱ Եթէ դորա համար էր, որ
Կուց-կուց թափած աղի արցունք,
Անվերջ հոգսեր, պահած-պաշտած,
Անուշ զաւակս պիտի մեծնար,
Հասակ առնէր և մարդ դառնար
Ապա, կասեմ, թող անիծուէր,—
Այն օրն ու ժամ, որ քեզ ծնայ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Քեզ հետ մէկտեղ ես էլ կասեմ՝
Թող անեծուի այն օրն ու ժամ։
Ինչո՞ւ մէջս զարթեցրիր
Մեծ գործերի ծարաւ, փափագ.
Ինչո՞ւ սրտումս դու վառեցիր
Ամպերի մէջ սաւառնելու
Անշէջ ձգտում, եթէ պիտի
Ինձ չտայիր և թռչելու
Թևեր, ասա։ Օ՜, թէ դու ինձ
Պարգև չտայիր այս դառնութեամբ
Լցուած կեանքի տանջանք, ցաւերն...
Այն ժամանակ ես ստիպուած
Չէի լինիլ մօրս անէծքն
Առած գլխիս, ոտքով հրել,
Հեռու քշել այդ կեանքն ինձնից,
Ինչպէս ծանր մի բեռն ու լուծ։

ՏԻՄԱՐԻՏԱ (Դառնալով դատաւորներին)։
Ապա ուրեմն ես էլ պատժի,
Պատուհասի արժանի եմ։
Ինձ էլ տարէք կառափնատեղ։
Դուք լսեցիք, որ ես ես
Մեղսակից եմ նորա գործում,—
Երբէք ներման արժանանալ
Ես չեմ կարող։

ԹՐԱՍՈՆ (Ցուզուած)։
Խաղաղութեամբ
Տունդ դարձիր։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Ներիր, մայր իմ,
Ներիր որդուդ։

ՏԻՄԱՐԻՏԱ Մահուան ժամիս
Գուցէ փորձեմ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Ներիր, մա՜յր իմ։

ՏԻՄԱՐԻՏԱ Իմ արի՜ւնս, անո՜ւշ զաւակս...

(Մի քայլ է անում դէպի նա։ Հերոստրատն ընկնում է նորա ոտները։ Մայրը ձեռքը դնում է նորա գլխին)։

ԹՐԱՍՈՆ Տարէք սորան։

ՏԻՄԱՐԻՏԱ Թող ոչ մէկը
Ինձ չուղեկցէ։ Այսուհետև
Իմ ճանապարհս ես մեն-մենակ
Խաւարի մէջ պիտի գտնեմ։

(Ցամրաքայլ ուղղւում է դէպի դուռը)։

ՏԵՍԱՐԱՆ IV

ԱՌԱՋԻՆՆԵՐԸ (առանց Տիմարիտայի)։

ԹՐԱՍՈՆ Այժմ արդէն, երբ մեր առաջ
Գործած ոճրիդ բուն չարժառիթն
Պարզ յայտնի է, մեզ մնում է
Միայն ցաւել ազնիւ ձիրքի
Եւ ոյժերի այսչափ դառն
Անկման վերայ։ Ինքդ արդէն
Քո իսկ բերնով խիստ անողոք
Դատավճիռ գլխիդ վերայ
Պարզ կարդացիր։ Մենք այս դէպքում
Միայն նորա գործադրող
Ոյժն ենք կազմում։ Այժմ դառնանք
Վճռահատին։

(Ջինուորի տուած նշանի վրայ մտնում են երկու սարուկ։ Մէկը բերում է մեծաղեայ մի քուէտուփ (*urne*), որ դնում է Թրասոնի առաջ. միւսը բաժանում է դատաւորներին մի-մի սև և սպիտակ քուէ։ Յետոյ սարուկները դուրս են գնում։ Թրասոնն ելնում է տեղից)։

Տէր դատաւորք,
Ձեր ձայները։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

(Առաջինն ինքն է ձգում իւր քուէն տուփի մէջ։ Միւսները հետևում են նորան. յետոյ կրկին նստում են իրենց տեղերը։ Թրասոնը ղգուշութեամբ դատարկում է տուփը, համրում է քուէները և հանդիսաւոր կերպով յայտարարում է)։

Նա միաձայն
Մահուան պատժի է ենթարկւում։

(Դառնալով Հերոստրատին, որ ճացել էր կանգնած բոլորովին անշարժ)։

Գուցէ ունիս մի ցանկութիւն
Կամ ասելիք։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Մօրս միայն
Վրէժխնդիր չլինէք երբէք
Իմ արածիս, գործիս համար։

ԹՐԱՍՈՆ Այդ խնդիրդ կը կատարուի։
Ամենքս մէկ տեղ երաշխաւոր
Կլինենք դորան։—Այժմ՝ մահուան
Պատրաստուիր դու։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Ես պատրաստ եմ։

(Թրասոնը, Մետրոդորը և միւս դատաւորները ելնում են ձախ կողմից. զինուորները հետևում են նոցա. լսւում է, ինչպէս դրսից ամրացնում են դռան սողնակը)։

ՏԵՍԱՐԱՆ V

ՀԵՐՈՍՏՐԱՏ. (Յետոյ) ԿԼԻՏԻԱ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Մենակ)։
Օ՜, աստուածներ, ինչպէս յոգնել,
Դադրել եմ ես։ Քունն յեղյեղուկ,
Փոփոխամիտ բարեկամ է։
Մխիթարում, սփոփում է,
Բայց և նորից մեզ պատրանքի,
Հիասթափման մէջ է ձգում.
Անուշ օրօր է մրմնջում,
Որ մեզ նորից երկիւղ ազդէ։
Բաղդի ժպտուն ժամ-օրերին,
Պատրաստակամ, հաճկատար է,
Վշտի ժամին ագահ, ժլատ։
Այդ պատճառով քեզ իմ ողջոյնս,
Քեզ՝ յուսալից իւր երկուորեակ։

Բաւական է, եթէ մէկին
Մի օր գոնէ քո գրկի մէջ
Օրօր կարդաս, նա այլ ևս
Էլ յաւիտեան աչք չի բանալ։

(Ամբ դռան յետևից թեթև փսփսոց է լսւում։ Նա ուշադրութեամբ ականջ է դնում)։

Ոտքդ արդէն չէմքիս վերայ
Դիրեցիր, հա։

(Երնում է տեղից)։

Ողջունում եմ։

(Դուռը բացւում և Կլիտիան շտապով ներս է մտնում)։

Դու՞ ես, Կլիտիա։ Մահապարտի
Մօտ ինչ ունիս։ Ինչու՞ եկար։

ԿԼԻՏԻԱ Որ ազատեմ քեզ այստեղից։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Ա՞յժմ միայն կամեցա՞ր այդ...

ԿԼԻՏԻԱ Դու չպէտք է կեանքից զրկուես։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Հիմա արդէն էլ շատ ուշ է։

ԿԼԻՏԻԱ Ակամայից քեզ վիշտ ու ցաւ
Պատճառեցի։ չէի կարող,
Այժ չունէի զարհուրելի
Դէպքերի դէմ կռիւ մղել։
Բայց և այնպէս հոգուս վրայ
Ծանր քարի պէս ճնշում են
Այդ բոլորը։ Եւ ես այժմ
Կամենում եմ մահուան ճանկից
Քեզ ազատել, - և կարող եմ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Զուր աշխատանք։

ԿԼԻՏԻԱ Գեգեսիի
Ստրուկ ծառան, որ մի չան չափ
Հաւատարիմ է դէպի ինձ,
Դռան մօտ քեզ սպասում է։
Նորան գլխից ես հանել եմ՝
Խոստանալով ազատութիւն
Շնորհել իրեն։ Մեր փախուստի
Ցաջողութեան պիտի օգնէ
Եւ կուղեկցէ մինչև վերջը։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Բայց ո՞ւր։

ԿԼԻՏԻԱ Ներքև՝ սանդուղտներով
Մենք վար կիջնենք. թեթև, սահուն
Մակոյկը մեզ, որ այժմ պատին

Շղթայած է, իւր մէջ կառնէ,
Եւ նորանով նաւ կը հասնենք
Ակնթարթում ու անվտանգ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Եւ այդ նաւը...

ԿԼԻՏԻԱ Հէնց այժմ իսկ
Խարիսխ կառնէ, ծով կը դիմէ։
Մի դանդաղիր։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Ուրեմն ԱԹԷՆՔ պիտի երթայ։

ԿԼԻՏԻԱ Դէ՛, չուտ, գնանք։

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Զարախնդութեամբ)։
Վա՜ղ խորհուրդ չէ։
Լաւ ես խորհել։ Ասատուածային
Պրասկսիտելն իւր սիրուհուն
Փախցնում է. և որպէս զի
Այդ ժամանակ հարսանիքի
Ուրախ հանդէսն արիւնաներկ
Զոհի ստուերն՝ ուրուականը
Չը մռայլէ, նա առնում է
Ի՞նձ էլ իւր հետ։

ԿԼԻՏԻԱ Քեզ կազատենք...

ՀԵՐՈՍՏՐԱՏ Ի՞նչ ողորմած, գթասիրտ է,—
Քեզ թոյլ տուէ՞ց այդ անելու։

ԿԼԻՏԻԱ Իմ դիտումս ու ծրագիրս
Նորան դեռ ես յայտնած էլ չեմ։
Բայց ծովափը, նորա հանդէպ
Համբաւատար եմ ուղարկել
Եւ քաջ գիտեմ, որ իմ միտքս
Կը հաւանէ, խրախուսէ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Բայց բանն այն է, ես չեմ կարող
Համաձայնել առաջարկիդ։

ԿԼԻՏԻԱ Ազատուելու միակ ելքն է...
Մէկ էլ տեսար յանկարծակի
Ժողովուրդը ապստամբեաւ...
Ուրիշ հնարք, միջոց չկայ։
Նաւահանգստից մեկնող նաւը
Մենակ նա է...

ՀԵՐՈՍՏՐԱՏ Եւ դու կարող
Պիտի լինես ազատութիւն

Կոչել այդ, հա՞։ Ես՝ անիծուած,
Անարգուածս, հայրենիքից
Վռնտուածս,—պիտի ընկնեմ
Երջանկութեամբ արբած, ուրախ
Մի զոյգի մէջ։

ԿԼԻՏԻԱ Կեանքի, մահու
Խնդիր է սա։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Այդպիսի կեանքն
Ամօթալի մահից անգամ
Ծանր կլինէր։—Իսկ ես այստեղ
Ազատութեան եմ սպասում։

ԿԼԻՏԻԱ Բայց ժամանակ չունինք այլ ես...
Օ՜, լսիր ինձ։ Իմացիր, որ
Ես էլ նորան հետևում եմ
Ո՛չ հաւասար՝ իրեն ընկեր,—
Այլ թէ միայն իբրև ծառայ,
Իբրև խոնարհ մի աղախին.
Համեստ սիրով պիտի պատեմ
Նորա չորս դին, առանց ոչինչ
Պահանջ, խնդիր ունենալու։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Եւ ասողը մի կին է, հա՞։
Գնա, գնա կիսատուածուդ
Յետևիցը. ծառայ եղիր
Իբրև ազնիւ, հաւատարիմ
Սարկուհի կամ աղախին։
Յաջողութի՜ւն եմ ցանկանում։
Գնաս բարև։—Իսկ ինձ համար
Ես ընտրել եմ...

ԿԼԻՏԻԱ Կորուստ և մահ։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Ինչպէս և դու։

ԿԼԻՏԻԱ Էլ ոյժ չունեմ.
Ժամանակը անցնում է... չուտ...

ՀԵՐՈՍՏՐԱՏ Գնա, չտապիր։

ԿԼԻՏԻԱ Վերջին անգամ...

ՖԼՕՆԻԴԱ (Դրսից)
Թողէք ներս դամ։

ԿԼԻՏԻԱ (Շտապով)։
Ֆլօնիդան։

Նորա կողմից է ուղարկուած։
Որպէս բանբեր է նա գալիս
Եւ մեր գործի, մտադրութեան
Գաղտնիքներին քաջ ծանօթ է։
(Բաց է անում աջակողմեան դուռը և կանչում)։
—Եկ, ներս արի։
(Մտնում է Ֆէօնիդան մի կողով վարդ ձեռքին)։

ՏԵՍԱՐԱՆ VI

ԱՌԱՋԻՆՆԵՐԸ և ՖԷՕՆԻԴԱ։

ԿԼԻՏԻԱ (Դիմաւորելով Նորան)։
Տեսա՞ր Նորան։
Եւ ասացիր ինչ որ պէտք էր։
ՖԷՕՆԻԴԱ Հա՛, տիրուհիս։
ԿԼԻՏԻԱ Անչուշտ, նա ինձ
Շտապցնում է։ Այնպէս է, չէ՞։
ՖԷՕՆԻԴԱ (Շփոթուած ու վարանելով)։
Ո՛չ, տիրուհի. ինձ ուղարկողն
Ուրիշ համբաւ է ուղարկել։
ԿԼԻՏԻԱ Դէ՛, չուտ արա, ասա չուտով։
ՖԷՕՆԻԴԱ (Կմկմալով)։
Ես...
(Նաւահանգստի կողմից ձայներ, աղմուկ է լսւում)։
ԿԼԻՏԻԱ Ինչ ձայներ են, ի՞նչ աղմուկ է։
ՖԷՕՆԻԴԱ Ժողովուրդը Նորան «կեցցէ,
Գնաս բարև» է ձայն տալիս։
Հրաժեշտի աղաղակն է...
ԿԼԻՏԻԱ Հրաժեշտ են տալիս Նորան...
Աղաղակ է... հապա նաւը...
ՖԷՕՆԻԴԱ Նաւը մեկնեց։
ԿԼԻՏԻԱ Իսկ նա... ինքը...
Պրակսիտելն... ա՜խ, ուզում եմ...
Սիրտս Նորան է ցանկանում։
ՖԷՕՆԻԴԱ Անկարելի բան ես ուզում։
Ազատ, արձակ ծովի միջով
Արդէն Նորա նաւն է սուրում։
ԿԼԻՏԻԱ (Վազում է դէպի բեմի խորքը և նայում է հեռուն)։
Այնտեղ... հեռւում... առագաստներ...

(Բարձրաձայն աղաղակով)։
Ա՜խ, Պրակսիտե՜լ...
(Վայր է ընկնում, երբև շանթահար)։
ՀԵՐՈՍՏՐԱՏ (Ինքն իրեն)։
Ծանր է, գիտեմ։
ՖԷՕՆԻԴԱ (Կողովն շտապով դնում է Նստարանի վրայ և վազում դէպի Կլիտիան)։
Ինչո՞ւ այսպէս դառն ցաւեր
Պիտ բերէի ես քեզ համար։
Ա՜խ, չգիտես թէ ինչպէս ես
Կը ցանկայի ուրախ, բարի
Համբաւներով առաջդ ելնել։
ԿԼԻՏԻԱ (Դանդաղութեամբ տեղից ելնելով)։
Մենա՜կ գնաց,—և ինձ թողեց։
Այդպէս, կարծեմ, ասացիր, չէ՞։
Նաւահանգստում անդամալոյծ
Խեղճ աղքատը արժանացաւ
Նորա ժպտին, իսկ ես՝ թշուառս,
Որին երէկ դեռ իւր կրծքին
Ամուր սղմած, փայփայում էր,
Ինձ՝ հրաժեշտի և ոչ մի խօսք,
Ո՛չ մի համբոյր գէթ վերջին գամ...
Այժ ունեցաւ ինձնից զատուել
Եւ բաժանուել այդպէս, ահա...
ՖԷՕՆԻԴԱ Բայց և ինքն էլ ուրախ դէմքով
Չհեռացաւ. դողդոջ ձայնով,
Տամուկ դէմքով, թաց աչքերով
Շշնչում էր,—«Մատաղ բանբեր,
Երբ որ նաւս իւր կայանից
Ծով կը դիմէ և ինձ աչքից
Բոլորովին կը կորցնես,
Վազիր չուտով Նորա մօտ դու,
Ասա Նորան, թէ երբ միայն
Երջանկութիւնն ու զգլխիչ
Քաղցր մոռանքն տղամարդուն
Կարենային կապել, գերել,
Երբէք սիրտս ես Նորանից
Չէի զատիլ։ Բայց առաւել
Մեծ պարտիք է ինձ կանչողը,

Նոյն իսկ կամքիս էլ հակառակ։
Կասես նորան այս բոլորը
Եւ կողովով վառ վարդերը
Լռիկ, անխօս ողջունիս հետ
Իւր ոտքերի տակ կը դնես։
Թող այդ անխօս վկաները
Նորա ներումն հայցեն, առնեն,
Ինձ ուղարկեն ապատ հովով,—
Թող գիտենայ՝ չթունքներս
Ձերմ օրհնութիւն են մրմնջում»։

ԿԼԻՏԻԱ Կորիր, աչքիցս, քո վարդերովդ։
Հեռո՛ւ, հեռու տար ինձանից։
Նոցա չունչը—թոյն է, վարամ։
Տրորիր բոլորն, ոտքի տակ տուր
Մէկիկ-մէկիկ։ Իսկ երբ նոքա
Հոգոց հանեն և կամ հծծեն,
Նոցա ողջոյն, հրաժեշտ կտաս
Նորա կողմից, որ ինձ անխիղճ,
Տմարդօրէն իւր ոտքերի
Տակ տրորեց։ Տեսաւ աչքով
Ինչպէս ուրախ ծաղկում էի,
Անխիղճ ձեռքով նա ինձ պոկեց—
Եւ չպրտեց։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Նա ստուած է։
Ահա նորա ողջ պարգևը
Սիրուդ համար։

ԿԼԻՏԻԱ Կորիր աչքիցս
Քո վարդերովդ, դէ՛ն կորցրու...

ՖԷՕՆԻԴԱ Ուրեմն ես պէտք է սոցա...

ԿԼԻՏԻԱ Ո՛չ անուշիկս, էլ ձեռք չտաս
Դու նոցանից և ոչ մէկին։
Առանց այն էլ շուտով նոքա
Կը թառամեն ու կը թոչնեն։
Ծովափ տար դու այդ բոլորը,
Ալիքների վերայ չաղ տուր,
Մէկ-մէկ հեռո՛ւ, հեռու ձգիր
Դէպի այնտեղ, որտեղ, դեռ ես
Նորա նաւի փայլուն հետքը
Ցոյց է տալիս առ յաւիտեան

Կորցրած բաղտիս արահետը։

ՖԷՕՆԻԴԱ (Առնում է վարդերով լի կողովը)։
Կկատարեմ, ինչ տիրուհիս
Պատուիրեց ինձ։ Թէ որ կարող
Լինէի ես դեռ աւելին
Էլ կատարե՛լ...
(Դուրս է գնում աջ կողմից)։

ՏԵՍԱՐԱՆ VII

ՀԵՐՈՍՏՐԱՏ, ԿԼԻՏԻԱ։

ԿԼԻՏԻԱ Թառամեցան, կորան վարդերն.
Եւ սրբազան անտառի մէջ
Ծաղիկները թոթափեցին։
Դու էլ մնաս բարև, գարուն։
Բայց և այնպէս արդարացի,
Իրաւ էր նա։—Ես ի՞նչ էի
Նորա համար։ Միայն պատկեր
Արտայայտիչ՝ հազարաւոր
Դէմքերից մինն։ Ինչպէս եկաւ,
Ճիշդ այնպէս էլ անցաւ-գնաց,
Լոկ մի բոպէ աշխարհ բոլոր
Գեղեցկութեամբ ճոխացնելու,
Ինձ էլ հետը աւերելով։

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Զարմանքութեամբ)։
Էլ ի՞նչ կուզես դու նորանից։
Միթէ նա չէ՞ր, որ քեզ տուեց
Այն բոլորը, ինչ որ հոգով,
Ողջ էութեամբ, այնպէս կրքոտ
Ուզում էիր,—մշտափթիթ
Մատաղ մնալ։ Մեր երկուսիս
Ցանկութիւնն էլ կատարուած է։
Դու անթառամ գեղեցկութեամբ
Միշտ կը փթթես. աստուածային
Ցարդանքներով դեռ նոր կերտած
Ցար և նման երկուորեակդ
Շուք և փայլով տաճար կմտնէ։
Իսկ իմ անունս ժամանակի
Հզօր յորձանքն դարեր անվերջ

Պիտ գլորէ ու դէմ տանէ
Գալոց բոլոր սերունդներին։
Կեանքն ինձ համար մի տանջանք էր.
Սակայն այժմ անմահութեան
Փայլ կտանայ։

ԿԼԻՏԻԱ (Հոգեվարքի մեջ ականջ է դնում)։

Սա՜ս... Ձայն մի հանիր։
Լռիր մի քիչ։ Դու չես լսում։
Իմ սիրելուս ձայնն է հնչում,
Ինձ է կանչում։ Ես գիտէի,
Նա չէր կարող զատուել ինձնից։
Եւ ջրերի, ծովի անհուն
Տարածքն անգամ չեն արգելում
Նորան բարձր, բարձր ձայնով
Ինձ կանչելու,—Ե՛կ յետեւիցս։—
Ա՜խ, գալիս եմ, Պրակսիտել։
Ահա եկայ...

(Նաւամատոյցի պատից իրեն ծովն է ձգում)։

ՀԵՐՈՍՏՐԱՏ (Շտապով դիմելով դեպի ցանկապատը)։

Կլիտիա, Կլիտիա.

(Ձախ կողմի դռնից ելնում են զինուորները և դանդաղ մօտենում նորան. դիմում է նոցա)։

Ինձ դէպի մա՜հ տարէք չուտով,
Մահուան վերայ ծիծաղում եմ
Անմահ եմ ես։ Անմա՜հ, անմա՜հ։

(ՎԱՐԱԳՈՅՐՆ ԻՋՆՈՒՄ Է)

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Г.С.Р.А. Публичная Библиотека
7/XI--1922
имени А. Мясникяна
Ս. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՎԵՐՋ

«ԼՈՒՄԱՑ» ի Խմբագրատանը վաճառում են

ԳԻՒՏ Ա. ՔԱՀ. ԱՂԱՆԵԱՆՑԻ

Ա. աշխատութիւնները.

1 Աղօթատետր Ե. տպ. 1903 . . . . — 10
2 Կրօնի դասագիրք ա. տ. 1889 (սպառուած) . . . — 15
3 « « բ տ. գ. տպ. 1891 . . . — 25
4 « « գ տ. գ. տպ. . . . — 25
5 Տօմար և տօնացոյց Հայաստ. եկ. բ. տպ. 1894 . . — 50
6 Կարնոյ գաղթը. պատմական տեսութիւն. 1891 . . — 10
7 Դիւան Հայոց պատմութեան. գիրք Ա.—Բ. 1780—1834 Սահակ-Մեսրոպեան մրցանակին արժանացած 1893 . . 2 —
8 Դիւան Հայոց պատմ. գիրք Գ. Սիմէօն կաթողիկոսի յիշատակարանը, կենսագրութեամբ, յաւելուածներով ու ծանօթութիւններով, Սահակ-Մեսրոպեան մրցանակին արժանացած. 1894 . 7 —
9 Դիւան Հայոց պատմ. գիրք Դ. Ղուկաս կաթող. 1780—1800 I (ընտանեկար պատկերով և վիմատիպ կոնդակով) 1899 . 4 —
10 Դիւան Հայոց պատմ. գիրք Ե. Դանիէլ կաթ. 1800—1808. (մի վիմատիպ կոնդակով) 1902. . . . . 4 —
11 Կարգ աստուածպաշտութեան Հայաստանեայց ս. եկեղեցւոյ 35
նկարով, Դ. տպ. 1902 . . . . . — 50
12 Հընկէց-Նորից, հնախօս. ուղեւոր. պրակ Ա. 1900 . — 30
13 Պատի օրացոյց 1902 ամի. ժամանակագր. ԺԴ տարի . — 50
14 Նամակագիրք. 1902. . . . . — 50
15 Ծոցի օրացոյց 1902 ամի և յաւելուած. — Ազողջապահական խոհարարութիւն (սպառուած.) . . . — 15

Բ. թարգմանութիւնները

16 Հաւատարմութիւնը ամեն արգելքների յաղթում է Ֆ. Հոֆման նի 1877 . . . . . — 40
17 Խաւարից դէպի լոյս Ֆ. Հոֆմ. 1878. (սպառ.) . . — 40
18 Դօն Քիշօտ լամանչեցի, Մ. Սէրվ. 1878 (սպառ.) . — 70
19 Գէորգ Ռօլլէստոն, 1879 (սպառուած) . . — 60
20 Երբորդ ոսկի, առակ. Լակիդէի բ. տպ. 1893 . . — 10
21 Ռոբինզոն (հրատ. Թիֆլ. տպագր. ընկերութ.) (սպառ.) . — 60
22 Զեստերտոնի ժառանգը, պատկերազարդ, 1882. (սպառ.) . — 1
23 Ակտեա. տ. Սիսոեվայի. 1885 (սպառուած) . . — 5
24 Եան Էրնստ Սմելեար. Ն. Եանչուկի, 1885 (սպ.) . . — 20
25 Արծուի մոտածմունքը, պրոֆ. Մ. Բոգդան. 1892. . — 5

26 Գիւղի սուրբը. Սվեատոպոլկ Զէխի, 1892 . . . — 10
27 Կեանքի դպրոցը, Դիկկէնսի, 1892 . . . 1 —
28 Դեպի Ամէնը, Հ. Սենկեվիչի բ. տպ. 1901. . . — 15
29 Մի կտոր հաց, Պոտապէնկոյի բ. տպ. 1901 . . — 10
30 Որսորդ, Օ. Շրայների . . . . — 10
31 Մատուռի աւերակներում, Օ. Շրայների . . . — 10
32 Կարա . . . . . — 5
33 Անտառապետ Ֆրեդերիկ. Էրկման Շատրիանի. 1903 . — 40
34 Տնային բժշկարան, պրակ Ա. (Թարգմ. ընկերութեամբ Խ. Ցարո.-ի
և հրատ. բժշկ. Գ. Բաբեանի . . . . 1 —
35 „ „ պրակ Բ. Թարգմ. և հրատ. նոյն . . 1 60

Գ. Հրատարակութիւնները

36 Ի. Ցարուբիւնեան, Հայոց գիրը 1893 . . . 1 50
37 Իշխ. Կ. Բեհբուդեան, Ծուխ, 1893 . . . — 15
38 Ռանդաբէ, Էմաէ, վէպ թարգմ. Ց. Լալայեանի . . — 25
39 Ալբեր Այնօ, Քուրդի լեառն, 1893 . . . — 25
40 Ճաղարբէգեան Ց, Հայոց լեզու ա. տ. 1894 . . . — 30
41 Խրիմեան Հայրիկ, Ժամանակ 1895 . . . — 15
42 Սպիրի, Այծարած Մօնի Թ. Ի. Ցարուբիւն. 1885 . . — 15
43 Բակ. (Բարգէն վ.) Կիլիկիա 1896. . . . — 15
44 Պեսալոցցի, Լինհարդ և Գերտրուդ. 1896 . . . 1 50
45 Մելքիսեդեկ արքայ. Մուրատեան, Պետրոս Շանշեան պատկերով,
1897 . . . . . — 50
46 Թ. Ա. Խոհարարուհի, բ. տպ. Ճոխացրած 1904 . . — 50
47 Լումայ, գրական հանդէս 1896 Ա. գիրք . . 2 —
48 Լումայ » » 1896 բ. գիրք . . 2 —
49 Լումայ » » 1897 ա. գիրք . . 2 —
50 Լումայ » » 1897 բ. գիրք . . 2 —
51 Լումայ » » 1898 ա. գիրք . . 2 —
52 Լումայ » » 1898 բ. գիրք . . 2 —
53 Լումայ » » 1899 ա. գիրք . . 2 —
54 Լումայ » » 1899 բ. գիրք . . 2 —
55 Լումայ » » 1900 ա. գիրք . . 2 —
56 Լումայ » „ 1900 բ. գիրք . . 2 —
57 Լումայ » » 1901 ա. գիրք . . 2 —
58 Լումայ » » 1901 բ. գիրք . . 2 —
59 Լումայ երկամեայ գրական հանդէս 1902— տարեկան . 6 —
60 Լումայ » » » 1903 տարեկան . 6 —
61 Ց. Պարոնեան, Ծիծաղ, պատկերով, 1899 . . . 1 25
62 » Արևել. առաքնաբոյժ կատակ. 1901 . — 50
63 „ քաղաքավար. ՝Վեսները, 1901 . . — 75
64 Ի. Ցարուբիւնեան, Ստեփանոս Պալասանեան. . . — 25
65 Ն. Տէր-Կարապետեան, Խաչատուր Աբովեան. սպառ. . — 60
66 Ի. Ցարուբիւնեան, Աշակերտի յուշատետրը . . . — 30
67 „ Զգացմունքների աշխարհ. . . — 30
68 Ցարուբիւն Թումանեան, Մելիք Իսոսէփ . . . — 20
69 Մ. Եօկայի, Ուրացողը, թարգ. Խ. Ցարուբ. . . — 20
70 1901 Ս. Էջմիածնի ԺԶ դարադարձը . . . — 25
71 Եր. Շահազիզ, Մկրտիչ Էմին . . . . — 60
72 Կարալէնկо, Կոյր երաժիշտը թարգմ. Մուշէ վրդ. . . — 60
73 Զորրորդ դարու հայ եկեղեցին. . . . . — 20
74 Եր. Շահազիզ, Նոր-Նախիջևանի ս. խաչ վանքը . . — 40
75 Ի. Ցարուբիւնեան, Իմ օրագիրը. . . . — 20
76 Մեծ Ներսէս . . . . . — 25
77 Գ. Խաչկոնց, Հայոց կրօն. բանաստեղծութիւնը . . — 60
78 Ի. Ցարուբիւնեան, Կին վիպագիր, Ե. Սպիրի . . — 10
79 Օր. Ն. Աղանեանց, (թարգմ.) Սև հացեր. բ. տ. . . — 5
80 Կարալէնկо. Դատաստանի օրը· թարգմ. Մուշէ վարդապետ . — 40
81 Կ. Կոստանեանց. Շարժի տարեգրութիւնը Հայոց ՃԺ. 1902 — 20
82 Գարեգին վ. Յովսեփեան Մանրանկարչութեան արուեստը Հայոց
ՃԺ 1902 . . . . . .
83 Ներսէս Մեծի յաջորդներ 1902 . . . . — 25
84 Մ. Գոյրկի. Զէլկաշ. թարգմ. Մուշէ վրդ. . . — 25
85 Քուչակ Նահապետի երգերը. Յով. Թադէոսեան . . — 15
86 Սահակ Պարթև. . . . . — 25
87 Ապուշը, ժօրժ Լոպարրի. թարգմ. օր. Նուարդ Աղանեանց. բ. տպ. — 5
88 Վարժապետը. թարգմ. Լ. Մ.-Ա. . . . . — 5
89 Հազարան Բլբուլ. Ց. Թումանեանց . . . . — 30
90 Պատմական պատկերներ. Եր. Շահազիզի . . . — 60
91 Ժ. Ժ. Ռուսսо. Էմիլ. թարգմ. Խ. Ցարուբիւնեանի . . —
92 Խորէն արք. Գալֆայեան և Նալբ. Աղցմէրը. Եր. Շահազիզի. — 50
93 Հերոստրատ. Լուդվիգ Գուլդայի. թարգմ. Տ. Վ. . . — 50
94 Կանոնք ժողովոց. Մ. Ա. . . . . — 50
95 Ուղեղի նորոգումը. Ֆ. Դիկմէլի թարգմ. Օր. Նուարդ Աղանեան. — 5
96 Գթութիւն « « « . . — 5

Մամուլի տակ են

97 Գիւան Հայոց պատմութեան. Գիրք Զ.
98 « « « գիրք Է.
99 Համով-Հոտով Գ. Ե. Սրուանձտեանի
100 Եղիշէի պատմութեան բնագիրը.
101 Հայ Գրչագիրներ.
102 Հայրեր և զաւակներ. Ի. Տուրգենևի
103 Ցեղողութիւններ. Քաջերունու
104 Կանոնք ժողովոց Մ. Բ.
105 Ալեմգիր. վէպ Վ. Փափազեանի
106 Սոկ հոգեբանութիւնը. Գ· Ենգ.

Հայաստանի Ազգային գրադարան
NL0432461